

Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

ԳՐԱՐԱՐԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (V—XI դդ.)

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Դասական գրաբարն ունի վեց հոլով (ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական), որոնցով արտահայտվում են առարկայական զանազան հարաբերություններ: Բայց այդ հարաբերությունները չափազանց շատ են ու բազմազան: Չնայած մի հոլովը ունի բազմաթիվ կիրառություններ, բայց և այնպես բոլոր հարաբերությունները միայն հոլովների միջոցով հնարավոր չէ արտահայտել: Հոլովների այդ պակասը մասամբ լրացնում են նախդիրներն ու նախադրությունները: Վերջիններս արտահայտում են նաև այնպիսի հարաբերություններ (տարածական, ժամանակային, բաղդատական, բացառման և այլն), որոնք հոլովները չեն կարող արտահայտել: Բացի դրանից, նախդիրներն ու նախադրություններն արտահայտում են ավելի որոշակի հարաբերություններ:

Հիշյալ բառերը հին հայերենում ունեցել են շատ լայն կիրառություն: Ըստ այդմ հայ քերականագիտական մտքի ձևավորման վաղ շրջանից դրանք գիտակցվել են իբրև առանձին խոսքի մաս՝ «նախդիր» կամ «նախադրություն» անվամբ: Հետագայում նույն խոսքիմասային շրջանակներում առանձնացվել են նախադրությունները որպես հոլովառու սպասարկու բառեր:

Գրաբարի հոլովառու բառերը կամ նախադրությունները քննության հատուկ առարկա չեն դարձել: Այդ պատճառով քնն ուսումնասիրվել (կամ գրեթե չեն ուսումնասիրվել) նախադրությունների՝

ա) շարահյուսական հատկանիշները (ցույց է տրվել միայն յուրաքանչյուրի արտահայտած հիմնական նշանակությունը)։

բ) դերը նախադասության անդամների արտահայտման գործում։

գ) տեսակներն ըստ առաջացման աստիճանի։

դ) տեսակներն ըստ կազմության։

ե) առնչությունը մյուս խոսքի մասերի (նյութական և ձևական) հետ.

զ) տեսակներն ըստ իմաստի (այս ուղղությամբ կատարվել է բավական աշխատանք, բայց տրված դասակարգումները ճշտման ու լրացման կարիք ունեն)։

Մենք փորձել ենք ըստ հնարավորին սահմանադատել նախադրությունների և որպես նախադրություն գործածվող բառերի այն իմաստներն ու իմաստային նրբերանգները, որոնք դրսևորվել են V—XI դարերի գրաբար մատենագրության մեջ։

Մեր քերականների կողմից համեմատաբար ավելի մանրամասն է քննվել նախադրությունների հոլովառության հարցը, բայց դասագրքերի շրջանակներում. քերականները չեն անդրադարձել նախադրության դերում հանդես եկող բոլոր բառերին։

Նկատի ունենալով վերոհիշյալ և նման այլ հարցերի հետազոտման կարևորությունը՝ ձեռնամուխ եղանք նշյալ սպասարկու բառերի ամբողջական-մենագրական ուսումնասիրմանը գրաբարի լեզվական տարբեր մակարդակներում։ Այս հարցերին է նվիրված սույն աշխատությունը։

ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ քերականության պատմությունն սկզբնավորվում է Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» աշխատության թարգմանությամբ և մեկնությամբ, Թրակացին ապրել է մ. թ. ա. II դարում (180—145 թթ.)։ Նրա աշխատությունը թարգմանվել է հայերեն հունաբան դպրոցի կողմից։ Այդ դպրոցը, ըստ հայ հետազոտողների կարծիքի, ստեղծվել է V դարի 3-րդ քառորդին, 450—475 թվականներին¹։ Թարգմանությունը կատարել է փիլիսոփա Դավիթ Անհաղթը, որից մնացել է նաև «Մեկնութիւն քերականին» աշխատությունը։ Խնչպես իրավացիորեն նշում է ակադ. Գ. Զահուկյանը, դա ոչ թե օոսկ թարգմանություն է, այլ փոխադրություն², որովհետև հայերենի երևույթները հարմարեցված են հունարենի առանձնահատկություններին։ Թրակացին հունարենի համար ընդունում է 8 խոսքի մաս, դրանք են՝ անուն, բայ, ընդունելություն, հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ։ Քերականության հայ թարգմանիչը այդ նույն խոսքի մասերն ընդունում է նաև հայերենի

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1944, էջ 101—102, Կ. Զաքուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 51։

2 Գ. Զաքուկյան, նույն տեղում, էջ 61։

Համար, Ստորև մենք կանդ կառնենք միայն նախադրություն խոսքի մասի վրա:

Դ. Թրակացու մոտ նախադրություն հասկացությունը շատ ընդհանուր է: Նրա տեսակետով նախադրություն են բոլոր այն բառերն ու մասնիկները, որոնք ունեն նախադաս գործածություն: Ըստ այդմ նա տվյալ խոսքի մասի մեջ է մտցնում ոչ միայն նախադրությունները, արդի ըմբռնմամբ, այլև նախածանցները, նույնիսկ՝ անվան նախադաս լրացումները: Թրակացու մոտ կարդում ենք. «Նախադրութիւն է բառ նախադասեալ յամենայն մասունս բանի ըն բարդութեան եւ բաղդասութեան»³: Այս սահմանումը ճիշտ է հունարենի համար, որովհետև այնտեղ նախադրությունը գործածվում է նաև իբրև նախածանց: Հայերենի համար այն ճիշտ է մասամբ, քանի որ հայերենում նախդիրները և մի քանի նախադրություններ⁴ միայն ունեն նաև ածանցական կիրառություն, այսպես՝ առ իսլառարկութիւն, ընդ ձեզ ընդարձակ, ըստ քեզ ըստանձնել (կամ՝ ստանձնել), ի փաղափ, յամի յանցանք, կամ՝ բաց ի քեզ ընդարձակ, յետ ժամանակաց յետամնաց և այլն:

Թրակացին հունարենի 18 նախադրությունները բաժանում է երկու տեսակի՝ պարզ (6) և բարդ (12): Այս 18 նախադրության դիմաց քերականության հայ թարգմանիչը հայերենի համար դնում է 50 նախադրություն և երեք հտադրություն: Նախադրություններն են՝ ներ, արտ, ատր, ապ, բաց, նը, ինքն, բար, բաղ, շար, շաղ, մուշտ, գով, ջոկ, պատ, նախ, կանուխ, վաղ, առ, արդ, վեր, ըստ, ընդ, ենթ, ստոր, խուն, ունը, զկնի, յետ, տար, մատ, յար, քող, գաւ, թափ, պար, կար, վար, բակ, թեռ, հիռ, հակ, դեր, փոխ, մակ, ֆան, գեր, աւել, վասն, յաղագս: Իսկ հտադրություններն են՝ սակս, կից, որդ⁵:

Հիշյալ ցանկում մենք հանդիպում ենք նախածանցի, վերջածանցի, նախադրության, հտադրության, մակբայի, ածականի: Թարգմանիչը, քանի որ հիմք է ընդունում տեղադրման դիրքը, առանձնացնում է միայն հտադրությունները: Նա գրում է. «Եւ ստորադասք են ի սոցանէ երեք. սակս, կից, որդ»⁶:

Դրանցից մի քանիսը, ինչպես՝ առ, ընդ, ըստ, գործածվում են որպես նախդիր (նախդիր են), մի մասը, ինչպես՝ բաց («հունարան հայերենում») ավելի հաճախ հանդիպում է ածանցական գործածությամբ, գեր, զկնի, յետ, ֆան, վասն, յաղագս, սակս, կիրառվում է իբրև նա-

³ Ն. Աղունց, Դիոնիսոս Թրակացին և նրա հայ մեկնիչները, Պետրոգրադ, 1915, էջ 30:

⁴ Մեկնիչները նախդիր և նախադրություն անվանումների միջև տարբերություն չեն դնում:

⁵ Ն. Աղունց, Եղվ. աշխ., էջ 30:

⁶ Նույն տեղում:

խաղրութիւն: Դրանց շարքում կան այնպիսիները, որոնք արհեստական կերպով ստեղծված նախամասնիկներ են և ածանցական ոչ մի դեր էլ չեն խաղացել, ինչպես, օրինակ ատր, մուշտ, քեռ, գաւ, ճիռ, խուն, ունջ: Մի քանիսը մակբայներ են, ինչպես՝ նախ, կանուխ, արդ, վեր և այլն:

Հունաբան հեղինակների գործերում որպես նախածանց, ինչպես նկատել է Գ. Զահուկյանը⁷, գործածվել են նաև հոմ- և համ- ածանցները, բայց թարգմանիչը դրանք չի զետեղել իր ցանկում:

Հունաբան դպրոցի ստեղծած այդ նախածանցների մոտավորապես կես մասն ունեցավ ակտիվ բառակազմական նշանակություն. հայոց լեզուն հարստացավ 23 նախածանցներով, դրանք են՝ ապ-, առ-, արտ-, բաղ-, բաց-, գեր-, դեր-, ենթ-, հակ-, հոմ-, մակ-, հար-, ներ-, շաղ-, շար-, պար-, ստոր-, վեր-, տար-, տրամ-, փաղ-, փար-, փոխ-⁸:

Դավիթ Անհաղթը ևս նախադրութիւն խոսքի մասի մեջ է մտցնում նաև նախածանցները: Ահա նրա սահմանումը. «նախդիր ասի աչնր աղագաւ, զի նախ իղեալ լինի քան զանուն եւ զբայ եւ քան զընաւ տեղիս իբրեւ զսպասաւոր: Իսկ զի ոչ է քան զսոսա պատուական, աստանաւոր անցեալ ունի զխոնարհ տեղի, նմանութեամբ իմն կարապետի թէ և անկեալ յառաջ, այլ ոչ զպատիւ թագաւորին կամ զանուն նորա կրասցէ բերել»⁹: Դավիթ Անհաղթի այս սահմանումը ուշագրավ է նրանով, որ նա արդեն ըմբռնել է նախադրութիւն խոսքի մասի սպասարկու դերը. դա երևում է նրա բերած պատկերավոր համեմատութիւնից: Դավիթ Անհաղթը նախադրութիւնը համեմատում է թագավորի ծառայի հետ, որը, չնայած գնում է թագավորից առաջ, բայց նրանից բարձր չէ, որովհետև կատարում է սպասավորի դեր:

Դ. Թրակացու քերականութիւն մյուս մեկնիչները նախադրութիւն խոսքի մասի վերաբերյալ ոչինչ չեն ավելացնում: Այստեղ հետաքրքիր է միայն Ստ. Սյունեցու (VIII դ.) տեսակետը. նա շեշտում է նախադրութիւն նախադաս գործածությունը: Դա երևում է նախադրութիւնը տված նրա սահմանումից, այսպես՝ «Իսկ նախադրութիւնը առաջադրութիւն ասի, վասն զի են վանգք ինչ, որ ըստ ինքեանց ոչինչ նշանակեն, բայց դնին նախերգանք այլոց մասանց»¹⁰: Այստեղ ուշադրու-

⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 75:

⁸ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմութիւն ուսումնասիրութիւն ներածութիւն, Երևան, 1937, էջ 160, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 178, Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանութիւն ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 138:

⁹ Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 118:

¹⁰ Նույն տեղում, էջ 203:

թյան արժանի է նաև այն, որ, ըստ Սյունեցու, նախադրություններն առանձին վերցրած շունեն բառական իմաստ, բայց դրվելով այլ բառերի սկզբից՝ նրանց տալիս են որոշակի նշանակություն:

Դարեր շարունակ հայ քերականական գրականությունը գոյություն է ունեցել իբրև մեկնողական գրականություն: Դ. Թրակացու «Արվեստ քերականության» աշխատության հիման վրա Դավիթ փիլիսոփան, Մովսես Քերթոզը (նախադրությունը նրա մոտ կոչվում է նախասկզբն)¹¹, Անանուն Մեկնիչը, Ստ. Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Համամ Արեւելցին և ուրիշներ կաղմել են իրենց քերականությունները: Այդ պատճառով էլ հիշյալ բոլոր աշխատությունները «զուտ» քերականություններ չեն, որովհետև դրանցում քերականական հարցերի հետ արժարժվել են ճարտասանական և փիլիսոփայական բնույթի հարցեր:

XII—XIII դարերում արդեն փորձեր են արվում գրելու ինքնուրույն քերականական աշխատություններ: Այս տեսակետից հայ քերականական գրականության մեջ հատուկ տեղ են գրավում XIII դարի քերականագետ Վարդան Արեւելցու «Մեկնութիւն քերականի» և «Վասն բանին մասանց» աշխատությունները: Վերջինս, ինչպես խորագրից էլ կարելի է կռահել, խոսքի մասերին վերաբերող զուտ քերականական աշխատություն է: Վարդան Արեւելցին ևս պահպանում է խոսքի մասերի ավանդական անվանումներն ու քանակը: Չնայած գործածում է նախդիր և նախադրություն անվանումները, բայց տվյալ խոսքի մասի վերաբերյալ ոչ մի նոր բան չի ասում: «Վասն բանին մասանց» աշխատության մեջ նախադրությանը տված նրա սահմանումից շատ հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ նա նախադրություն է համարում նաև անվան նախադաս լրացումները (որոշիչ, հատկացուցիչ), իսկ նախդիր՝ նախածանցները: Ահավասիկ նրա սահմանումը. «Վեցերորդ մասն բանին նախադրութիւնն է, որ է ճոխաբանութիւն, յորժամ հէգ ինչ դնես յառաջ բանին՝ բարի թագաւոր, իմ ապաւէն պարոն, քրիստոսապահ Թորոս: Կամ շարամանելն, շար նախդիր է մանելն իրեն»¹²:

Ստ. Սյունեցու նման՝ Վարդան Արեւելցին ևս շեշտում է նախադրության սպասարկու դերը: Նրա «Մեկնութիւն քերականի» գրքում կարգում ենք. «Նախդիր ասի այսր աղագաւ, զի նախ եղեալ լինի յառաջ քան զանուն և զբայ և յամենայն տեղիս՝ ո՛չ իբրև զպատուաւոր, այլ իբրև զսպասաւոր, զի վասն այսորիկ յետոյ եղաւ տեղեաւ, զի սպասաւոր է: Եւ իբրև զկարապետ նախադասեալ լինի յամենայն մասունս բանի, որ չէ

¹¹ Նույն տեղում, էջ 169:

¹² Լ. Խաչիկյան, Վարդան Արեւելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը. Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, № 2, 1943, էջ 87—88:

պատուական քան զթագաւոր, և յաղագս զարդու և գեղեցկութեան իմացեալ եղև նախադրութիւնս»¹³:

Մինչև XVII դարը հայ քերականները՝ Հովհաննես Երզնկացին, Յսայի Նչեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, ճախարհության խոսքի մասի վերաբերյալ նորություն չեն մտցնում:

Սկսած XVII դարից հանդես են գալիս ինքնուրույն քերականական աշխատություններ: Բայց այս անգամ էլ հայ քերականական միտքը կրում է լատիներենի ազդեցությունը. հայկական քերականական աշխատությունները կազմվում են լատիներենի հիման վրա, այսինքն՝ հայերենը ձևվում է լատիներենի վրա այնպես, ինչպես մի ժամանակ ձևվում էր հունարենի վրա: Լատինաբան քերականները նախադրությունների մասին խոսելիս որպես հիմք ընդունում են լատիներենի նախադրությունները, նախ բերում են լատիներենի նախադրությունը, հետո՝ նրա հայերեն թարգմանությունը:

1624 թ. լույս է տեսնում Յրանցիսկո Ռիվոլայի քերականությունը, այնուհետև՝ Կղեմես Գալանոսի, Ոսկանի և Հովհաննես Կոստանդնուպոլսեցու քերականությունները, որոնք բոլորն էլ կրում են լատիներենի խոր ազդեցությունը: Հովհաննես Կոստանդնուպոլսեցու գիրքը՝ «Քերականութիւն լաթինական հայերէն» խորագրով, լույս է տեսել 1675 թվականին, Հոռմում: Ինչպես մյուս քերականների, այնպես էլ Հովհ. Կոստանդնուպոլսեցու մոտ նախադրությունների հարցում որոշակիություն գոյություն չունի: Նա ևս տվյալ խոսքի մասի մեջ է մտցնում նաև շատ մակբայներ ու նախածանցներ: Կատարում է նախադրությունների դասակարգում, բայց այստեղ էլ նրա մոտ ճիշտ չի ստացվում, տրոլհետև դասակարգումը միևնույն սկզբունքով չի տանում: Նախադրություններն ըստ կազմության ստորաբաժանում է երկու տեսակի՝ բաղադրական և անբաղադրական, իսկ վերջիններս իրենց հերթին բաժանում է երեք տեսակի՝ հայցական, բացառական և հայցական ու բացառական հոլովներ պահանջող նախադրություններ, ինչպես՝ հայցական հոլով պահանջողներ՝ Ad-առ, յ, ի, Apud-առ, առնթեր, մերձ, հապ, Ante-յառաջ, առաջի, Vertus-հանդէպ, յանդիման, դէպ, դէմ և այլն: Բացառական հոլով պահանջողներ՝ A-ի, Ab-յ, Abs-ի և այլն: Երբեմն հայցական, երբեմն բացառական հոլով պահանջողներ՝ In-ն, ըն, ի, յ, ներ, Sub-ենք, ստորև, ի ներքոյ, Subter-ստորև, ընդ, ենք և այլն¹⁴:

Նման սկզբունքներով են կառուցված նաև Սկրոդերի և Մխիթար Սեբաստացու քերականությունները, թեև նրանք, առանձնապես Սե-

¹³ Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1972, էջ 139:

¹⁴ Հովհաննես Կոստանդնուպոլսեցի, Քերականութիւն լաթինական հայերէն, Հոռմ, 1675, էջ 152—153:

բաստացիքն, աշխատում են զերծ մնալ լատինաբանությունից: Սեբաստացին, ելնելով նախդիրների և նախադրությունների կատարած դերից, դրանք բաժանում է երկու տեսակի՝ հոլովակերտ (ի, յ, առ, ց, գ, ներ, ն, ըն) և հոլովառու (ներքոյ, ի ներքոյ, ենք, ստորև, ի մեջ, ի միջի, ի միջոյ, ի վերայ և այլն)¹⁵: Չնայած Սեբաստացին աշխատում է նախդիրներն առանձնացնել նախադրություններից, բայց դա նրան չի հաջողվում, որովհետև իր նախորդների նման նախադրություն է համարում նաև շատ նախածանցներ, ինչպես՝ աւն-(անարատ), ապ-(ապարդին), տ-(տկար), ենք-(ենթադրութիւն), բաղ-(բաղկացուցիչ), դեր-(դերանուն) և այլն¹⁶:

Հայերենի խոսքի մասերի քանակն ու անվանումները անփոփոխ են մնում նաև հետագա հայ քերականների գործերում: XVI դարի վերջին հանդես եկող քերական Պաղտատար Դպիրը ևս ընդունում է նշյալ ութ խոսքի մասերը: Հիշատակության արժանին այն է, որ նա նախադրությունը, որը նրա մոտ կոչվում է նախդիր, բավական հաջող է սահմանում, այսպես՝ «նախդիրն է վեցերորդ մասն բանի, որ առադրի անուան և այլ հոլովական մասանց բանին, և նշանակութիւն ինչ արտաքին յաւելու ի նոսա: Որպէս ասել. ի վերայ երկրի, վասն պահելոյ, առաջի նորա և այլն»¹⁷:

Դպիրը տարբերություններ է նկատում նախդիր, նախադրություն և նախածանց հասկացությունների միջև և փորձում է հիմնավորել դրանք: Նա թվարկում է նախադրությունները մեկ առ մեկ և բերում համապատասխան օրինակներ, իսկ հետո շարունակում, որ, բացի դրանցից, կան տառերից կամ վանկերից կազմված մասնիկներ, որոնք կոչվում են հոլովական նախդիրներ, որոնք են՝ ի, յ, գ, ց, առ, ըն, ընդ, ո՛վ¹⁸:

Դպիրը ևս նախածանցներն առանձնացնում է նախադրություններից, բայց չի կարողանում գտնել դրանց տարբերակման հիմունքը: Եվ այդ պատճառով նախածանցները համարում է նախադրությունների մի ենթատեսակը, դրանք անվանելով բաղադրական մասնիկներ, ինչպես՝ աւն-(անզգայ), ապ-(ապերախտ), տ-(տգեղ), բաղ-(բաղադրել), փաղ-(փաղառութիւն), շաղ-(շաղկապ), շար-(շարադրել) և այլն¹⁹:

15 Մ. Սեբաստացի, Քերականութիւն զբարաոի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 175—176:

16 Նույն տեղում:

17 Պաղտատար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիրքիմաց, հ. 1, 4. Պօլիս, 1771, էջ 138:

18 Նույն տեղում, էջ 145:

19 Նույն տեղում, էջ 150:

Այսպիսով, Դպիրը նախադրությունները բաժանում է երեք տեսակի՝ դատական, հոլովական և բաղադրական։ Բաժանման համար որպես հիմունք նա ընդունում է դրանց գրության ձևը, թե ինչպես են գրվում իրենց խնդրի հետ։

Գնալով հայ քերականական միտքը զարգանում է։ Հայ քերականները խոսքի մասերի բնորոշման հարցում զարգացնում են ավելի ճիշտ դրույթներ։

1779 թ. Վենետիկում հրատարակվում է Միքայել Չամչյանի քերականությունը, որտեղ հեղինակը նախադրությունների մասին խոսելիս անում է մի քանի կարևոր դիտողություններ։ Նախադրությունը սահմանում է հետևյալ կերպ. «Հինգերորդ՝ նախադրութիւն, որ իրին պարագայս նշանակէ. ի վերայ նորա, հանդերձ նովաւ, վասն քաջութեան և այլն»²⁰։ Այս սահմանումը ցույց է տալիս, որ Չամչյանն ըմբռնել է նախադրությունների հիմնական առանձնահատկությունը, այսինքն՝ առարկաների և երևույթների անունների միջև տարբեր հարաբերություններ դրսևորելու հատկանիշը։

Հոլովակերտ նախադրություններ (այսինքն՝ նախդիրներ) է համարում ի, յ, ի յ, առ, առ ի, ց, ընդ, զ մասնիկները²¹։ Հունարան հեղինակների ստեղծած մի քանի նախածանցներ համարում է գործածությունից դուրս եկած մասնիկներ։ Այս մասին նա գրում է. «Գտանին և այլ նախդիրք ինչ ի գիրս Դաւթի Անյաղթին, և այլուր ևս. որք են սոքին. և, ընը, ըն, ըմ, ենք, ապ, բայց սոքա ոչ են ի գործածութեան. և խափանեալ են»²²։ Հոլովառու և հոլովակերտ նախադրությունների դասակարգման հիմքում դնելով դրանց շարահյուսական հատկանիշները՝ հոլովառու տեսակի մեջ է մտցնում նաև մի քանի նախդիրներ, ինչպես՝ առ, առ ի, ընդ, ըստ։ Նրա բերած նախադրությունների ցանկում հանդիպում ենք այնպիսի բառերի, որոնք նախադրություններ չեն, ինչպես, օրինակ, ի ճամբարի, ի կարգի և այլն. դրանք գոյականի տրական հոլովաձևեր են՝ գործածված ի նախդրի հետ։

Չամչյանը կարևոր դրույթներ է զարգացնում մինչ, մինչև, մեռն, ճուպ, մօտ նախադրությունների՝ առ, ի և ց նախդիրների հետ ունեցած զուգահեռ գործածության, նախադրության խնդրի, զ և ի նախդիրներով կազմված զկնի, յաղագս և այլ նախադրությունների շարադասության վերաբերյալ²³։

XIX դարում հայ քերականական միտքն է՛լ ավելի է զարգանում։ Քերական Գաբրիել Ավետիքյանն արդեն նշում է «նախադրություն» հա-

20 Մ. Չամչյան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 1։

21 Նույն տեղում, էջ 118։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, էջ 118—123։

մակարգի ամենահիմնական առանձնահատկությունները: Ըստ նրա կարծիքի, նախադրությունը՝ ա) պետք է լինի մասնիկ կամ շոշովովող բառ, բ) պետք է բառի առաջը դրվի և գ) պետք է փոխի մոտի բառի հոլովը կամ նշանակությունը: Այսպիսով, նախադրությունը, ըստ Ավետիքյանի, կատարում է երկու դեր. 1) փոխում է միայն բառի հոլովը, դրա համար էլ կոչվում է հոլովակերտ կամ նախդիր և 2) փոխում է կամ որոշում բառի նշանակությունը. սա էլ կոչվում է հոլովառու նախադրություն²⁴:

Քերական Մեսրոպ Տեր-Հարությունյանը, եթե իր «Քերականութիւն հայոց լեզուի» գրքի առաջին հատորում նախդիրների շարքն է դասում նաև ն, ըն, նեւ, ապ մասնիկները²⁵, ապա երկրորդ հատորում հոլովակերտ նախդիրներ է համարում գ, ի, յ, առ, առ ի, ց, ընդ մասնիկները, որոնք կազմում են զանազան հոլովներ²⁶: Իսկ հոլովառու նախադրություններն ըստ իմաստի բաժանում է 13 տեսակի՝ տեղի, դասական, ժամանակի, պատճառի, նմանական, ներհակական, զատական, կցորդական, փոխարինական, ծածկական, գերադրական, բաղդատական, միջնորդական:

Հովհաննես Եղիազարյանը նախադրությունները դասակարգում է՝ ճշնելով նրանց կատարած պաշտոնից: Այդ պատճառով նախադրությունների շարքն է դասում նաև առ, ընդ, ըստ նախդիրները²⁷:

Նուսրի մասերի բնորոշման հարցում նոր կարևոր քայլ է կատարում քերական Արսեն Բագրատունին: Նա ևս ընդունում է ութ խոսքի մաս, որոնք բաժանում է երկու խմբի՝ «փոփոխելի» (անուն, դերանուն, բայ, դերբայ) և «անփոփոխ» (նախդիր, մակբայ, շաղկապ, ձայնարկություն)²⁸, իսկ նախադրությունները բաժանում է երկու տեսակի՝ նախդիր և հոլովառու բառեր:

Ա. Բագրատունին բավականին ճիշտ է բնորոշում նախդիրը, այսպես՝ «Բուն նախդիր են տառքն և պարզ ձայնքն գ, ի, յ, ց, առ, ընդ, ըստ, որք եղեալ ի սկիզբն անուանց և հոլովից նոցա՝ ի պէսպէս միտս փոփոխեն զնոսա»²⁹: Նա ճիշտ դրույթ է առաջ քաշում նախադրությունների շարադասության վերաբերյալ. նույն նախադրությունը կարող է գործածվել և՛

24 Կ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 101—102:

25 Մ. Տեր-Հարությունյան, Քերականութիւն հայոց լեզուի, Կ. Պոլիս, 1826, էջ 132:

26 Նույն տեղում, էջ 401:

27 Հովհաննես Եղիազարյան, Քերականութիւն հայերէն լեզուի, Մոսկով, 1839, էջ 60:

28 Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 5:

29 Նույն տեղում, էջ 95: Տե՛ս նաև նույնի՝ «Տարերք հայերէն քերականութեան», Վենետիկ, 1874, էջ 48—56:

նախադաս, և՛ ետադաս, ինչպես՝ սակս ձեր||քակելոյ սակս, հանդերձ մարքն||եղբարքն հանդերձ և այլն³⁰:

Քերական Արիստակես Մամբրեյանը նախադրությունների մասին խոսելիս մի արժեքավոր միտք է հայտնում: Դա այն է, որ շնայած հոլովառու բառերն ունեն նշանակություն (իմաստ—Գ. Թ.), բայց ինքնուրույնաբար նախադասության անդամ չեն կարող դառնալ, այլ այն բառի (նախադրության խնդրի—Գ. Թ.) հետ, որի վրա դրվում են, լինում են նախադասության մեկ անդամ: Ուշադրության է արժանի նաև այն, որ նրա բերած նախադրությունների ցանկում չկա ոչ մի նախածանց³¹:

Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» գրքով սկիզբ է դրվում արևմտահայ աշխարհաբարի գիտական քերականությանը: Այդ գիրքն ունի մի հավելված՝ «Համառօտ տեսութիւն գրաբար հայերէն լեզուի» խորագրով, որտեղ խիստ ամփոփ ձևով նկարագրված են գրաբարի խոսքի մասերը: Այտընյանն այդտեղ նշում է նախադրությունների մի քանի հատկանիշները՝ նրանց նախադաս և ետադաս գործածությունը, նախադրությունների և մակբայների տարբերությունը, ի նախդրի երկու տարբերակների փոխհարաբերությունը և այլն³²: Նա գրում է, որ միևնույն անփոփոխ բառը բայի հետ գործածվելիս մակբայ է, իսկ անվան հետ՝ նախադրություն: Ի տարբերություն իր բոլոր նախորդ քերականների՝ Այտընյանը իրավացիորեն նշում է, որ առանձին չ նախդիր գոյություն չունի, այլ դա նույն ի-ն է, որը ձայնավորից առաջ վերածվում է յ-ի:

Այս տեսակետներին ավելի մանրամասն և հիմնավորված ձևով հանդիպում ենք Վ. Զալքիսյանի՝ Ա. Այտընյանի աշխատակցությամբ հրատարակված քերականության մեջ³³:

Ա. Դարազաշյանի գրքում հռոլվակերտ և հռոլվառու անվանումներին բոլորովին չենք հանդիպում: Նա օգտագործում է նախդիր և նախադրություն անվանումները, ըստ որում, նախդիրները համարում է նախադրության մի ենթատեսակը: Տվյալ խոսքի մասը սահմանում է՝ ելնելով այդ բառերի կատարած շարահյուսական դերից: Նա նշում է, որ դրանք ցույց են տալիս գործողության պարագաները՝ տեղը, ժամանակը,

30 Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 119:

31 Ա. Մամբրեյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Կոստանդնուպօլիս, 1856, էջ 70—74:

32 Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886, էջ 467—471: Տե՛ս նաև նույնի 1883 թ. հրատարակությունը, էջ 239—242:

33 Տե՛ս Վ. Զալքիսյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 129—149:

եղանակը, պատճառը և այլն³⁴։ Որպես նախդիրներ ընդունում է ի, յ, զ, առ, ընդ, ըստ, ց մասնիկները։

Գրաբազայանն անդրադառնում է «նախադրության խնդիր» հասկացությանը։ Նրա տեսակետով նախադրության պատկանող բառը կոչվում է նախադրության խնդիր, իսկ նախադրությունն իմաստ է ստանում իր խնդրի հետ միասին³⁵։

Իր նախորդ քերականների հետ համեմատած նախդիրներն ավելի մանրամասնորեն է քննում Ս. Մալխասյանցը իր «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» գրքույկում, որը լույս է տեսել 1891 թվականին։ Նախդիրները կոչում է մասնիկներ և սահմանում է հետևյալ կերպ. «Նախդիր կոչվում են զ, ի (յ), ց, առ, ընդ, ըստ մասնիկները, որոնք առանձին առնված նշանակություն չունին, բայց հոլովվող բառերի առաջ դրվելով՝ ստանում են այլևայլ նշանակություններ, ինչպես՝ տեղը, պատճառը, ժամանակը և այլն»³⁶։

Այդ աշխատության մեջ Ս. Մալխասյանցը խոսում է նաև նախդիրների ածանցական դերի մասին։ Նա նշում է, որ շատ վաղուց ի (յ), առ, ց, ընդ, զ նախդիրները ունեցել են ածանցական գործառություն, ինչպես՝ յ-առնեմ, յ-առաջեմ, զ-արթնույ, առ-անձինն, ց-այդ, ընդունիմ և այլն³⁷։ Թեև նա ճիշտ է բնորոշում նախդիրների ածանցական գործառությունը, բայց հետևելով իր նախորդ քերականներից շատերի, մասնավորապես հունաբանների արտահայտած կարծիքին՝ սխալմամբ նախածանց է համարում նաև ըն-ը և ն-ն։

Հաջորդ տարին հրատարակվում է նրա «Գրաբարի համաձայնությունը» գիրքը, որի մեջ Մալխասյանցը քննության է առնում նաև նախադրությունները։ Ելնելով նախադրությունների շարահյուսական կիրառությունից՝ նախադրություն է համարել նաև առ և ընդ նախդիրները։ Դա երևում է նախադրություններին տված նրա սահմանումից և բերած օրինակներից, այսպես՝ «Նախադրություններն անփոփոխ մասնիկներ են, որոնք իրենցից հետո պահանջում են լրացուցիչ բառեր կամ խընդիրներ, ինչպես. յետ աուրց, հեռի ի նոցանէ, առ աշակերտսն, ընդ գետ և այլն»³⁸։ Միաժամանակ նա նշում է նախադրությունների և նախդիրների միջև եղած հիմնական տարբերություններից մեկը. նախդիր-

34 Ա. Մ. Գաբազայան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, Կ. Պօլսոս, 1881, էջ 53։

35 Նույն տեղում, էջ 56։

36 Ս. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 47։

37 Նույն տեղում։

38 Ս. Մալխասյանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 69։

ներն առանձին վերցրած նշանակություն չունեն, իսկ նախադրություններն ունեն։ Այնուհետև հիշյալ գրքում նա գրում է նախադրությունների խնդրառության մասին։

XX դարի առաջին կեսի քերականական աշխատությունները մեջ գրեթե ոչ մի նորություն չենք հանդիպում գրաբարի նախադրությունների վերաբերյալ։ Այդ ժամանակաշրջանում հայ բազմավաստակ գիտնական Մ. Արեղյանն իր աշխատություններում քննելով աշխարհաբարի քերականական կարգերը՝ որոշ նշումներ է անում նաև գրաբարի նախադրությունների վերաբերյալ։ Նա աշխարհաբարի համար ընդունում է կապ անվանումը և այդ խոսքի մասը բաժանում է երկու տեսակի՝ նախադրություն և ետադրություն³⁹։

2. Դադրաշյանը նախդիր անվանման նմանակությամբ աշխարհաբարի համար գործածում է ետդիր անվանումը⁴⁰։ Հետագայում այս անվանմանը հանդիպում ենք նաև մեր մյուս լեզվաբանների գործերում։ այսպես, օրինակ, ակադ. Գ. Ղափանցյանը գործածում է նախդիր-ետդիր⁴¹, Գ. Սևակը՝ ետադրություն և ետդիր անվանումները⁴²։

Մ. Արեղյանը նշում է, որ կապերը կատարում են հոլովների նման դեր, լրացնում են հոլովների թերին։ Գրաբարի նախադրությունների մասին էլ խոսելիս նա գործածում է կապ անվանումը և տարբերություն չի դնում նախդիրների ու նախադրությունների միջև։ Նա գրում է. «Գրաբարի կապերը դրվում են իրենց գոյականից առաջ, ուստի կոչվում են նախդիր կամ նախադրություն. նախդիրներն են զ, ի(յ), ց, առ, ընդ, ըստ, իբրև զ, քան զ, մինչև, բաց կամ բայց, հանդերձ, վասն»⁴³։

Արեղյանն իր քերականական աշխատություններում հանգամանորեն քննում է աշխարհաբարի կապերը։

Ակադ. 2. Աճառյանն իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատության 5-րդ հատորում քննում է լիբելոդ խոսքի մասերը, այդ թվում նաև՝ նախդիր և նախադրություն խոսքի մասը։ Նա նշում է, որ «նախդիր» և «նախադրություն», մասնավանդ «նախադրություն» և «մակբայ» հասկացությունները թե՛ միևնույն լեզվի մեջ և թե՛ լեզվից լեզու հաճախ շփոթվում են։ Այդ պատճառով դրանց

39 Տե՛ս Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 69—70։

40 2. Դադրաշյան, Արեւիահայ աշխարհաբարի քերականությունը, Թիֆլիս, 1913, էջ 103—104։

41 Գ. Ղափանցյան, Հնդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939, էջ 197—198։

42 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 319։

43 Մ. Արեղյան, Գրաբարի համառոտ քերականություն, Վաղարշապատ, 1907, էջ 164։

սահմանները որոշելու համար նա տվյալ խոսքի մասերը քննում է ավելի մանրամասնորեն: Աճառյանի տեսակետներին ծանոթանալու համար բերենք հիշյալ սպասարկու բառերին տրված նրա սահմանումները, այսպես՝ «նախդիր են կոչվում մի կամ երկու և երեք ձայներից բաղկացած այն բառիկները, որոնք իբրև բառ առանձին գոյություն չունին և որոնց իմաստն էլ շատ ընդհանուր և շարժական է. սակայն միանալով գոյականների և դերանունների զանազան հոլովների հետ՝ ստանում են որոշ և հաստատուն նշանակություն»⁴⁴: Այս սահմանումից հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ Աճառյանը նախդիրները համարում է ինքնուրույն իմաստ չունեցող միավանկ բառ-մասնիկներ, որոնք զանազան նշանակություն են ստանում, երբ դրվում են գոյականի և դերանվան տարբեր հոլովների վրա: Բայց հոլովվել կարող է գոյականաբար գործածված ամեն մի բառ: Հետևաբար, հարկավոր է ասել, որ նախդիրները դրվում են ոչ միայն գոյականի ու դերանվան զանազան հոլովաձևերի, այլ նաև՝ գոյականաբար գործածված ամեն մի բառի վրա:

«Իսկ նախադրությունը այն անփոփոխ բառն է, որ ունի առանձին իմաստ և միանալով գոյականների և դերանունների հետ, որոշում է նրանց այս կամ այն պարագան և այս հանգամանքով կապում նրան բայի հետ»⁴⁵: Այս սահմանումը ցույց է տալիս, որ չնայած նախադրությունները, ի տարբերություն նախդիրների, ունեն իրենց բառական իմաստը, բայց և այնպես նրանք պաշտոն կարող են կատարել որևէ հոլովի հետ միասին:

Աճառյանը տալիս է նախադրությունների առաջացման ուղին. ըստ նրա ստուգաբանության, մեր նախդիրներն ու մակբայները հնդեվրոպական հիմք լեզվի գոյականների այլևայլ հոլովներից առաջացած ու բաբացած ձևեր են⁴⁶: Նախադրությունների առաջացմանը կանդադառնանք առանձին:

Պրոֆ. Ս. Ղազարյանն իր «Գրաբարի դասագիրք»⁴⁷ ձեռնարկում խոսում է միայն նախդիրների մասին, նշելով յուրաքանչյուրի հոլովառությունն ու կիրառությունը, իսկ նախադրությունների մասին ոչինչ չի ասում:

XX դարի 40-ական թվականների լեզվաբանական գրականության մեջ գրաբարի նախդիրների և նախադրությունների մասին մասնակի տեղեկությունների ենք հանդիպում: Տվյալ բառերի մասին խոսում են

44 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, Երևան, 1965, էջ 60:

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում, էջ 61:

47 Տե՛ս Ս. Ղազարյան, Գրաբարի դասագիրք, Երևան, 1951, էջ 80—85:

պրոֆ. Ա. Առաքելյանը և բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Առաքելյանը⁴⁸;

50-ական թվականների սկզբներին նախդիր և նախադրություն խոսքի մասը նորոպի է քննում պրոֆ. Ա. Աբրահամյանը: Նախ նա տալիս է տվյալ խոսքի մասի հիմնական առանձնահատկությունները, նախդիրների և նախադրությունների տարբերությունները, այնուհետև ամենայն մանրամասնությամբ քննում յուրաքանչյուր նախդրի կիրառությունները: Իսկ նախադրությունները ստորաբաժանում է ըստ հոլովառության, նշում ամեն մի նախադրության արտահայտած հիմնական իմաստները և բերում համապատասխան օրինակներ⁴⁹:

50—60-ական թվականներին հայ առանձին լեզվաբաններ աշխարհաբարի կապերը կամ մյուս լիթերալ խոսքի մասերը քննելիս որոշ մտքեր են հայտնել նաև գրաբարի նախադրությունների վերաբերյալ: Այդ տեսակետից հիշատակության արժանի են Վ. Առաքելյանի, Ա. Մարգարյանի, Ս. Աբրահամյանի և այլոց աշխատությունները⁵⁰:

ՆԱԽԱԳԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԽՈՍՔԻ ՄԱՍՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Լեզվաբանական գրականության մեջ խոսքի մասերի դասակարգման ժամանակ առաջադրվել են տարբեր տեսակետներ: Կան լեզվաբաններ, որոնք առաջարկում են խոսքի մասերը դասադասել ըստ իմաստային հատկանիշների, մյուսները՝ դասակարգման հիմունք են համարում բառերի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները, ոմանք՝ իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները¹, իսկ ոմանք էլ՝ բառերի լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստը²:

48 Տե՛ս Ա. Առաքելյան, Գրաբարի դասագիրք, Երևան, 1944, էջ 29—31, նույնի՝ Գրաբարի ինքնուսուցման ձեռնարկը, Երևան, 1937, էջ 152—155, Վ. Առաքելյան, Գրաբարի հոլովումը և խոհարհումը, Երևան, 1945, էջ 77:

49 Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 259—305:

50 Տե՛ս Ա. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի լիթերալ խոսքի մասերը, Երևան, 1959:

1 Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 353:

2 Տե՛ս Գ. Սեակ, Խոսքի մասերի ուսմունքը, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 11, 1939, էջ 231, նույնի՝ Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939, էջ 131:

Գրաբարի խոսքի մասերի դասակարգման հիմունք ընդունվել են նախ բառերի իմաստային, ապա ձևաբանական հատկանիշները: Ըստ այդմ գրաբարում հենց սկզբից զիտակցվել է ութ խոսքի մաս, դրանք են՝ անուն, բայ, ընդունելություն, հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ և շաղկապ:

XIX դարի խոշոր քերական Ա. Բագրատունին այդ ութ խոսքի մասերը, ինչպես արդեն նշվել է, բաժանել է երկու խմբի՝ փոփոխելի (անուն, դերանուն, բայ, դերբայ) և անփոփոխելի (նախդիր, մակբայ, շաղկապ և ձայնարկություն)³: Նման բաժանման համար, ինչպես բաժանումից էլ երևում է, իբրև հիմունք ծառայել է բառերի թեքականության հատկանիշը, այսինքն՝ եթե բառը հոլովվել կամ խոնարհվել է, Բագրատունին մտցրել է փոփոխելի տեսակի մեջ, իսկ եթե ոչ՝ անփոփոխելի:

Հետագայում այս հարցում արվեց նոր քայլ. աշխարհաբարի խոսքի մասերը, ըստ իրենց կատարած հիմնական գործառության, բաժանվեցին երկու խմբի՝ նյութական իմաստ ունեցող կամ ճիմնական խոսքի մասեր (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) և երկրորդական խոսքի մասեր կամ սպասարկու բառեր (կապ, շաղկապ, ձայնարկություն և եղանակավորող բառեր):

Երկրորդական խոսքի մասերը (այդ թվում նաև գրաբարի նախադրությունները) ունեն հետևյալ առանձնահատկությունները⁴. դրանք՝

1. նյութական իմաստից զուրկ են.
2. իրենք հարաբերություններ չունեն, այլ արտահայտում են նյութական խոսքի մասերի հարաբերությունները.
3. չթեքվող բառեր են, այսինքն՝ ոչ հոլովվում են և ոչ էլ խոնարհվում.
4. նախադասության անդամ չեն դառնում: Բայց նախադրությունները, ինչպես նաև աշխարհաբարի կապերը, այս տեսակետից հանդես են բերում մի յուրահատկություն. իրենց խնդրի հետ միասին լինում են նախադասության մեկ անդամ:

Սպասարկու բառերի շարքում առանձնանում է նախադրությունների համակարգը: Նախադրությունները ցույց են տալիս հոլովվող և գոյականաբար գործածվող բառերի հարաբերությունները տարբեր բառերի (գոյական, ածական, մակբայ) միջև, որոնցից նրանք կախված են:

Դ. Թրակացու «Արվեստ քերականության» գրքի հայ թարգմանիչն ու մեկնիչները նախադրություն խոսքի մասը բնութագրել են՝ ելնելով

3 Տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 5:

4 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939, էջ 134:

նրա շարադասութիւնից, այսինքն՝ նախադաս գործածութիւնից. նախադրութիւնը դրվում է իր խնդրից առաջ⁵: Այդ պատճառով էլ նրանք տվյալ խոսքի մասի մեջ են մտցրել նաև նախածանցները, իսկ մեկնիչներից ոմանք նախադրութիւն են համարել նույնիսկ անվան նախադաս լրացումները (որոշիչը, հատկացուցիչը): Այսպես է վարվել XIII դարի քերական վարդան Արեւելցին իր քերականական, մասնավորապես «Վասն բանին մասանց» աշխատութեան մեջ⁶:

Հետագայում մեր քերականները նախադրութիւնները⁷ հիմնականում դասդասել են շարահյուսական սկզբունքով: Ըստ այդմ նրանք նախադրութիւնները բաժանել են երկու տեսակի՝ հոլովակերտ և հոլովառու: Հոլովակերտ կոչվել են այն մասնիկները, որոնք դրվել են տարբեր թեք հոլովածների վրա և նրանց տվել հոլովական նշանակութիւն, կերտել հոլովը, որտեղից էլ ստացել են իրենց անվանումը: Իսկ հոլովառու (հոլով առնող) այն բառերն են, որոնք պահանջում են պատրաստի որևէ հոլով, որի վրա դրվելով, նրան տալիս են զանազան իմաստներ: Հոլովակերտ բառերը, արդի ըմբռնմամբ, նախդիրներ են, իսկ հոլովառու բառերը՝ նախադրութիւնները:

Ի տարբերութիւն նախդիրների, նախադրութիւնները պահպանել են իրենց ընդհանուր բառական իմաստները: Բայց տարբեր նախադրութիւնների բառական իմաստը տարբեր է. ծագմամբ հին նախադրութիւններինը ավելի ընդհանուր ու վերացական է, իսկ համեմատաբար նորակազմ նախադրութիւններինը՝ ավելի ցայտուն ու որոշակի, ինչպես՝ ի պատճառս, պատճառաւ, յեռեսաց, նման, չափ, յանուն, յօգուտ, ի փառս, ի յիշատակ և այլն:

2, Ի(յ), ց նախդիրները կապակցութիւններից դուրս իսպառ կորցրել են իրենց բառական արժեքը, իսկ մյուսները (առ, ընդ, ըստ) թեև պահպանել են, բայց շատ աղտոտ. դրանցում իշխում է քերականական իմաստը, որն էլ, սակայն, դրսևորվում է հոլովական կապակցութիւնների մեջ: Օրինակ՝ ընդ-ը ունի ինչ-որ միասնութեան իմաստ՝ «հետ» նշանակությամբ, բայց երբ ասում ենք՝ խօսէր ընդ նմա, այդ իմաստը դառնում է պարզ ու որոշակի: Առաջացման տեսակետից հին նախադրութիւնների իմաստն էլ շնայած շատ վերացական է, բայց ավելի որոշակի է, քան վերոհիշյալ երեք նախդիրներինը: Օրինակ՝ վառն նախադրութիւնը հոլովական կապակցութիւնից դուրս էլ գրաբարին ծանոթ ամեն մարդու մտքում ամենից առաջ առաջացնում է «համար» կամ «մասին» գաղափարը:

5 Ն. Աղանց, նշվ. աշխ., տե՛ս համապատասխան տեղերում:

6 Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, № 2, 1943, էջ 87—88:

7 Այստեղ և նման այլ դեպքերում նկատի է առնվում նախադրութիւն (կապ) խոսքի մասը և ոչ թե նրա միայն մի տեսակը:

Այսպիսով, նախադրությունները բառական այնպիսի միավորներ են, որոնք ինքնուրույն նյութական բովանդակություն չունեն, այլ արտահայտում են վերաբերական զանազան հարաբերություններ տարբեր առարկաների ու երևույթների անունների միջև: Ահա սա էլ տվյալ բառերի հիմնական առանձնահատկությունն է: Օրինակ՝ «Եւ հՀան զԱդամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան» (Ս. Գ., Գ. 1, էջ 12) նախադասության մեջ յանդիման նախադրությունն արտահայտում է տարածական հարաբերություն, այսինքն՝ դրսևորում է Ադամ և դրախտ առարկաների միջև եղած հարաբերությունը:

Հայ քերականները հոլովառու բառերը (նախադրությունները) դասակարգել են տարբեր սկզբունքներով, որոնք հիմնականում կարելի է բաժանել հետևյալ երեք տեսակների.

ա) ըստ իմաստի՝ տարածական, ժամանակային, պատճառի, միասնության, նպատակի, բաղդատության, հակադրության, փոխարինության և այլ հարաբերություններ արտահայտող նախադրություններ⁸.

բ) ըստ խնդրառության՝ սեռական, տրական, հայցական, բացուական և գործիական խնդրով նախադրություններ⁹.

գ) ըստ ծագման: Ըստ այդմ Ա. Այտընյանը աշխարհաբարի նախադրությունները բաժանել է երեք տեսակի՝ բուն նախադրություններ, գոյականից առաջացած և մակբայից առաջացած նախադրություններ¹⁰.

Իսկ ումանք (օրինակ՝ Հ. Աճառյանը)¹¹ նախադրությունների մասին խոսելիս ոչ մի դասակարգում չեն կատարում, այլ դրանք քննում են այբբենական կարգով:

Նախադրությունների համակողմանի ուսումնասիրության համար անհրաժեշտ է կատարել տարբեր բնույթի դասակարգումներ՝ ըստ իմաստի, ըստ խնդրառության, ըստ ծագման, ըստ կազմավորման աստիճանի, ըստ շարահասության և այլն, որոնց կանդրադառնանք ստորև, յուրաքանչյուրին առանձին-առանձին: Բայց, իհարկե, այս բոլոր տեսակի դասակարգումների մեջ ամենից կարևորը ըստ իմաստի դասակարգումն է, որովհետև նախադրություններն ամենից առաջ քերականական հարաբերություններ արտահայտող սպասարկու բառեր են: Օրինակներ. «Եւ

8 Տե՛ս Պաղտատար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան..., էջ 138—140, Մ. Տեր-Հառությունյան, Եջվ. աշխ., էջ 137:

9 Վ. Զալբէյան, Քերականութիւն..., էջ 136—146:

10 Ա. Այտընյան, Քննական քերականութիւն..., էջ 119, Ստ. Պալտաւեյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Տիգրայ, 1894, էջ 180—182:

11 Հ. Աճառյան, Լիակատար քերականութիւն հայոց լեզվի, Գ. 5, էջ 120—121:

նստան շուրջ զբերդան ամիսք երեքտասան» (Բուզ., էջ 144): «Ոմանք ի նոցանէ ի հրոյ էութենէ ասեն զբնութիւն աշխարհիս, վասն զարեգակն առանել զարմանալի համարելոյ» (Եղն., էջ 227): Առաջին օրինակով շուրջ նախադրութիւնը ցույց է տալիս տեղի, իսկ երկրորդով վասն-ը՝ պատճառի հարաբերութիւնը:

Մեր շրջապատում կան բազմաթիւ առարկաներ ու երևույթներ, որոնք միմյանց նկատմամբ գտնւում են փոխադարձ կապի և հարաբերութիւնների մեջ: Առարկաների ու երևույթների միջև եղած հարաբերութիւններն արտահայտւում են առաջին հերթին հոլովների միջոցով: Սակայն դրանք այնքան շատ են, որ հոլովների միջոցով հնարավոր չէ արտահայտել բոլորը: Զնայած մի հոլովը կիրառւում է տարբեր գործառութիւններով, բայց նորից կարիք է զգացւում ինչ-որ բառերի և միջոցների՝ այդ բոլոր հարաբերութիւններն արտահայտելու համար: Այդ հարաբերութիւնների մի մասն էլ արտահայտւում է այնպիսի բառերի միջոցով, որոնք սպասարկում են հոլովման համակարգին¹² և դրաբարի քերականության մեջ կոչւում են նախդիրներ և նախադրութիւններ: Ուրեմն, տվյալ սպասարկու բառերն արտահայտում են այնպիսի հարաբերութիւններ, ինչպիսիք՝ հոլովները: Բայց դրանք չեն նույնանում, որովհետև քննարկվող բառերն արտահայտում են ավելի որոշակի, առավել տարբերակւած հարաբերութիւններ: Բացի դրանից, կան այնպիսի հարաբերութիւններ (տարածական¹³, ժամանակային, բաղդատական, բացառման և այլն), ինչպես՝ «մեջ», «միջև», «ներքև», «առաջ», «հետո», «պես», «նման», «առանց», «բացի» և այլն, որոնք կարող են արտահայտվել միմիայն նշյալ սպասարկու բառերի միջոցով: Սակայն այդ հարաբերութիւնները նախդիրներն ու նախադրութիւններն ի վիճակի են արտահայտելու հոլովների հետ, որովհետև նրանք, ինչպես արդեն այդ մասին ասվել է, ինքնուրույնաբար նախադասության անդամ չեն դառնում, այլ այն բառի հետ, որի վրա դրվում են (իրենց խնդրի), լինում են նախադասության մեկ անդամ:

Նախադրութիւններն ու հոլովական վերջավորութիւնները իրարից տարբերվում են նաև իբրև լեզվական միավորներ. նախադրութիւնները հիմնական ձևութիւններ են, բառեր, իսկ հոլովական վերջավորութիւնները՝ երկրորդական ձևութիւններ, մասնիկներ:

12 Ա. Աբրահամյան, *Եղած ձևեր*, էջ 259:

13 Հմմտ. Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցութիւնների իմաստային առումները*, Երևան, 1957, էջ 177:

Գրաբարի նախդիրներն ու նախադրություններն ունեն մի քանի ընդհանուր գծեր, որոնց հիման վրա միավորվում են մեկ խոսքի մասի մեջ: Այդ նմանությունների համաձայն գրաբարի քերականության պատմության մեջ դրանք ճանաչվել են որպես խոսքիմասային մեկ կարգ, մի ընդհանուր՝ նախդիր կամ նախադրություն անվամբ: Այնուհետև ըստ իրենց շարահյուսական հատկանշի դրանք բաժանվել են երկու խմբի՝ հոլովակերտ և հոլովառու բառերի: Հոլովակերտ բառերը նախդիրներն են, իսկ հոլովառու բառերը՝ նախադրությունները:

Ե՛վ նախդիրները, և՛ նախադրությունները հիմնականում արտահայտում են նման քերականական հարաբերություններ: Նախդիրների և նախադրությունների միջև եղած ընդհանրությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերի տակ:

1. Ի տարբերություն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի, նախդիրներն ու նախադրություններն արտահայտում են հարաբերական իմաստ: Բայց միաժամանակ զատվում են հարաբերական իմաստ արտահայտող մյուս խոսքի մասից՝ շաղկապից. առաջիններն այդ հարաբերությունը դրսևորում են բառերի միջև, իսկ շաղկապները՝ բացի բառերից, նաև նախադասությունների: Այնուհետև, եթե շաղկապներն արտահայտում են և՛ համադասական, և՛ ստորադասական հարաբերություններ, ապա նախադրությունները՝ միայն ստորադասական¹⁴ (տե՛ս նաև 5-րդ կետը):

2. Ի տարբերություն մյուս սպասարկու խոսքի մասերի, նախդիրներն ու նախադրությունները գրվելով որևէ հոլովածեի վրա՝ որոշում են նրա պաշտոնը նախադասության մեջ կամ նրան տալիս են լրացուցիչ իմաստներ:

3. Դրանք շփեցվող բառեր են, այսինքն՝ ոչ հոլովվում են և ոչ էլ խոնարհվում:

4. Իրենք չունեն հարաբերություններ, այլ արտահայտում են հոլովվող բառերի զանազան հարաբերություններ¹⁵, լրացնում են հոլովներին:

5. Նախդիրներն ու նախադրությունները չեն կարող ինքնուրույնաբար դառնալ նախադասության առդամ, այլ իրենց խնդրի հետ միասին լինում են նախադասության մեկ անդամ: Դրանով նրանք սահմանա-

¹⁴ Տե՛ս Ս. Արաճապյան, Ժամանակակից հայերենի շփեցվող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 143:

¹⁵ Տե՛ս Գ. Սեալ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա., Երևան, 1939, էջ 134:

զատվում են նաև մյուս շթերվող խոսքի մասերից (բացառյալ մակ-բայները)՝ շաղկապներից, ձայնարկություններից և եղանակավորող բառերից, որովհետև վերջին երեքը նախադասության անդամ չեն լի-նում:

6. Ինչպես նախդիրները, այնպես էլ նախադրությունները (սակավ բացառությամբ) նախադաս դիրք են ունենում, որի հիման վրա էլ ստացել են իրենց անվանումը:

Սակայն նախդիրներն ու նախադրությունները նաև տարբերվում են իրարից, նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ գծե-րը: Նախդիրների (առ, զ, ի(յ), ց, ընդ, ըստ) բնորոշ գծերը, որոնցով նրանք սահմանադատվում են նախադրություններից, հետևյալներն են¹⁶, նախդիրները՝

ա) կորցրել են իրենց բառական իմաստը և պահպանել են քերա-կանական արժեքը, որն էլ, սակայն, դրսևորվում է բառերի կապակ-ցությունների մեջ.

բ) հոլովվող բառին տալիս են հոլովական նշանակություն.

գ) ունեն նախադաս գործածություն.

դ) հավասարապես կարող են արտահայտել խնդրային և պարա-գայական հարաբերություններ.

ե) դրվում են միայն թեք հոլովաձևերի վրա.

զ) կազմությամբ միավանկ արմատական ձևություններ են.

է) շատ հին ժամանակներից հանդես են եկել ածանցական դերով (առուել, ըն(դ)կեր, զառամ, ընդունել, յաջող, ցանկ և այլն).

ը) մի նախդիր կարող է գործածվել մի քանի թեք հոլովների հետ, բացի ց-ից, որը գործածվում է միայն հայցականի հետ:

Իսկ նախադրություններն էլ ունեն իրենց յուրահատկություննե-րը¹⁷, ի տարբերություն նախդիրների, նախադրությունների՝

ա) հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանել են իրենց բառական անկախությունը, այսինքն՝ ունեն բառական ար-ժեք.

բ) պահանջում են պատրաստի որևէ հոլովաձև.

գ) հիմնականում գործածվում են նախադաս, բայց կան նաև այնպիսիները, որոնք գործածվում են ետադաս.

դ) մեծ մասամբ արտահայտում են պարագայական հարաբերու-թյուններ.

16 Տճ՝ Ա. Արաքսյան, նշվ. ձեռնարկը, էջ 260—261:

17 Նույն տեղում, էջ 298—299:

է) ընդհանրապես դրվում են թեք հոլովաձևերի վրա, բայց կան նաև մի քանի նախադրություններ, ինչպես՝ իբր, իբրև, որպէս և այլն, որոնք կարող են գործածվել նաև ուղղականի հետ.

զ) ծագում են նյութական խոսքի մասերից՝ գոյականից, ածականից և մակբայից: Ըստ որում, եթե նախդիրները կայուն կազմ ունենան արդեն իսկ դասական գրաբարի շրջանում (նշանակում է՝ նրանց կազմավորումն ավարտվել էր դեռ նախագրաբարյան դարերում), ապա նախադրությունները շարունակ ապրում էին կազմավորման պրոցես. գրաբարը համարվում էր նորանոր նախադրություններով, ինչպես՝ ի ձեռն, ի միջոց, ի միջոցի, ի տեղի, չափ, պատճառաւ, ի պատճառս, պատճառաւոք, ի պէտս, յերեսաց և այլն (հմմտ. «Ի ձեռն տայր նմա դանձն ամենայն գաւառովն իւրով»-Կոր., էջ 74: «Իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ նորա լինէր, ի ձեռն գաւազանին գործէր զմեծամեծ սբանշիւսն»-Յդ., էջ 107: «Հարկ է ի պատճառս շարեացն գալ և ցուցանել՝ թէ... չէ պատճառ շարեաց Աստուած»-Յզն., էջ 25: «Որ հայի ի կին մարդ ի պատճառս ցանկութեան՝ անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում»-Փար., էջ 191): Տե՛ս նաև Ը կետը.

է) ածանցական դեր չունեն.

ը) մի նախադրություն սովորաբար կարող է գործածվել մեկ հոլովի հետ:

Վերոհիշյալ առանձնահատկությունների հիման վրա սահմանենք «նախդիր» և «նախադրություն» հասկացությունները:

Այն բառ-մասնիկները, որոնք հոլովական կապակցություններից դուրս չունեն բառական իմաստ, բայց, դրվելով հոլովվող բառերի թեք հոլովաձևերի վրա, նրանց տալիս են հոլովի որոշակի նշանակություն կամ լրացուցիչ այլ իմաստներ, կոչվում են նախդիր:

Այն անփոփոխ բառերը, որոնք հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանում են իրենց բառական ընդհանուր իմաստը և, զբր-վելով թեք հոլովաձևերի վրա, արտահայտում են վերաբերական զանազան հարաբերություններ ու տվյալ բառը (նախադրության խնդիրը) կապում լրացյալին (հիմնականում բային), կոչվում են նախադրություն:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ
ԱՂԵՐՍԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադրություններն ու որպես նախադրություն գործածվող բառերը լեզվական տարբեր մակարդակներում առնչվում են ինչպես նյութա-

կան, այնպես էլ ձևական խոսքի մասերին, մասնավորապես՝ գոյական-
նին, ածականին, մակբային, շաղկապին:

Դոյականի մի քանի հոլովածներ ու այլ կազմութիւններ, ինչպես՝
ի քիկունս, ի քիկանց, գրիկամբք, ի կողմն, ի կոյս, ի կողմանս, ի
պատճառս, պատճառաւ, ի պէտս, ի տեղի, յերեսաց, ի յիշատակ, հե-
նուկս, շափ, զօրէն, զօրէնս և այլն, շախհոյսական-կիրառական մա-
կարդակում կարող են հանդես գալ նաև որպէս նախադրութիւն՝ խնդիր
ընդունելով տարբեր հոլովներով: Օրինակներ. «Ամենեքեան ընդ նմա
անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի» (Թ. Ա., էջ 224): «Եւ ի
սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց
Զրադաշտի ի Հայս» (Խոր., էջ 56): «Եւ գոթ տուեալ յանձնիր որջարա-
նաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս
խաղացման ծննդոցն» (Թ. Ա., էջ 414): Ընդգծված բառերը գործածվել
են որպէս նախադրութիւն և ոչ թի գոյական են, որովհետև արտահայ-
տում են քերականական այլևայլ հարաբերութիւններ և անկախ ձևով
նախադասութեան անդամ չեն դառնում, այլ իրենց խնդիրների հետ
միասին լինում են նախադասութեան մեկ անդամ՝ պատասխանելով
մեկ հարցի: Այսպես, օրինակ, «Եւ ինքն խաղացեալ գնայր ի կողմն
ամրոցի իւրոյ» (Ղեւոնդ, էջ 140) նախադասութեան մեջ ի կողմն կազ-
մութիւնը գործածվել է իբրև նախադրութիւն. ցույց է տալիս ուղղու-
թիւն՝ «դեպի» նշանակութեամբ, և իր խնդրի (ամրոցի) հետ միասին
լինում է տեղի պարագա, պատասխանելով յո՞հարցին:

Շարահոյսական մակարդակում նախադրութիւններն առնչվում են
նաև ածականներին: Որոշ ածականներ կարող են գործածվել նաև որ-
պէս նախադրութիւն, ինչպես՝ ընդհատ, կից, հակառակ, համաձայն,
համեմատ, հանգոյն, հաւասար, հուպ, մերձ, միաբան, նման և այլն:
Օրինակներ. «Որ համեմատ նմա այլ ոչ գտանէր» (Բուզ., էջ 43): «Որ-
պէս Եգիպտացիք թուեն հաւասար Մովսիսի՝ Հեփեստոս, Արեգակն,
Կոռնոս» (Խոր., էջ 27): «Եւ ոչ ինչ ընդհատ յայցս պատուոց տայ դայե-
կին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն և ի կարմիր
կօշկէ» (Ն. տ., էջ 174): «Մարտիրոսանալ դատերն արքայի Սանդըխ-
տոյ հուպ ի ճանապարհն» (Ն. տ., էջ 157):

Նախադրութիւններն ու որպէս նախադրութիւն գործածվող բառե-
րը ամենից շատ առնչվում են մակբայներին: Եվ այս հանգամանքն էլ
ստիպել է շատ քերականներին, որպէսզի նրանք անդրադառնան այդ
խնդրին: Հայ քերականներ Պաղտասար Դպիրը, Ա. Այտընյանը, Վ.
Զալքիսյանը և ուրիշներ իրենց աշխատութիւններում շոշափել են նա-
խադրութիւնների և մակբայների փոխհարաբերութեան հարցը: Այտըն-

յանի մոտ կարողում ենք. «Միենույն անփոփոխ մասնբանի հոլով առած՝ նախադրություն է, իսկ բայի վրա՝ մակբայ է, ինչպես՝ Շուրջ զնովաւ և շուրջ գալ»¹⁸: Նույն տեղում նա նշում է, որ կան մի քանի բուն մակբայներ, որոնք խնդիր ընդունելիս դառնում են նախադրություն (իհարկե, ավելի ճիշտ կլինեիր ասել՝ գործածվում են իբրև նախադրություն), ինչպես՝ յետուստ (յետուստ խորանին), յետոյ (յետոյ նորա կայր), ի՛ վերոյ (ի վերոյ երկնից), ի ներքուստ (ի ներքուստ ձեռնին), յայսկոյս (յայսկոյս գետոյն), արտաքոյ (արտաքոյ այգւոյն), ակամայ (ակամայ Մովսիսի), մեկուսի (մեկուսի յամբոխէն), զանխով (զանխով ի Մանուէլէ) և այլն¹⁹:

Այս տեսակետին հանդիպում ենք նաև Պաղտասար Դպիրի և Վ. Զաւրիյանի քերականություններում²⁰:

Հետագայում այս խնդիրը նույն ձևով է լուծում նաև ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը: Նա գրում է. «Եթե շլինի այդ խնդիրը (նախադրության խնդիրը—Գ. Թ.) և նախադրությունը խնքնին կապվի բային, կը դառնա մակբայ: Այսպես, եթե ասենք՝ նա առաջ անցավ, առաջ բառը մակբայ է դառնում»²¹:

Շարահյուսական մակարդակում նախադրություններն առնչվում են նաև շաղկապներին: Դրանք երկուսն էլ արտահայտում են նման քերականական հարաբերություններ: Նախադրություններն այդ հարաբերությունները դրսևորում են բառերի միջև, իսկ շաղկապները՝ նաև նախադասությունների, ինչպես՝

Նա շոգաւ ի գիւղն, զի տեսցէ զեղբայր իւր:

Նա շոգաւ ի գիւղն վասն տեսանելոյ զեղբայր իւր:

Առաջին նախադասության մեջ զի շաղկապը արտահայտում է նրպատեալային այնպիսի հարաբերություն, ինչպիսին արտահայտում է վասն նախադասությունը երկրորդ նախադասությունում: Բացի դրանից, եթե նախադրություններն արտահայտում են միայն ստորադասական հարաբերություն, ապա շաղկապները՝ նաև համադասական, ինչպես՝ «Որք վասն նորա սիրոյն և զկեանս աշխարհիս արհամարհեցին» (Յզն., էջ 240): «Այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիւն նոցա և զյօրինիչ, զի մեզ ի պէտս են» (Ն. տ., էջ 14): «Անդ էր այնուհետև շարքենալ գինով, այլ առաւելով հոգով» (Կոր., էջ 82): Այս օրինակներում վասն նախադրությունը արտահայտում է ստորա-

18 Ա. Այտրեյան, Քննական քերականութիւն..., էջ 471:

19 Նույն տեղում:

20 Պաղտասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան..., էջ 182—186, Վ. Զաւրիյան, Քերականութիւն..., էջ 453:

21 Հ. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, էջ 61:

դասական, և, այլ շաղկապները՝ համադասական, իսկ զի-ն՝ ստորագասական հարաբերություն:

Նախդիրների, մակբայների և շաղկապների առնչության հարցը քննել են ռուս և օտար շատ լեզվաբաններ, որոնք դարգացնում են տարբեր տեսակետներ: Լեզվաբան Մ. Դ. Ստեպանովան տվյալ հարցը ստուգաբանական կտրվածքով քննում է գերմաներեն լեզվում: Նա նշում է, որ մակբայներից առաջանում են նախդիրներ և շաղկապներ, որոնք կարող են առաջանալ նաև այլ խոսքի մասերից, բայց անցումը սպասարկու բառերի շարքն անմիջականորեն չի կատարվում, այլ մակբայների վրայով²²:

Այս խնդրի մասին բոլորովին այլ տեսակետի է ռուս մեծ լեզվաբան, ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովը: Նա նախդիրներն ու շաղկապները համարում է խոսքի մասնիկներ (частицы) և առաջարկում է դրանք հանել խոսքի մասերի շարքից²³:

Իսկ դանիացի լեզվաբան Օ. Նապերսենը, նախդիրներից և շաղկապներից բացի, մասնիկների մեջ է մտցնում նաև մակբայներն ու ձայնարկությունները²⁴:

Հայ լեզվաբանության պատմության մեջ նման տեսակետի հանդիպում ենք Գ. Ղափանցյանի աշխատություններում: Շաղկապները, նախդիր-հետդիրները, կապական բառերը, եղանակիչ բառերը և այլևայլ բառ-մասնիկներ նա համարում է ձևական մասնիկներ²⁵:

Որպես եզրակացություն կարող ենք նշել, որ նմանությամբ հանդերձ՝ նախադրություններն ու մակբայները կամ նախադրություններն ու շաղկապները ունեն նաև մեծ տարբերություններ, որոնց հիման վրա առանձնացվում են որպես տարբեր, ինքնուրույն խոսքի մասեր:

Մի շարք բառեր դեռևս դասական գրաբարում վերածվել էին համանունության, այսինքն՝ նույն հնչյունախմբով կազմված այդ բառերը դեռ այն ժամանակ դարձել էին անկախ բառական միավորներ և պատկանում էին տարբեր խոսքի մասերի: Այսպես, օրինակ, իբր, իբրև, իբրու բառերը գրաբարում գործածվում են որպես նախադրություն, մակբայ, շաղկապ, շատ հազվադեպ՝ նաև որպես եղանակավորող բառ: Յուրաքանչյուր խոսքի մասի վերաբերյալ համապատասխանաբար բերենք մեկական օրինակ: «Շրջէր խրատէր և ուռուցաւէր զեկեղեցիս Հայոց ընդ ամենայն տեղիս իբրև զիւր վարդապետն զներսէս» (Բուզ., էջ 92):

22 Տե՛ս Մ. Դ. Степанова, Словообразование современного немецкого языка, М., 1953, էջ 342—343:

23 Տե՛ս В. В. Виноградов, Русский язык (грамматическое учение о слове), М.—Л., 1947, էջ 663:

24 О. Есперсен, Философия грамматики, М., 1958, стр. 96—100.

25 Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939, էջ 196—197:

«Եւ իբրեւ առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգևս արանցն քաջացն» (ն. տ., էջ 16): «Իբրեւ ոչ եթէ զամուսնութիւնն ինչ աղտեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսլենէն՝ զոր ետես» (ն. տ., էջ 10): «Երանի իցէ յայնմ, որ հաւատայ յիս՝ իբրեւ ոչ իցէ նորա տեսանել զիս» (Խոր., էջ 150):

Մինչ և մինչև բառերը գործածվում են իբրեւ նախադրություն, մակբայ և շաղկապ: Օրինակներ. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի վախճան աշխարհի» (Ագաթ., էջ 51): «Ասէ. մինչ տղայն էի, իբրեւ զտղայ խորհէի» (Եզն., էջ 231): «Զամենայն թշնամանս յաճախեցեր, մինչ իշխեցեր Վս մեզ ասել անասունս» (Ագաթ., էջ 38):

Բայց և բայց միայն կաղմությունները գործածվում են որպէս նախադրություն և շաղկապ: Օրինակներ. «Թագաւորն Տրդատ յայնժամ դեռ ևս էր յամենայն կերպարանս խոզի, բայց միայն ի մարդկապէսն խօսելոյ» (Ագաթ., էջ 396): «Ոչ այլ ինչ ամենեկն՝ որ ինչ ի պէտս մարդկան լինիցի. բայց միայն քար և աւաղ ապառաժ» (Բուղ., էջ 77):

Որպէս բառը գործածվում է դերանվան, նախադրության, շաղկապի և մակբայի դերում, ինչպես՝ «Որպէս թագաւորութեանն չէ աստղն պատճառ նոյնպէս և ոչ զօրութեանն» (Եզն., էջ 160): «Իջցեն որպէս զվէմս ի ջուրս բազումս» (Ագաթ., էջ 41): «Զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ի շաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն» (Եզն., էջ 119): «Ունիմք և ...զընորհապատում գրեալսն, եթէ որպէս մեծարեալք ի միմեանց» (Կոր., էջ 34):

Քան բառը գործածվում է որպէս նախադրություն և շաղկապ: Օրինակներ. «Այլ ինչ էր անջրպետ՝ ընդ մէջ երկոցուն մեծ քան զերկոսին» (Եզն., էջ 23): «Լաւ էր լեալ՝ թէ նոյնպիսի կացեալ էր անհեղեղ և անարգասաւոր, քան զալ յարգասիսն և ի կերպարանս, և լինել պատճառ շարեաց այլոց» (ն. տ., էջ 29):

Զառաջեալ բառը հանդես է գալիս որպէս նախադրություն և մակբայ: Օրինակներ. «Եմուտ մայրն նորա նստաւ զառաջեալ նորա՝ իւր որդւոյն» (Բուղ., էջ 132): «Զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեալ» (ն. տ., էջ 173):

Ընդդէմ բառը գործածվում է նախադրության, ածականի և մակբայի արժեքով: Օրինակներ. «Ապա քառասուն հազարաւ երանէր Վասակ զօրաւարն ընդդէմ նոցա» (Բուղ., էջ 125): «Զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց» (ն. տ., էջ 206): «Իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի, հի՛մ գաս, մի՛ գար ի ներքս» (ն. տ., էջ 28):

Թող բառը գործածվում է որպէս բայ (հրամայական եղանակի), նախադրություն և եղանակավորող բառ: Օրինակներ. «Թող զխորհուրդս և զբանս՝ որ սնոտիս ընթանան» (Եզն., էջ 305): «Ապա մկրտէր

իբրեւ հաղարս երկուս. քող ղկանայս իւրեանց և զմանկտի» (Բուզ., էջ 8): «Ասէին՝ քող ընդ նոսա պայքար յանդիմանութեան հակառակութեան լիցի, արբայ» (Բուզ., էջ 81):

Չափ բառը գործածվում է իբրեւ գոյական և նախադրություն, ինչպես՝ «Եւ ի շափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ և անդամովք յաղթ» (Խոր., էջ 162): «Պարտ է կրօնաւորին արեամբ շափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց» (Եղն., էջ 310):

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ քննարկված բոլոր բառերը դեռևս դասական գրաբարում իսկ տարբերակվել էին որպես առանձին խոսքի մասերին պատկանող բառեր, այսինքն՝ հանդես էին գալիս որպես համանուն բառեր:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Պատմահամեմատական լեզվաբանությունն ապացուցել է, որ նախադրություններն ու մակբայներն առաջացել են հիմք լեզվի գոյականների տարբեր հոլովաձևերից¹: Դա նշանակում է, որ լեզվի զարգացման ընթացքում գոյականի զանազան հոլովաձևեր, զրկվելով իրենց նյութական իմաստից, ձեռք են բերել չթեքվող խոսքի մասի իմաստ և այդպիսով վերածվել մակբայի կամ նախադրության: Մինչդեռ քերական Վ. Չալրիսյանը նախադրություններին վերագրել է հոլովվելու հատկանիշ: Նա գրում է. «Տեղական նախադրություններին ոմանք կը հոլովին»²: Ակադ. Հ. Աճառյանը շնայած իր գրքում ունի «նախադրությունների հոլովումը» գլուխը, սակայն նախադրությունները հոլովվող բառեր չի համարում: Դրանում համոզվելու համար վերցնենք նրա հետևյալ միտքը: Խոսելով ի միջի, ի միջոյ, յետոյ, ի վերայ և այլ նախադրությունների մասին, նա գրում է. «...սրանք ո՛չ թե նախադրություններ են, որ հոլովվել են, այլ գոյականներ, որոնք այսինչ կամ այնինչ հոլովյալ ձևի տակ նախադրություն են դարձել»³: Ինչպես արդեն ասվեց, նախադրությունները ոչ թե հոլովվում են, այլ տարբեր հոլովաձևերի քարացած ձևերն են:

1 Հ. Աճառյան, նշվ. հատորը, էջ 61:

2 Վ. Չալրիսյան, Քերականութիւն..., էջ 148:

3 Հ. Աճառյան, նշվ. հատորը, էջ 181:

Հայտնի է, որ բազմիմաստ բառերը, բացի իրենց հիմնական իմաստից, ունենում են նաև երկրորդական, ածանցյալ իմաստներ: Խոսքի մասերի փոխանցման ժամանակ ածանցյալ իմաստն աստիճանաբար ակտիվանում է, իսկ հիմնական իմաստը՝ թուլանում: Ահա այս ճանապարհով տվյալ բառն անցնում է նոր խոսքի մասի կարգը: Այս նույն բանը տեղի է ունենում նաև այն բոլոր գոյականների հետ, որոնք վերածվում են մակբայի կամ նախադրության: Օրինակի համար վերցնենք գրաբարի աղագաւ կամ յաղագս նախադրությունները:

Դրանք ծագել են աղագ («ճանապարհ») բառից, որը երկրորդաբար նշանակել է «միջոց», «հնար»⁴:

Հնգվի դարգացման ընթացքում այս գոյականի եզակի դործիականը՝ աղագաւ («պատճառով», «համար») և հոգնակի հայցականը (ի նախդրի հետ)՝ յաղագս («համար» իմաստով), գործածվել են նաև որպես նախադրություն: Աստիճանաբար այդ բառը զրկվել է իր բուն նյութական իմաստից և ձեռք բերել սպասարկու բառի հատկանիշ ու վերածվել է նախադրության: Ահա այս ճանապարհով էլ առաջացել են մյուս այն նախադրությունները, որոնք սերվում են գոյականներից:

Կապերի առաջացման ընթացքը նույնն է նաև այլ լեզուներում, օրինակ, ռուսերենում, գերմաներենում և այլն: Ռուս լեզվաբան Ա. Մ. Պեշկովսկին ցույց է տալիս, որ սպասարկու բառերն առաջանում են հիմնական խոսքի մասերից, իսկ անցումը հիմնականում կատարվում է մակբայի միջոցով, օրինակ՝ край գոյականի նախդրային (предложный) հոլովից առաջացել է кроме մակբայը, իսկ սրանից էլ՝ кроме կապը: Այսպես էլ внутри, среди և այլ բառերի անցումը կապի նույնպես կատարվել է նույն ուղիով, այսինքն՝ գոյական—մակբայ—նախդիր: Պեշկովսկին միաժամանակ նշում է, որ ռուսերենում դեռևս շատ մակբայներ գործածվում են մերթ որպես մակբայ, մերթ որպես նախդիր, ինչպես՝

Ядро лежит внутри // ядро лежит внутри ореха.

Я приеду после // я приеду после обеда⁵.

Այս երևույթը նույն ձևով է տեղի ունենում նաև մյուս լեզուներում: Ռուս լեզվաբան Մ. Դ. Ստեպանովան գրում է, որ գերմաներենում

⁴ Տե՛ս Զ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1926, էջ 111—113, Ս. Մախառյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, էջ 36: (Վերջին իմաստով գործածված է, օրինակ, Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» գրքում. «Թերևս երկպառիկ ելի աղագս գտանել կարացնեն» (էջ 4):

⁵ А. М. Пешиковский, Русский синтаксис в научном освещении, М., 1938, стр. 157—158.

սպասարկու բառերն առաջանում են ինքնուրույն խոսքի մասերից՝ մակ-բայից, գոյականից, ածականից, դերբայից, նախդրավոր կապակցու-թյուններից⁶:

Հին հայերենում էլ կազմավորման տեսակետից նախադրություննե-րի միջև մեծ տարբերություններ կային: V դարում արդեն տվյալ բառե-րի մեծ մասն ամբողջությամբ վերածվել էր նախադրության, մյուս մասը գտնվում էր փոխանցման պրոցեսում, իսկ որոշ բառեր էլ նոր-նոր էին սկսում գործածվել նաև իբրև նախադրություն:

Գրաբարի նախադրությունները ըստ առաջացման աստիճանի կա-րելի է բաժանել երեք խմբի. ա) բառեր, որոնք կազմում են նախադրու-թյուն խոսքի մասի համակարգը, բ) գոյականներ, մակբայներ, ածա-կաններ, որոնք կիրառվում են նաև իբրև նախադրություն, գ) գոյակա-նի մի քանի հոլովաձևեր, որոնք նոր են սկսում գործածվել նախադրու-թյան դերում:

Առաջին խմբի մեջ մտնում են՝ աղագաւ, յաղագս, առանց, զա-ռաջեալ, առընթեր, արտաքոյ, բաց, բայց, գունակ, յանդիման, դէմ յանդիման, դէպ, գկնի, գհեռ, ընդ դէմ (ընդդէմ), իբր, իբրև, իբրու, հանդերձ, հանդէպ, ի հետէ, ի ձեռն, մինչ, մինչև, յետ, ներքոյ, շուրջ, որպէս, պէս, սակս, ի սակս, վասն, ի վերայ, ի վերոյ, փոխանակ, փո-խաբէն, քան և այլն: Սրանք ավելի վաղ են վերածվել նախադրության և V դարի մատենագրության մեջ հիմնականում գործածվում են նա-խադրության արժեքով: Բայց սրանց մեջ կան նաև այնպիսի բառեր, որոնք միաժամանակ կիրառվել են նաև ուրիշ խոսքի մասի արժեքով: Այսպես, օրինակ, իբրև-ը գործածվել է որպես նախադրություն, մակ-բայ, շաղկապ և եղանակավորող բառ, զառաջեալ-ը՝ իբրև մակբայ, նախադրություն և այլն: Նման դեպքերում մենք դորժ ունենք համա-նունություն հետ և ոչ թե բառի բազմիմաստություն:

Երկրորդ խմբին պատկանում են գոյականի տարբեր հոլովաձևեր, ածականներ և մակբայներ, որոնք կիրառվում են նաև իբրև նախա-դրություն: Սրանք նախորդներից տարբերվում են նրանով, որ իրենց խոսքիմասային հիմնական ու սկզբնական արժեքով մտնում են գոյա-կանի, ածականի կամ մակբայի մեջ: Դրանք են՝ ի բացեայ, բացագոյն, գաղտ, ի դէմս, յերեսաց, զատ, ընդ աջմէ, ընդ առաջ, ի թիկունս, ի թիկանց, զթիկամբք, թող, լու ի լու, կից, ի կողմն, ի կողմանս, ընդ կողմն, զկողմամբ, յայնկոյս, յայսկոյս, հակառակ, համաձայն, հաւա-սաւ, հեճուկս, հեռի, հուպ, ընդ ձեռն, ընդ ձեռամբ, ի ձեռս, ի ձեռանէ, ի ձեռաց, մեկուսի, մերձ, մերկ, միաբան, ի միջոց, ի միջոցի, մօտ, յետոյ, յետուստ, ի ներքսագոյն, ի ներքուստ, նման, ուրիշ, ուրոյն,

⁶ М. Д. Степанова, *Узл. азбука*, стр. 344—348.

շափ, պատճառաւ, ի պատճառս, պատճառանօք, ի պէտս, ի ստորեւ, ի վերուստ, ի տեղի, զօրէն, զօրէնս և այլն: Սրանք իբրեւ նախադրութիւն գործածվում են տարբեր հաճախականութեամբ. ավելի հաճախ հանդիպում ենք ընդ առաջ, յայնկոյս, յայսկոյս, յերեսաց, հակառակ, հաւասար, նման, պատճառաւ, ի պատճառս, զօրէն բառերին, իսկ մյուսները որպէս նախադրութիւն ավելի քիչ են գործածվում:

Սրորորդ խմբի մեջ մտնող բառերը գոյականի մի քանի հոլովաձեւեր են, որոնք դասական շրջանի մատենագրութեան մեջ նոր-նոր են սկսում գործածվել նախադրութեան դերում: Այդպիսի բառերից են՝ մասամբ, շնորհիւ, ի պատիւ, ի փառս, ի յիշատակ, յօգուտ, օրինակ, զօրինակ և այլն:

Վերջին երկու խմբերին պատկանող բառերը նախադրութիւն են այն ժամանակ, երբ դրվում են որեւէ հոլոված բառի (նախադրութեան խնդրի) վրա և նրա հետ միասին լինում են նախադասութեան մեկ անդամ՝ արտահայտելով քերականական դանաղան հարաբերութիւններ:

Ստորեւ կանգ կառնենք յուրաքանչյուր նախադրութեան և որպէս այդպիսին գործածվող բառերի առաջացման վրա:

Առանց. այս նախադրութիւնը առաջացել է անց («անցնելը», «ճանապարհ», «նեղութիւն», «դիպված», «վիժված») բառի⁷ եղակի հայցականից և առ նախդրից, այսինքն՝ առ անց-առանց՝ «անցումով», «անցնելով» նշանակութեամբ: Իսկ առ-ը, ինչպէս հայտնի է, գալիս է par-նախաձեւից, որի բունն է pera («առաջի») բառը⁸:

Առաջ բառի առանձին հոլովաձեւերով և ընդ ու գ նախդիրների հավելմամբ կազմվել են առաջի, ընդ առաջ, զառաջեաւ, զառաջեւ, զառաջեօք նախադրութիւնները: Այս բոլոր բառերի հիմքում ընկած է աջ («աջ», «աջ կողմը») բառը, որն ունեցել է տեղի նշանակութիւն⁹:

Ընդ-ը ծագել է հիմք լեզվի anti ձեւից, որը ant («երես», «ճակատ») բառի ներդոյականն է: Հայերենում նախապէս եղել է անդ, որը, երբ սկսել է գործածվել իբրեւ սպասարկու բառ, զրկվել է շեշտից և դարձել ընդ¹⁰:

Այս ընդ նախդրով և մի քանի այլ բառերով կազմվել են ընդ առաջ, ընդ դէմ, ընդհատ, ընդ ձեռն, ընդ ձեռամբ, առընթեր նախադրութիւններն ու իբրեւ նախադրութիւն գործածվող բառերը:

7 Ա. Անտոյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 380—383:

8 Նույն տեղում, էջ 481:

9 Նույն տեղում, էջ 274—278: Իսկ «Նոր հայկադյան բառարան»-ը (տե՛ս հ. 1, վե-նետիկ, 1836, էջ 289) առաջի բառի ծագումը դնում է ալջ, ակն բառից, որի հետ լի կա-րելի համաձայնել, քանի որ շ-ն ջ-ի չէր կարող վերածվել:

10 Ա. Անտոյան, Հայերեն արմ. բառարան, հ. 2, էջ 1035:

Առընթեր նախադրությունը ծագել է քերարմատից և կրկնակի նախդիրներից: Թեք նշանակել է «մոտը», «կողքը», «կողքին», «կից»: Սկզբում եղել է առ ընդ քեր, այնուհետև՝ առ ընդքեր, որտեղ ք-ի ազդեցության տակ դ-ն դուրս է ընկել, և ստացվել է առընթեր, որին գրաբարում հանդիպում ենք կից և անշատ գրություններ:

Արտաբոյ նախադրությունը ծագել է արտ («հանդ», «դուրս») արմատից և -աբ մասնիկից, այսինքն՝ նախ կազմվել է արտաբ գոյականը, որի սեռականի արտաբոյ ձևը դարձել է նախադրություն: Այս արմատից է նաև արտաբա ֆան բաղադրյալ նախադրությունը:

Անել արմատից, որն անկախ գործածություն չունի, առաջացել են մի քանի բառեր, որոնց թվում նաև՝ անելի ֆան և առանել ֆան հարադրական նախադրությունները: Այս արմատը, չ. Աճառյանի օտուզաբանմամբ, բնիկ հայկական բառ է՝ հիմք լեզվի obhel ձևից, որն ունեցել է «մեծացնել», «ավելացնել», «շատացնել», «աճեցնել», «ուռեցնել» իմաստները¹¹:

Բանալ բայի հիմքից ծագել են բաց և բայց նախադրությունները, որոնցից հետագայում առաջացել է բացի կապը:

Բաց արմատից սերվում են նաև ի բացեայ և բացագոյն բառերը, որոնցից առաջինը, ստուգաբանորեն, բացի ձևի բացառական հոլովն է, իսկ բացագոյնը՝ բաց ածականի բաղդատական աստիճանը:

Գեք արմատը ծագել է հիմք լեզվի uer ձևից, որը նշանակել է «բարձրանալ»¹²: Սրանով կազմվել են մի քանի հարադրական բարդություններ, ինչպես՝ գեք ի վերոյ, գեք ի վերոյ ֆան, գեք ֆան, որոնք գործածվում են որպես նախադրություն:

Դէմ-ը պահլավական փոխառություն է, որը նշանակում է «երես», «կերպարանք», «առարկայի առջևի կողմը», «դեպի», «դեմ»: Այս գոյականի եզակի հայցականը (ընդ նախդրի հետ)՝ ընդ դէմ, հոգնակի հայցականը (ի նախդրի հետ)՝ ի դէմս, բացառականը՝ ի դիմաց, հանդես են գալիս նաև իբրև նախադրություն:

Յանդիման բառը փոխառություն է պահլավական andeman ձևից, որի արմատը, ըստ Աճառյանի, պահլավական dem-ն է¹³: Դէմ բառը հավելադրվելով յանդիման և ընդդէմ նախադրություններին՝ կազմել է դէմ յանդիման և դէմ ընդդէմ հարադրական բարդությունները:

Դէմ բառի իմաստին մոտ իմաստ է արտահայտում դէպ-ը, որի ստուգաբանությունը հայտնի չէ: Դէպ նշանակում է «դեպի», «դեպի այն

¹¹ Նույն տեղում, հ. 1, էջ 807:

¹² Նույն տեղում, հ. 2, էջ 142:

¹³ Նույն տեղում, հ. 4, էջ 1241: Իսկ «Նոր հայկազյան բառարան»-ը բառիս ծագումը դնում է դէմ բառից (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 324):

կողմը: Սկսած Ղազար Փարպեցուց գործածվել է դեպ ի կազմութեամբ, որից էլ առաջացել է աշխարհաբարի դեպի կապը:

Դէպ արմատից հան-նախածանցի միջոցով կազմվել է հանդէպ նախադրութիւնը:

Զ նախդրով և որեւէ այլ արմատով կամ բառով կազմվել են զատ, զկնի, զհետ, զանխով, զառաջեալ, զօրէն, զօրինակ նախադրութիւններն ու որպէս նախադրութիւն գործածվող բառերը:

Հ. Աճառյանը ենթադրում է, որ այդ զ-ն պետք է ծագած լինի հիմք լեզվի ց'ի-ից, որը հայերենում նախ տվել է ձ: Բաղաձայնից առաջ ձ-ն վերածվել է զ-ի: Հետագայում այս երևույթը ընդհանրացել է, և զ-ն դրվել է նաև ձայնավորով սկսվող բառերից առաջ¹⁴:

Զատ նախադրութիւնն առաջացել է հատանել բայի հատ արմատից (զ նախդրով), որի հ-ն ընկել է՝ զհատ-զատ:

Հատ արմատից ընդ նախդրի միջոցով կազմվել է ընդհատ բառը, որը գործածվում է նաև իբրև նախադրութիւն:

Կինք գոյականը նշանակել է «ոտքի ներքան», «հետք»: Սրա կին արմատից (որն անկախ գործածութիւն չունի) դրամիոնութեամբ առաջացել է կնի բառը, որից էլ (զ նախդրով)՝ զկնի նախադրութիւնը:

Հետ գոյականի եզակի հայցականից (զ նախդրի հետ) առաջացել է զհետ նախադրութիւնը: Հետ բառի գլխավոր նշանակութիւնն է «ոտք»: Այն նշանակել է նաև «հետք», «ճանապարհ», «ետևից», «հետո», «հետ», «միասին» և այլն: Աստիճանաբար թուլացել է տվյալ բառի գլխավոր իմաստը, և դրա փոխարեն ակտիվացել են երկրորդական իմաստները, որի հիման վրա էլ այն վերածվել է նախադրութիւն:

Պրոֆ. Աճառյանը նշում է, որ հետ-ը ծագել է հնդեվրոպական pedo ձևից¹⁵:

Հետ արմատի մի տարբերակն է յետ նախադրութիւնը: Այս յետ բառից են ծագել յետոյ և յետուստ որպէս նախադրութիւն գործածվող բառերը:

Խով նշանակում է «խով», «ականջը չսող»: Այս արմատից ան-ժխտական նախածանցով և զ նախդրով կազմվել է զանխով բառը, որն ունի «ծածուկ», «գաղտնի», «լռիկ» իմաստները: Այն գործածվել է իբրև ծածական, գոյական, մակբայ և նախադրութիւն:

Իբր բառն արդի լեզվամտածողութեամբ դիտվում է իբրև պարզ բառ: Բայց այն բարդ բառ է, կազմված է ի («ինչ») և բար («բարք», «եղանակ») բաղադրիչներից և նշանակում է «որպես», «ինչպես», «պէս», «երբ»: Բառս եղել է գոյական և հոլովվել է, որի եզակի սեռա-

14 Հ. Աճառյան, Հայերեն արմ. բառարան, հ. 2, էջ 881—882:

15 Նույն տեղում, հ. 5, էջ 286:

կանը, հայցականը և գործիականը (իբրու, իբր, իբրեւ) գործածվել են որպես մակբայ, նախադրություն, շաղկապ, հաղվադեպ՝ եղանակավորող բառ:

Լիս արմատի մի ձայնդարձն է լու-ն, որի կրկնությունը և ի-ով առաջացել է լու ի լու կազմությունը, որը հանդես է գալիս որպես մակբայ և նախադրություն:

Համար բառը փոխառություն է պահլավական hamar ձևից: Դրա հիմնական նշանակությունն է «հաշիվ», «թիվ», «չափ» և այլն, իսկ երկրորդական նշանակությունները՝ «համար», «պատճառով»¹⁶: Այս բառի եզակի հայցականից (ի նախդրի հետ) հայերենում կազմվել է ի համար նախադրությունը, որի հնագույն գործածությունը հանդիպում ենք Մ. Խորենացու գրքում (երեք անգամ):

Այս նախադրությունից է առաջացել աշխարհաբարի համար կապը:

Պահլավական փոխառություն է նաև հանգոյն նախադրությունը, որը նշանակում է «նման», «պես» և այլն:

Հետաքրքիր կազմություն ունի հանդերձ նախադրությունը, որը բաղադրված է համ- («կից») և դարձ կամ դիրս բաղադրիչներից¹⁷: Բառս ունեցել է «հագուստ», «զգեստ» հիմնական և «միասին», «մեկտեղ», «հետ» երկրորդական իմաստները: Լեզվի դարգացման ընթացքում տվյալ բառը աստիճանաբար ղրկվել է իր նյութական իմաստից, և նրանում ուժեղացել է երկրորդական նշանակությունը: Եվ այդպիսով, հանդերձ բառը դարձել է նախադրություն (իսկ նախնական իմաստը պահպանվել է բառակազմություններում, ինչպես՝ հանդերձաճ, հանդերձաբան, խազգահանդերձ և այլն): Հ. Աճառյանն այդ բառի հանբաղադրիչը, որն ունի համ-, հոմ-, ան- տարբերակները, փոխառություն է համարում իրանյան համապատասխան ձևից¹⁸: Նա գրում է, որ հանդերձ բառը ծագում է պահլավական hamdarz ձևից¹⁹, որի դարձ բաղադրիչը բնիկ հայկական բառ է՝ հնդեվրոպական dhergh արմատից, որը նշանակել է «ամրացնել»²⁰:

Պահլավական փոխառություն է հաւառա բառը, որն ունի «հավասար», «նման» իմաստները: Այն հանդես է գալիս որպես ածական, գոյական, մակբայ և նախադրություն:

Բնիկ հայկական են հեռի (այն կազմված է հեռ արմատից և ի մասնիկից) և հույլ բառերը, որոնք համապատասխանաբար ծագել են

16 Նույն տեղում, հ. 4, էջ 63—64:

17 Նույն տեղում, էջ 114—115:

18 Նույն տեղում, էջ 51—52:

19 Նույն տեղում, հ. 2, էջ 514:

20 Նույն տեղում, էջ 458—459:

par-²¹ և sub-²² հնդեվրոպական արմատներից: Դրանք արտահայտում են միմյանց հակադիր տարածական իմաստներ:

Ձեռն գոյականի եղակի և հոգնակի հայցականից (ի և ընդ նախդիր-ների հետ), բացառականից և եղակի գործիականից առաջացել են մի քանի նախադրություններ և որպես այդպիսիք գործածվող բառեր, ինչպես՝ ի ձեռն, ընդ ձեռն, ի ձեռս, ի ձեռաձե, ի ձեռաց, ընդ ձեռամբ: Ձեռն բառը, բացի իր հիմնական «ձեռք» իմաստից, ունեցել է նաև «միջոց», «օգնություն», «պաշտպանություն», «իշխանություն» և այլ իմաստներ: Վերջին իմաստների ամրապնդման շնորհիվ էլ հիշյալ կազմություններն անցել են նախադրությունների շարքը:

2. Աճառյանի ստուգաբանմամբ ձեռն բառը ծագել է հնդեվրոպական g'her և g'hers ձևերից, որոնք նախապես ունեցել են «բռնել» իմաստը: Առաջինից սերվում է ձեռ (օրինակ՝ գործիականի ձեռք ձևը), իսկ երկրորդից՝ ձեռ-արմատը, որից էլ՝ ձեռն և ձեռք գոյականները²³:

Կոյս գոյականից, որ նշանակում է «կողմ», առաջացել են մեկուսի, յայնկոյս, յայսկոյս բառերը, որոնք գործածվում են նաև իբրև նախադրություն:

Մեկուսի բառը կազմված է մի, կոյս և ի բաղադրիչներից: Այն սկզբնապես ունեցել է միակոյս ձևը, որը հոլովվել է և սեռականում դարձել է միակոյսի, որի մեջ իա-ն ավանդական հնչյունափոխությամբ տվել է ե, իսկ ոյ-ը շեշտից զրկվելով՝ դարձել է ու, և ստացվել է մեկուսի: Մի-ն ծագել է հիմք լեզվի sem- արմատից, որը նշանակում է «մի», «ամբողջ», «մի ամբողջություն»²⁴:

Հետաքրքիր ծագում ունի մեռլ ածականը. այն սերվում է հնդեվրոպական nogu- արմատից և -ro մասնիկից²⁵: Ձախդարձի օրենքի համաձայն օ-ն վերածվել է e-ի, և բառը դարձել է negu-ro, այնուհետև ո-ն փոխվել է m-ի, և ստացվել է megu-ro, դրափոխությամբ՝ մեռլ: Այս ածականը գործածվում է նաև որպես նախադրություն:

Ջարգացման յուբօրինակ ճանապարհ է անցել մեռձ բառը, այսպես՝ մեռձի-մեռձի-մեռձ: Այս ի-ն կա մեռձեճալ բայի կազմում, որովհետև նրանում եղած ե-ն երբեմնի իա-ն է:

Մեջ գոյականն արտահայտում է տարածական հարաբերություն՝ «որևէ տարակայնի մեջ՝ ներսում» իմաստով: Տվյալ բառի եղակի տրական, հայցական և բացառական հոլովական ձևերը ի կամ ընդ նախդիր-ների հետ միասին քարացել են և վերածվել նախադրության, ինչպես՝

21 Նույն տեղում, հ. 4, էջ 259:

22 Նույն տեղում, էջ 401:

23 Նույն տեղում, էջ 482:

24 Նույն տեղում, էջ 1025:

25 Նույն տեղում, էջ 995:

ի միջի, ի մէջ, ընդ մէջ, ի միջոյ: Հյուսիսային ստուգաբանմամբ մէջ-ը ծագել է հիմք լեզվի me'dyos ձևից²⁶:

Մինչ բառը կազմվել է մի և -նչ բաղադրիչներից, ինչպես որ՝ ի-նչ-ը²⁷: Իսկ մինչ-ից առաջացել է մինչև բառը:

XIX դարի հայ քերականներ Գ. Ավետիսյանն ու Ա. Բագրատունին գտնում են, որ մինչ-ը ծագում է մի և ինչ բառերից²⁸: Այս բառի առաջացման մասին նման կարծիք է հայտնում նաև ակադ. Ա. Ղարիբյանը, նա գրում է, որ մինչև-ը կազմված է մի, ինչ և չն բառերից²⁹:

Մօտ բառը ծագել է մատ աղմուկից, որի աւ-ը ավանդական հընչ-յունափոխությամբ վերածվել է օ-ի:

Հնդեվրոպական ծագում ունեն նաև հայերեն յար և ներ արմատները, որոնք համապատասխանաբար ծագել են ar³⁰ (ի նախորդի հավիլմամբ, որը ձայնավորից առաջ վերածվել է յ-ի) և ner³¹ ձևերից:

Ի ներքս, ներքոյ, ի ներքոյ, ներքուստ, ի ներքուստ կազմությունները վկայում են այն մասին, որ ներ(f) գոյականն սկզբում հոլովվել է, և նորա սեռական, հայցական, բացառական հոլովաձևերը քարացել են ու վերածվել մակբայի կամ նախադրության: Իսկ ներքազոյն բառը կազմությամբ ածանցավոր է, կազմվել է ներքս բաղադրյալ հիմքից և -զոյն վերջածանցից (բաղդատական աստիճան):

Վերահիշյալ բոլոր բառերի հիմքում ընկած է ներ արմատը, որն այս ձևով որպես նախդիր գործածվել է հոմաբան հեղինակների գործերում, ինչպես՝ ներ տեղուք, ներ ի տան, ներ մարմնուք և այլն, որոնցում արտահայտում է «մեջ», «ներսում» գաղափարը:

Նման ածականը, որ գործածվում է նաև որպես նախադրություն, փոխառություն է պահլավական nimān ձևից³²:

Հայերենի զարգացման ներքին օրենքի համաձայն շուտ կամ շուտ արմատից ք-ի հավելադրմամբ առաջացել է շուրթն (հմմտ. քեր-քերք) բառը, այնուհետև ջ-ի հավելմամբ կազմվել է շուրջ բառը (հմմտ. լուրք և լուրջ ձևերը)³³:

Որպէս-ը կազմվել է որ և պէս ձևութներից: Որ-ը սերվում է հիմք լեզվի k^u-օ- ձևից և r մասնիկից, ինչպես որ՝ ի-իր³⁴: Իսկ պէս բա-

26 Նույն տեղում, էջ 1012:

27 Նույն տեղում, էջ 1041:

28 Գ. Ավետիսյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 106,

Ա. Բագրատունի, Նշված աշխ., էջ 119:

29 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասականի մեթոդիկա, Երևան, 1954, էջ 366:

30 Հ. Աճառյան, Հայերեն արմ. բառարան, հ. 4, էջ 1258:

31 Նույն տեղում, հ. 5, էջ 96:

32 Նույն տեղում, էջ 145:

33 Նույն տեղում, էջ 428:

34 Նույն տեղում, էջ 555:

որ պահլավական փոխառությունն է, որն արտահայտել է «ձև», «կերպ», «եղանակ» և այլ իմաստները: Գրաբարում իբրև նախադրություն գործածվել է նաև պէս առանձին բառը (օրինակ՝ խոզից պէս):

Չափ գոյականը, որի ստուգաբանությունը պարզ չէ, ցույց է տալիս ինչ-որ քանակ: Այս բառը գործածվում է նաև որպես նախադրություն՝ «չափ», «մինչև» նշանակությամբ: Այսպես՝ «Միաբան հասանելի չափ հասակին Քրիստոսի» (Կոր., էջ 34): «Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց» (Յզն., էջ 310): Առաջին նախադասությունում չափ-ը գոյական է, իսկ երկրորդում գործածվել է իբրև նախադրություն:

Պատճառ գոյականի եղակի գործիականը և հոգնակի հայցականը (ի նախորդի հետ) գրաբարում գործածվում էին նաև որպես նախադրություն:

Հին հայերենում սակ-ը բաղմիմաստ բառ էր. նախ նշանակում էր «պայման», «կարգ», «օրենք», «հաշվ», որից էլ առաջացել են սակս, ի սակս նախադրությունները, և ապա՝ «տուրք», «հարկ»: Առաջին նշանակությամբ բառի ստուգաբանությունը հայտնի չէ, իսկ երկրորդը պահլավական sāk «տուրք» իմաստով ձևից փոխառությունն է³⁵:

Վառն նախադրությունը, որն ունի «համար», «պատճառով», «շրնորհիվ» իմաստները, Ա. Մեյեն համարում է իրանյան համանուն ձևից ուղղակի փոխառություն: Պարսկերենում կա vāsna՝ «շնորհիվ», «կամքով» նշանակությամբ բառը: Այս փաստը ևս հաստատում է բառիս պարսկերենից փոխառյալ լինելը³⁶:

Հնդեվրոպական uper ձևից, որն էլ իր հերթին ծագել է upo- (հայերեն՝ հույլ (արմատից, առաջացել է մեր վեր՝ «վերև», «վերևի կողմը» նշանակող բառը³⁷: իբրև գոյական ալն հոլովվել է, և նրա եղակի տրականը ի նախորդի հետ (ի վերայ), հայցականը (ի վեր), բացառականը (ի վերոյ), ինչպես նաև քան բաղադրիչի հարադրմամբ կազմված ի վեր քան և ի վերոյ քան բաղադրյալ կազմությունները գործածվել են իբրև նախադրություն³⁸:

Տեղ բառը սերվել է հնդեվրոպական sedlo ձևից, իսկ վերջինս առաջացել է sed «նստել» արմատից և lo-մասնիկից³⁹: Հայերենում ալն նախ տվել է ետղ հնագույն ձևը, որից էլ դրափոխության օրենքի հա-

35 Նույն տեղում, հ. 6, էջ 28—30:

36 Նույն տեղում, էջ 563:

37 Նույն տեղում, էջ 637—638:

38 Հունարան հեղինակների գործերում վեր-ը գործածվել է նաև որպես բառակազմական մասնիկ՝ «վերստին», «կրկին», «երրորդ», «գարծալ» իմաստներով, ինչպես՝ վերածել, վերագրել, վերաբերել և այլն:

39 Հ. Անադյան, Հայերեն արմ. բառարան, հ. 6, էջ 856:

մածայն առաջացել է տեղ գոյականը: Սկզբում հոլովվել է ի և ո հոլովմամբ: Հետագայում սեռականի տեղի ձևը դարձել է սկզբնական և իր հերթին ենթարկվել հոլովման: Տեղի գոյականի եզակի հայցականը ի նախորդի հետ (երբեմն էլ տրականը՝ ի տեղում) գործածվել է իբրև նախադրություն՝ «փոխարեն», «փոխանակ» իմաստներով: Աստիճանաբար տվյալ կազմությունը որպես քերականական համանունություն առանձնացվել է գոյականից, զրկվել իր նյութական բովանդակությունից և վերածվել է նախադրության:

Փոխ գոյականը հին հայերենում նշանակել է «փոխ առնված որևէ բան, մանավանդ՝ դրամ»: Այս արմատից ծագել են մի շարք բառեր, որոնց թվում նաև՝ փոխան, փոխանակ, փոխառէն նախադրությունները⁴⁰,

Փոխ արմատի ստուգաբանությունը պարզ չէ: Ոմանք (Կարստ, Պետերսեն և ուրիշներ) այն համարում են ասորերեն pōxu, pūxu «փոխարինություն» իմաստով բառից փոխառություն⁴¹:

Հիմք լեզվի kañ կամ kañ ձևից ծագում է մեր ֆան բառը⁴²: Բացի ինքնուրույն գործածությունից, այն հանդես է եկել նաև մեկ տասնյակից ավելի բաղադրյալ նախադրությունների կազմում, որպես բաղադրիչ, ինչպես՝ անդր ֆան, առաւել ֆան, արտաբոյ ֆան, արտաբա ֆան, աւելի ֆան, գեր ֆան, գեր ի վերոյ ֆան, յառաջ ֆան, յառաջագոյն ֆան, ճախ ֆան, ի վեր ֆան, ի վերոյ ֆան և այլն:

Պահլավական փոխառություն են հայերեն օրէն(f) («օրենք», «իրավունք», «կարգ ու կանոն») և նրանից ծագող օրինակ բառերը⁴³: Այս գոյականների եզակի (երբեմն էլ՝ հոգնակի) հայցականը զ նախորդի հետ գործածվում է իբրև նախադրություն՝ «պես», «նման» նշանակությամբ:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ քերականության պատմության մեջ նախադրությունների կազմության հարցը երկար ժամանակ հետազոտման հատուկ առարկա չի դարձել: XVIII դարի վերջերին քերական Պաղտասար Դպիրը նախադրությունների իմաստային տեսակների մասին խոսելիս որոշ նշումներ է անում նաև նրանց կազմության վերաբերյալ: Հիմք ընդունելով նախադրությունների գրության ձևը իրենց խնդրի հետ, դրանք նա բաժանում է երեք տեսակի՝ զատական, հոլովական և բաղադրական: Նրա

40 Հունարան շրջանից սկսած փոխ արմատը կատարել է նաև բառակազմական դեր, ինչպես՝ փոխաբերական, փոխադրական, փոխաբերաբար և այլն:

41 Չ. Աճառյան, Հայերեն արմ. բառարան, հ. 6, էջ 1251—1253:

42 Նույն տեղում, էջ 1382:

43 Նույն տեղում, էջ 1610, 1614:

տեսակետով դատական են այն նախադրությունները, որոնք իրենց խնդրից անջատ են գրվում, այսպես՝ ի վերայ երկրի. հոլովական նախադրությունները գրվում են որևէ հոլովաձևի վրա, օրինակ՝ բաց ի քէն, իսկ բաղադրական նախադրությունները գրվում են բառին կից, ինչպես՝ առարկել, ընդունել, բացատրել և այլն⁴⁴։ Ինչպես նրա բաժանումից էլ երևում է, այստեղ որոշակիություն չկա, որովհետև բաժանման հիմքում Դպիրը միասնական սկզբունք չի դրել։ Նա հաշվի է առել ինչպես նախադրությունների գրության ձևը (իրենց խնդրի հետ), այնպես էլ նրանց կիրառությունը։ Բացի դրանից, նա տարբերություն չի դրել նախդիրների, նախադրությունների և նախածանցների միջև։

Այնուհետև գրաբարի նախադրությունների կազմության խնդրին ոչ ոք չի անդրադարձել։

Հին հայերենի նախադրությունները ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ պարզ կամ արմատական, բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր, բարդ նախդրավոր, թեքման ձևերից առաջացած և նախդրավոր կազմությամբ։

Կազմությամբ պարզ կամ արմատական են այն նախադրությունները և նախադրության արժեքով գործածվող բառերը, որոնք ներկայացնում են մեկ արմատ կամ հիմք, ինչպես՝ բաց, բայց, դեմ, դէպ, հանդերձ, հանգոյն, հանդէպ, հաւասար, հույ, մերկ, մերձ, մօտ, յանդիման, նման, շուրջ, չափ, պէս, վասն, քան և այլն։ Դրանցից դէմ, դէպ, հանդերձ, հանգոյն, հանդէպ, հաւասար, յանդիման, նման, պէս, վասն բառերը փոխառություն են, իսկ մյուսները՝ բնիկ հայկական բառեր։

Առաջին խմբին պատկանող նախադրություններն առաջացել են ավելի վաղ և արտահայտում են վերացական ավելի շատ հարաբերություններ։

Բարդ են այն նախադրություններն ու նախադրության դերում հանդես եկող բառերը, որոնք կազմված են մեկից ավելի (սովորաբար երկու) արմատներից կամ բառերից, ինչպես՝ իբր, իբրև, մինչ, մինչև, որպէս և այլն։ Դրանք բոլորն էլ կցական բարդություններ են։

Ածանցավոր են այն նախադրություններն ու իբրև նախադրություն գործածվող բառերը, որոնք կազմված են բառարմատից և որևէ ածանցից (կամ ածանցներից)։ Դրանք են՝ առանց, առընթեր, գառ, զանխով, առաջի, յառաջ, յետ, ընդհատ, հետի, յետուստ և այլն, որոնց կազմում հանդես են գալիս առ-, գ-, յ-, ան-, ընդ- նախածանցները և ի վերջածանցը։ Որոշ նախադրությունների կազմում առկա են երկու տարբեր ածանցներ, ինչպես՝ գ և ան (զան-խով), ի(յ) և առ (յառաջ), առ և

⁴⁴ Պաղատաւ Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան..., էջ 150։

ընդ (առընդ) բեր) և այլն: Ածանցավոր են նաև բաղդատական աստի-
ճանի -գոյն վերջածանցով կազմված բացագոյն, զկնիագոյն, հեռագոյն
նախադրության դերում հանդես եկող բառերը: Այս խմբին են հարում
նաև փոխանակ և փոխաբեմն նախադրությունները:

Մեկուսի որպես նախադրություն գործածվող բառը կազմված է
երեք բաղադրիչներից՝ մի, կոյս, ի: Այդ պատճառով էլ այն ըստ կազ-
մության բառի ածանցավոր է:

Նախադրության դերում հանդես եկող յայսկոյս և յայնկոյս բառե-
րը կազմված են երկու բառարմատներից և ի(յ) նախդրից: Այդ տեսակը
պետք է կոչել բառի նախդրավոր:

Դարերի ընթացքում խոսքի մասային փոխանցման միջոցով նա-
խադրություն սպասարկու բառերը հարստացել են ի հաշիվ նյութական
խոսքի մասերի: Թեքման տարբեր ձևերի փոխանցումից, այսինքն՝ հո-
լովման և խոնարհման առանձին ձևերի քարացումից (առավելապես
առաջինից և հաճախ ի նախդրի հետ), առաջացել են զգալի թվով նա-
խադրություններ:

Թեքման ձևերից առաջացած⁴⁵ նախադրություններն ու որպես այդ-
պիսիք գործածվող բառեր են՝ աղագալ, առաջի, յաջմէ, արտաքոյ, ի
դիմաց, թող, իբրև, իբրու, յերեսաց, ի ձեռաց, ի ձեռանէ, ի միջոյ, յե-
տոյ, ներքոյ, ի ներքոյ, պատճառաւ, ի պէտս, ի վերայ, ի վեր, ի վերոյ,
սակս և այլն: Այս խմբին են հարում նաև նախդրավոր կապակցություն-
ներից առաջացած նախադրություններն ու իբրև նախադրություն հան-
դես եկող բառերը, որոնք ստորև կներկայացվեն իբրև առանձին տե-
սակ՝ նախդրավոր կազմութեամբ նախադրություններ անվամբ: Թեքման
ձևերից առաջացած նախադրություններից և նախադրության դերում
գործածվող բառերից միայն թող-ն է, որ ծագել է բայից (թողում բայի
հրամայական եղանակի եզակի թվից), իսկ մյուսները նախադրու-
թյունների շարքն են անցել գոյականի տարբեր հոլովաձևերից: «Թո՛ղ
զայլ բազում թարմատարսն» (Նճն., էջ 250) օրինակում թող-ը բայ է
(եզակի հրամայական), իսկ՝ «Ձի երիւ ընդ միոյ պատրաստեսցէ առ մի
մի ի նոցանէ, թող զայլն ամենայն» (Նճ., էջ 96) օրինակում նախադրու-
թյուն է:

⁴⁵ Պրոֆ. Ս. Աբրահամյանը աշխարհաբարի կապերի կազմությունը քննելիս այդ-
պիսիները կոչում է քերականական ձևերից առաջացածներ (տե՛ս նրա «Զթեքվող խոսքի
մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժա-
մանակակից հայերենում» գիրքը, Երևան, 1965, էջ 301): Նկատի ունենալով, որ այդպի-
սի նախադրությունները առաջացել են միայն հոլովման և խոնարհման տարբեր ձևերի
քարացումից, այդպիսիները զրաբարում մենք անվանում ենք րեքման ձևերից առաջացած-
ներ:

Գրաբարի նախադրությունների մի դպալի մասն առաջացել է գոյականի թեք հոլովածներից: Ստորև տեսնենք, թե ո՞ր հոլովով ի՞նչ նախադրություններ են կազմվել: Նախ, որպես ընդհանուր դիտողություն, նշենք, որ դրանց մեծ մասը ծագել է հայցականից: Ի դեպ, եզակի հայցականից ավելի շատ նախադրություններ են առաջացել, քան հոգնակի, այսպես՝ զկնի, յառաջ, զնեւ, ի համար, ի ձեռն, ի մէջ, ի միջոց, ի վեր, ի տեղի, զօրէն, զօրինակ, իսկ հոգնակիից ծագել են յաղագս, ի դէմս, ի ձեռս, ի պատճառս, ի սակս, զօրէնս բառերը:

Եզակի սեռականից ծագել են արտաքին, առաջի, ներքին, յետոյ նախադրությունները, եզակի տրականից (և նախդրից)՝ ի միջի, ի միջոցի, ի տեղոյ, ի հանդիպոյ, ի վերայ, եզակի բացառականից՝ ի ներքին, ի ներքուստ, ի հանդիպէ, ի ձեռանէ, ի միջոյ, ի վերոյ, հոգնակիից՝ ի դիմաց, յերեսաց, ի ձեռաց, եզակի գործիականից՝ աղագաւ, զառաջեաւ, զառաջեւ, յառաջեւ, պատճառաւ, հոգնակիից՝ զառաջեօք, զքիկամբք, զկողմամբք, պատճառանօք և այլն:

Այսպիսով, գոյականի բոլոր թեք հոլովներից էլ (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական) խոսքիմասային փոխանցմամբ գոյացել են նախադրություններ ու իբրև այդպիսիք գործածվող բառեր:

Ինչպես նկատվեց, թեքման ձևերից առաջացած նախադրությունների մեծ մասի կազմում հանդես են գալիս մեկ կամ մեկից ավելի նախդիրներ: Այդ պատճառով այդ տեսակը կարելի է կոչել նախդրավոր կազմութեամբ նախադրություններ: Դրանք են՝ ընդ առաջ, ընդ աջմէ, արտաքին քան զ..., ի բացեայ, գեր ի վերոյ, գեր ի վերոյ քան զ..., դէմ յանդիման, ընդ դէմ, դէմ ընդդէմ, դէպ ի, ընդ ձեռն, ընդ ձեռամբ, յառաջ քան զ..., նախ քան զ..., ի ներքս քան զ..., ի վեր քան զ..., ի վերոյ քան զ... և այլն: Դրանք բոլորն էլ հարադրական բարդություններ են⁴⁶:

Այս ցանկում կան բաղադրյալ այնպիսի նախադրություններ, որոնք կազմվել են դէմ կամ քան նախադրություններից և որեւէ այլ բաղադրիչից (կամ բաղադրիչներից), ինչպես, օրինակ, դէմ ընդդէմ, դէմ յանդիման, արտաքին քան, գեր ի վերոյ քան, յառաջ քան, նախ քան, ի ներքս քան, ի վեր քան, ի վերոյ քան և այլն:

Գրաբարի նախադրությունների և իբրև նախադրություն գործածվող բառերի առաջացման ու կազմության ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

46 Երբեմն փոխանակ և փոխառէն նախադրությունների հետ գործածվում է ընդ նախդիրը: Բայց այս դեպքում հարադրական բարդություն չի առաջանում, որովհետև այստեղ նախդիրն ունի ռեական կիրառություն:

1. Գրաբարի նախադրությունների մեծամասնությունն առաջացել է գոյականից, ըստ որում, անցումը հիմնականում կատարվել է մակբայի վրայով:

2. Որպես նախադրություն գործածվող բառերը (գոյականի զանազան հոլովածներ, ածականներ, մակբայներ) ավելի շատ են, քան բուն նախադրությունները:

3. Բոլոր թեք հոլովներից էլ խոսքիմասային փոխանցմամբ առաջացել են նախադրություններ և իբրև նախադրություն գործածվող բառեր, բայց ամենից շատ (երկու տասնյակից ավելի)¹ հայցականից:

4. Բացի ըստ-ից, մյուս նախդիրները գործում են նախադրությունների կազմում, բայց բոլորից շատ նախադրություններ կազմվել է ի-ով:

5. Գրաբարի նախադրությունների մեծամասնությունը հնդեվրոպական ծագում ունեցող բառեր են, միայն շուրջ մեկուկես տասնյակը փոխառյալ բառեր են:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հայ քերականական գրականության մեջ հիմնականում կատարվել է նախադրությունների երկու տեսակի դասակարգում՝ ըստ տեղադրման և ըստ իմաստի:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՏԵՂԱԴՐՄԱՆ

Ինչպես նշվել է, դեռևս հունարան հեղինակները, այսինքն՝ Դ. Թրակացու «Արվեստ քերականության» գրքի թարգմանիչն ու մեկնիչները, խոսել են գրաբարի նախադրությունների տեղադրման մասին: Նրանք հայերենի համար ընդունել են 50 նախադրություն-նախածանց և 3 հտադրություն-վերջածանց¹:

Այնուհետև դարեր շարունակ նախադրությունների շարադասության հարցը քննարկման առարկա չի դարձել: Նրբեմն առանձին քերականներ կատարել են մասնակի նշումներ: Այս խնդրի վերաբերյալ արժեքավոր դիտողությունների ենք հանդիպում XVIII դարի վերջին քառորդի քերական Մ. Չամչյանի դրքում: Նա նշում է, թե որոշ նախադրություններ երբեմն գրվում են իրենց խնդրից հետո², իր միտքը հաստատելու համար նա հաջող օրինակ է ընտրում Գր. Նարեկացու անմահ պոեմից՝ «Չարին զկնի միտեցայ» (ՄՈ, ԲԱՆ ԿԷ, Բ.):

XIX դարի քերական Գ. Ավետիքյանն իր նախորդներից առաջ

1 Ն. Ազնց, նշվ. աշխ., էջ 30:

2 Մ. Չամչյանց, նշվ. քերականությունը, էջ 254:

անցնելով՝ գրում է, որ բոլոր նախադրությունները, ինչպես՝ առ, ընդ, ըստ, քան, իբրև, բայց, առանց, մինչ, երբեք իրենց խնդրից հետո չեն գրվում, իսկ մյուսները կարող են դրվել³, Հանդերձ, ի վերայ և այլ նախադրությունների հտադաս գործածության մասին խոսում է քերական Տեր-Հարությունյանը⁴:

Նոր հայկադյան բառարանը նախադրությունների շարահասության մեղաբերյալ նդածի վրա ոչ մի նոր բան չի ավելացնում: Բառարանագիրներն արձանագրում են Դ. Թրակացու քերականության թարգմանչի ու մեկնիչների տեսակետը⁵:

Այս խնդիրը համեմատաբար ավելի մանրամասնորեն է քննել XIX դարի երկրորդ կեսի հայ քերական Ա. Բազրատունին: Նախադրություններն ըստ դիրքի նա բաժանել է երեք տեսակի՝ նախադաս, հտադաս և նախադաս ու հտադաս, ինչպես՝ իբրև զմարդ, ոգով չափ, վասն է՞ր կամ է՞ր վասն և այլն⁶:

Հայ անվանի քերական Ա. Այտընյանը նախդիրների և նախադրությունների շարահասության մասին խոսելիս զարգացնում է ավելի ճիշտ տեսակետ: Նա գրում է, որ նախդիրները միշտ նախադաս են լինում, իսկ նախադրությունները կարող են լինել և՛ նախադաս, և՛ հտադաս⁷:

Քերական Ա. Գարագաշյանն իր նախորդներից առաջ անցնելով՝ կոնկրետ կերպով թվարկում է, թե ո՞ր նախադրություններն են գրվում իրենց խնդրից հետո: Նրա կարծիքով նախադրություններն առհասարակ ունեն նախադաս գործածություն, բացառությամբ աղագալ, հետե, չափ և կոյս բառերի, որոնք լինում են հտադաս⁸:

Վերոհիշյալ տեսակետին գրեթե մույնուկամբ հանդիպում ենք Վ. Զալրիսյանի՝ Ա. Այտընյանի մշակմամբ հրատարակված քերականության դրքում: Այնտեղ ասված է, որ նախդիրները միշտ նախադաս են լինում, իսկ նախադրությունները՝ ընդհանրապես նախադաս, երբեմն էլ՝ հտադաս⁹: Ահա այս դրույթն էր, որ վերջնականապես հայ քերականության մեջ հաստատվեց իբրև ճիշտ տեսակետ:

Որպես եղրակացություն կարող ենք ասել, որ գրաբարի նախդիրներն ու նախադրությունները դրվել են իրենց խնդրից առաջ, այսինքն գործածվել են նախադաս, որի համաձայն էլ ստացել են իրենց անվա-

3 Գ. Ավետիքյան, նշվ. աշխ., էջ 524:

4 Մ. Տեր-Հարությունյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 43:

5 Նոր բառգիրք հայկադեան լեզուի, հ. 2, էջ 487:

6 Ա. Բազրատունի, նշվ. աշխ., էջ 119—130:

7 Ա. Այտընյան, Քերական քերականութիւն..., էջ 468—470:

8 Ա. Մ. Գարագաշյան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն..., էջ 212—213:

9 Վ. Զալրիսյան, նշվ. աշխ., էջ 129:

նումը: Նախադրությունների մասնակի շեղումներն այս օրինաչափությունից երևան են եկել հետագայում, աստիճանաբար:

Ն. Մառը նախդրավոր բառերը (предложные слова) բաժանում է երկու տեսակի՝ նախադրության (предлоги) և հետադրության (последлоги)¹⁰.

Գրաբարյան այս անվանումները՝ նախդիր, նախադրություն, գործածվել են նաև աշխարհաբարի քերականություններում: Այսպես, օրինակ, նախդիր, հետդիր, հետադրություն անվանումներին հանդիպում ենք լեզվաբաններ Հ. Դադբաշյանի, Գ. Ղափանցյանի, Գ. Սևակի և այլոց աշխատություններում:

Հայ մշակույթի մեծ երախտավոր Մ. Աբեղյանը աշխարհաբարի նախդիրներն ու նախադրությունները, ելնելով դրանց շարահյուսական հատկանշից, անվանեց կապ, որն էլ դարձավ աշխարհաբարի տվյալ խոսքի մասի անվանումը: Կապերի՝ ըստ շարադասության տիպավորման հարցում նույնպես մեծ է Մ. Աբեղյանի ծառայությունը: Նա կապերը բաժանեց նախադրությունների և հետադրությունների¹¹:

հետադրություն անվանումը կազմվել է ի հակակշիռ նախադրություն անվանման:

Ելնելով կապերի խոսքիմասային առանձնահատկություններից, պետք է նշել, որ հետադրություն անվանումը ճշտորեն է արտահայտում աշխարհաբարի տվյալ հասկացությունը, քանի որ աշխարհաբարում մի շարք հետադրություններ բարձրացան կարգայինի աստիճանի:

Նախադրությունների շարադասության յուրահատկություններին ավելի հանգամանորեն կանոնադառնա՞նք հաջորդ՝ «Նախադրությունների հոլովառությունը» բաժնում:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԻՄԱՍԻ

Հայ քերականները նախադրությունները դասակարգել են նաև ըստ իմաստի:

Արդեն նշել ենք, որ նախադրություններն արտահայտում են շարահյուսական զանազան հարաբերություններ: Ըստ որում, միևնույն նախադրությունը կարող է արտահայտել մեկից ավելի քերականական հարաբերություններ: Այդ պատճառով նախադրությունների դասակարգման ընթացքում միասնականություն հանդես չի բերվել, այն է՝ միև-

¹⁰ Н. Марр, Грамматика древнеармянского языка, этимология, СПб., 1903, стр. 281.

¹¹ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 131:

նույն նախադրութիւնը տարբեր քերականների մոդմից զետեղվել է տարբեր խմբերի մեջ:

Հայ քերականութեան պատմութեան մեջ նախադրութիւնները դասակարգվել են տարբեր սկզբունքներով: Գոյութիւն ունեցող բոլոր դասակարգումները հիմնականում կարելի է խմբավորել հետևյալ երեք տեսակների մեջ՝ ըստ իմաստի, ըստ հոլովառութեան և ըստ ծագման:

Ըստ իմաստի, այսինքն՝ ըստ արտահայտած հարաբերութեան, նախադրութիւնները ստորաբաժանվել են մի քանի խմբերի: Այսպէս, օրինակ, Պաղտատար Դպիրը նախադրութիւնները բաժանել է հետևյալ 13 տեսակների՝ տեղական (ի վերայ, ի վերոյ, արտաքոյ, դէպ և այլն), դասական (առաջի, զկնի, յետ, յետ քան և այլն), գերադրական (գեր քան, ի վեր քան, անդր քան և այլն), պատճառական (վասն, սակս, յազգս, աղագաւ), նմանական (ըստ, որպէս, իբրև, իբր և այլն), բացատրական (բաց, զատ, հետի, մեկուսի և այլն), հատկացական (հետ, ըզհետ, հանդերձ), փոխարինական (փոխանակ, փոխարէն), ծածկական (գաղտ, գանխով, ծածուկ), բացարձակական (թարց, առանց), բաղդատական (քան), ընդդիմական (ընդդէմ) և միջնորդական (ի ձեռն)¹²:

Այս դասակարգմանը գրեթէ նույնութեամբ հանդիպում ենք Մ. Չամչյանի քերականութեան գրքում: Չամչյանն ընդունում է նախադրութիւնների հետևյալ տեսակները՝ պատճառական, ժամանակական, տեղական, դասական, հանգումական, ներհակական կամ ընդդիմական, զատական, փոխարինական, միջնորդական, կցորդական կամ միասնական, բաղդատական և գերադրական¹³:

Գ. Ավետիսյանը նախադրութիւնները ըստ իմաստի չի բաժանում, որովհետև, նրա կարծիքով, նախադրութեան տեսակը որոշվում է նրա գործածութիւնից, այն բանից, թե ինչ բառի վրա է դրված և ոչ թե իրենից՝ նախադրութիւնից (բացի քան, վասն և այլ նախադրութիւններից)¹⁴:

Քերական Տեր-Հարութիւնյանը նախադրութիւնները բաժանում է հետևյալ տեսակների՝ տեղական, դասական, ժամանակական, պատճառական, նմանական, ներհակական, զատական, կցորդական, փոխարինական, ծածկական, գերադրական, բաղդատական, միջնորդական¹⁵:

12 Պաղտատար Դպիր, նշվ. աշխ., հ. 1, էջ 138—140:

13 Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 250:

14 Գ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 115:

15 Մ. Տեր-Հարութիւնյան, Քերականութիւն հայոց լեզուի, հ. 1, էջ 135—137:

Հովհ. Նղիազարյանն ընդունում է նախադրությունների 7 տեսակ՝ առավելական (ֆան, առաւել ֆան, աւելի ֆան և այլն), պատճառական, կցորդական, դատական, նմանական, ժամանակական և տեղական¹⁶։

Ա. Գարագաշյանն այս խնդրում հանդես է բերում ավելի ճիշտ մոտեցում. նախադրությունները նա դասակարգում է ըստ նրանց արտահայտած հարաբերությունների, այսպես՝ տեղ ցույց տվող նախադրություններ (առաջի, առընթեր, զկնի, ի մէջ, ի վերայ և այլն), ժամանակ ցույց տվող (յառաջ, յետ, նախ ֆան), մերթ տեղ, մերթ ժամանակ ցույց տվող (մինչև ի, մինչև ց), եղանակի պարագայի նախադրություններ (ի ձեռն, ընդդէմ, հակառակ, հանդերձ, փոխանակ), պատճառի կամ նպատակի պարագա ցույց տվող (վասն, յաղագս, սակս, առ ի)¹⁷։ Բայց, ինչպես բաժանումից էլ երևում է, Ա. Գարագաշյանը շատերի նման նախադրությունների դասդասումը միասնական սկզբունքով չի կատարում. նա հաշվի է առնում ինչպես նախադրությունների արտահայտած հարաբերությունները, այնպես էլ նրանց կիրառությունները։ Դրա հետևանքով նրա դասակարգումը ճիշտ չի ստացվում։ Այնուհետև, նա ճիշտ չի վարվում, երբ նախադրությունների շարքն է դասում առ և ի նախդիրների զուգադիր գործածությունը։

Նախադրությունների խոսքիմասային հիմնական առանձնահատկությունը առարկաների անոճների միջև զանազան հարաբերությունների արտահայտելն է։ Այդ պատճառով էլ ամենակարևորը նախադրությունների իմաստային դասակարգումն է։ Ըստ այդմ նախադրությունները կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ տեղի, ժամանակի, ձևի, նպատակի, պատճառի, միասնության, չափ ու քանակի, միջոցի, վերաբերության, ընդդիմության, փոխարինության, բացառման, անշատման, հանգաման և այլն, որոնց կանոնները հետևյալն են։

Քերականներից ումանք նախադրություններն ստորաբաժանել են ըստ հոլովառության։ Նկատի ունենալով, որ նախադրությունները խոնդիր են առնում բոլոր թեք հոլովներով, նրանք ընդունել են նախադրությունների 7 տեսակ՝ սեռական, տրական, նախդիրի հայցական, հայցական, բացառական, գործիական և պարառական խնդրով նախադրություններ¹⁸։

16 Հովհաննես Նղիազարյան Սիմեոն Աղայանց Պայագիտեցի, Քերականութիւն հայկական լեզուի, Մոսկով, 1839, էջ 60։

17 Ա. Գարագաշյան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն..., էջ 53—56։

18 Տե՛ս Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, էջ 175—176։ Վ. Զալբյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, էջ 146։

Որոշ քերականներ էլ նախադրությունները դասակարգել են ըստ ծագման: Ա. Այտընյանը աշխարհաբարի նախադրություններն ըստ ծագման բաժանել է երեք տեսակի՝ ա) բուն նախադրություններ, բ) գոյականից առաջացած նախադրություններ և գ) մակբայից կազմված նախադրություններ¹⁹:

Վերոբերյալ դասակարգումներից դժվար չէ հղրակացնել, որ մեր քերականները նախադրությունները դասակարգելիս միասնական ելակետ չեն ունեցել: Այդ պատճառով էլ տրվել են միմյանցից տարբեր դասակարգումներ:

Վերոհիշյալ երեք դասակարգումներն էլ պետք է ընդունել, բայց, իհարկե, դասակարգելիս պետք է ելնել միևնույն սկզբունքից: Այսպես՝ ըստ իմաստի դասակարգումը պետք է կատարել նախադրությունների արտահայտած հարաբերությունների հիման վրա, ըստ ծագման դասակարգման ժամանակ պետք է հաշվի առնել նախադրությունների ստուգաբանությունը, իսկ ըստ հոլովառության դասակարգման ժամանակ՝ նախադրությունների խնդրառությունը: Ստորև կանգ կառնենք նախադրությունների տեսակների վրա ըստ հոլովառության և կիրառությունների:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Մեր քերականները, ելնելով նախադրությունների շարահյուսական հատկանշից, դրանք անվանել են հոլովառու բառեր, որ նշանակում է «հոլով առնող», որովհետև յուրաքանչյուր նախադրություն խնդիր է առնում որևէ հոլովով:

Գրաբարում նախադրությունները խնդիր են ընդունում բոլոր թիվ հոլովներով (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական):

ՍԵՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հին հայերենում նախադրությունների մոտ կես մասը խնդիր է ստանում սեռական հոլովով: «Հենց սա էլ ապացույց է այն բանի, որ այդպիսի նախադրությունների և նրանց խնդրի հարաբերությունը ըս-

¹⁹ Ա. Այտընյան, Քերական քերականություն..., էջ 119, Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզուի, Տիֆլիս, 1894, էջ 180—182:

կըզբնապես եղել է հատկացյալի և հատկացուցչի հարաբերություն, որտեղ պահպանվում է նախադրություն բառական անկախությունը¹։

Գրաբարում սեռական հոլովով խնդիր են ընդունում հետևյալ նախադրություններն ու իբրև այդպիսիք գործածվող բառերը՝ աղագաւ, յաղագս, առանց, առաջի, զառաջեալ, արտաքոյ, դէմ, ի դէմս, յերեսաց, զկնի, զհետ, ընդ աջմէ, ընդ առաջ, ընդ դէմ (ընդդէմ), ի թիկանց, ի թիկունս, զթիկամբք, ի կողմն, ի կողմանս, զկողմամբք, մասամբ, յայնկոյս, յայսկոյս, ի համար, հաճեալ, ի ձեռն, ի մէջ, ընդ մէջ, ի միջոյ, ի միջոց, ի միջոցի, յաճողման, յաճուն, յետ, յետոյ, ներքոյ, ի ներքոյ, ի ներքուստ, ի ներքագոյն, շնորհիւ, պատնառաւ, ի պատնառս, պատնառանօք, ի պէտս, սակս, վասն, ի վերայ, ի վերոյ, գեր ի վերոյ, ի վերուստ, ի պառիւ, ի տեղի, փոխանակ, փոխարէն, ի փառս, յօգաւտ, զօրէն, զօրէնս, զօրինակ և այլն։

Այս նախադրություններից և իբրև նախադրություն առնված բառերից յուրաքանչյուրը գործածվել է տարբեր իմաստներով² և տարբեր հաճախականությամբ։ Ստորև կանգ կառնենք դրանցից յուրաքանչյուրի վրա, նշելով նրանց բոլոր այն իմաստներն ու իմաստային նրբերանգները, որոնք դրսևորվել են V—XI դարերի մեր մատենագիրների գործերում։

Աղագաւ. միշտ դրվում է իր խնդրից հետո (ետադրություն է) և արտահայտում է պատճառի կամ նպատակի հարաբերություն՝ «պատճառով» կամ «համար» նշանակությամբ։ Դասական շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ հանդիպում ենք եզակի օրինակների. Կորյունն ու Ագաթանգեղոսը ոչ մի անգամ չեն գործածել, Եզնիկը գործածել է մեկ անգամ, իսկ Բուզանդը՝ մի քանի անգամ։ Վերջինիս մոտ էլ ավելի շատ հանդիպում է զի՞ հարցական դերանվան սեռական հոլովի հետ գործածված, որից էլ առաջացել է է՞ր աղագաւ գրեթե կայունացած կապակցությունը։ Օրինակներ. «Բայց ի թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիք լիշխէր, և ոչ սակաւ համարձակել ի նա, թող թէ մահու աղագաւ» (Բուդ., էջ 181)։ «է՞ր աղագաւ նա դայս արդեւ գործեաց» (Ն. տ., էջ 209)։ «Եւ այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել» (Եզն., էջ 129)։

Ետդասական շրջանի մատենագրության մեջ ևս աղագաւ-ը ունի անհամաչափ գործածություն, այսինքն՝ ոմանց գործերում հաճախակի

1 Ա. Ա. Աբրահամյան, նշվ. ձեռնարկը, էջ 299։

2 Մեր քերականներն ու լեզվաբանները նախադրությունների մասին խոսելիս նշել են դրանց արտահայտած հիմնական իմաստները միայն։ Դրանցից յուրաքանչյուրի արտահայտած հիմնական իմաստը սույն աշխատանքում մենք նշում ենք առաջինը։ Իսկ մյուս իմաստները հիմնականում ներկայացվում են առաջին անգամ։

է հանդիպում (օրինակ, Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» գործում գործածված է 17 անգամ), իսկ ոմանց երկերում (օրինակ, Նղիշէի, Ղ. Փարպեցու) բոլորովին չի գործածված: Նտղասական գրաբարում ևս գործածվել է նույն իմաստներով, ինչ դասական գրաբարում, այսինքն՝ արտահայտել է պատճառական կամ նպատակային հարաբերություն: Օրինակներ. «Չարին աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ» (Խոր., էջ 15): «Որոյ աղագաւ ազգք օտարածնաց օտարացոցին զմեզ ի բնակութենէ մերմէ» (Ա. Ա., էջ 21): «Եւ ամու աղագաւ կարաց շէն պահել զերկիրն շատամարդկութեամբ» (Թ. Ա., էջ 101):

Նույն աղագ արմատից ծագած յաղագս նախադրությունն ունի նախադաս գործածություն և ցույց է տալիս՝

ա) պատճառ՝ «պատճառով» նշանակությամբ, ինչպես՝ «Վասն որոյ Մերովպս ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ» (Նզն., էջ 207): «Մի՛ թշուառական աշխարհս Հայոց յաղագս քո կորիցէ» (Բուզ., էջ 94): «Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան» (Թ. Ա., էջ 125):

բ) նպատակ՝ «համար» իմաստով: Օրինակներ. «Եւ ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց յամենայն կողմանց ընդ թշնամիս և ընդ սահմանակիցս» (Բուզ., էջ 209): «Զի տայցէ ինչ յաղագս իւրոյ փրկութեանն» (Խոր., էջ 139):

գ) վերաբերություն՝ «մասին», «վերաբերյալ» իմաստներով: Օրինակներ. «Պատմութիւն... յաղագս գիւտոյ հայկական դպրութեան արարեալ ի Կորին վարդապետէ» (Կոր., էջ 22): «Այլ իբրև մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոծոյն շղեկոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց» (Բուզ., էջ 128): «Եւ հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփոս» (Թ. Ա., էջ 307):

Հազվադեպ է ետադաս գործածությունը. այս դեպքում ի նախդիրը կա՛մ կրկնվում է և կա՛մ անջատվում է նախադրությունից ու անցնում խնդրից առաջ: Օրինակներ. «Բայց երկոքեան կողմանքն ղնին ի ներքոյ պարսաւանաց, թէպէտ և ի բարեպաշտութեան յաղագս մոլորեցան» (Թ. Ա., էջ 269): «Կամիմ զմանկամարդացդ՝ ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել, և մի՛ ինչ պատճառս տալ հակառակորդին՝ ի հայհոյութեան աղագս» (Ս. Գ., հ. 4, էջ 533):

Իսկ երբ նախադրության խնդիրը զեղչվում է, յաղագս բառը կատարում է շաղկապի դեր: Այս ճանապարհով առաջացել է յաղագս թէ բաղադրյալ շաղկապը, ինչպես որ վասն զի, քանզի, թան թէ շաղկապ-

ներք: Օրինակ՝ «Յաղագս քէ յուղարկեաց զքոյր իւր Տիգրանուհի ի Տիգրանակերտ» (հոր., էջ 4), այսինքն՝ յաղագս այնր՝ Թէ...:

Առանց. այս նախադրութիւնը միշտ դրվում է իր խնդրից առաջ և դրսևորում է բացառական հարաբերութիւն, արտահայտելով՝

ա) խնդրի բացառումը, որեւէ հատկանշից զուրկ լինելը, ինչպես՝ «Արեգակն... առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է» (Եղն., էջ 110): «Զի մի՞ առանց մեր կատարեացին» (Բուզ., էջ 73): «Եւ խաչեաց զՔրիստոս ի տարապարտուց առանց քոյոյ հրամանի» (հոր., էջ 155): «Առանց նորա կորացուցեալ խորտակէր Աստուած զզօրութիւն թշնամուցն» (Փար., էջ 149): «Եւ նա երթեալ առանց մեր հրամանի թափաւորեաց» (Սեբ., էջ 80).

բ) բացառում, ժխտում. այսպիսի կիրառութեամբ արտահայտում է աւելի ժխտական նախածանցին համադր իմաստ. Օրինակներ. «Առանց յապաղանաց՝ ամենայն արարածք սպասաւորականք զհրամանսն կատարիցեն» (Ագաթ., էջ 142): «Առանց թուոյ և առանց շարի» (Բուզ., էջ 73): «Եւ այնոյ ցուցանէ՞ Թէ տկար էր Զրուանն և կարօտ և առանց գիտութեան» (Եղն., էջ 120): Այս օրինակներում նախադրութիւնն իր խնդրի հետ նշանակում է՝ անյապաղ, անքիւ, անչափ, անգէտ: Նման կիրառութեամբ ավելի շատ հանդես է գալիս անորոշ դերբայի հետ, այսպես՝ «Առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել» (Կոր., էջ 22): «Առանց բաժանելոյ» (Ագաթ., էջ 473), այսինքն՝ անյապաղ, անբաժան: «Առանց զբաղելոյ» (Կոր., էջ 82), այսինքն՝ անզբաղ, «առանց յիշելոյ» (Եղն., էջ 177)՝ անյիշելի, «առանց վրիպելոյ» (Եղ., էջ 202)՝ անվրէպ և այլն.

դ) «հակառակ» զադափարը, ինչպես՝ «Առանց Աստուծոյ կամաց ի ծառոյն ճաշակիցէ» (Եղն., էջ 49): «Այլ զի առանց կամացն Աստուծոյ գործին իրք ինչ՝ լինին չար» (Ն. տ., էջ 50): «Ուր են առանց Աստուծոյ գոռուեալքն» (Փար., էջ 180).

դ) գործողութեան կատարման ձևը, օրինակ՝ «Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք քնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն» (Եղ., էջ 9):

Առաջի. գրաբարում հաճախակի գործածութիւնն տւնեցող նախադրութիւններից մեկն է, որը դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է՝

3 Այս երևութի ճիշտ բացատրութիւնը տվել են՝ Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, գիրք 2, էջ 459, Ա. Գաբազաշյան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, Կ. Պօլիս, 1881, էջ 272, Վ. Առաքելյան, Դարբարի հատընտիր, Երևան, 1946, էջ 14 (ծան. 1):

ա) դադարման գաղափար՝ «առջև», «առաջ» իմաստներով: Օրինակներ. «Առաջի թագաւորաց... զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին» (Կոր., էջ 78): «Ամենայն որ խոստովանեցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է» (Ս. Գ., հ. 4, էջ 24):

բ) «առջևից», «առջևով» գաղափարը, ինչպես՝ «Փախստեայ լինէր առաջի նոցա» (Ագաթ., էջ 18): «Այժմ մերկ գլխով եւ ոտամբ առաջի գերլացն զնան» (Ա. Լ., էջ 31):

գ) շարժման ուղղութիւն (տեղաշարժ արտահայտող բայերի մոտ), ինչպես՝ «Եւ ի միւսում աւուրն ածին զնա առաջի նորա» (Ագաթ., էջ 65): «Մատուցեալ Արհմենի առաջի Զրուանայ՝ ասէ. ցնա» (Եզն., էջ 115): «Եւ եկն առաջի Փարաւոնին» (Ս. Գ., հ. 1, էջ 80): «Տամիմբ զդոսա առաջի թագաւորին» (Եզ., էջ 181): «Ելեալ եւ նա զնաց առաջի թագաւորին» (Ա. Լ., էջ 62):

դ) «ներկայութեամբ», «մոտ», «զիմաց» իմաստները, ինչպես՝ «Բազում անգամ զժառայ այլ առաջի նորա գան հարկանեն» (Եզն., էջ 82): «Որպէս ասենն առաջի ձեր՝ յանձինս իւրեանց ընդունի զհատուցումն» (Փար., էջ 23): «Ոչ խաղան մանկուք առաջի ծնողաց» (Ա. Լ., էջ 60):

ե) ընդդիմութեան հարաբերութեան՝ «դեմ», «ընդդեմ», «հակառակ» նշանակութեամբ: Օրինակներ. «Զայս եւ բազում եւ աւելի քան զսոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի եւ առաջի ամենեցուն» (Բուզ., էջ 217): «Իշխեաց... յանդգնել եւ խօսել առաջի մեր» (Փար., էջ 81):

Գտնում ենք նաեւ հետադաս գործածութեամբ, ինչպես՝ «Որք ոչ միզ միայն, ո՛ւլ թագաւոր, այլ յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն՝ յայտնի է» (Ագաթ., էջ 470): «Իսկ իմ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ» (Եզ., էջ 13): «Եւ երթեալ, որ գլխաւորն էր նոցա բերդին առաջի, սկսաւ բանս ինչ խօսել առ որ ի բերդին իշխանն էր» (Ա. Լ., էջ 117):

Քովմա Արծրունու գրքում մեկ անգամ գործածված է առաջ ձևով, որն արտահայտում է տարածական հարաբերությունը, այսպես՝ «Նոյն ժամայն ածեալ լինի սուրբն առաջ Շապհոյ» (էջ 115):

Երբեմն սրան հավելադրվում է յանդիման նախադրությունը, օրինակ՝ «Զերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր» (Ագաթ., էջ 29):

Շատ սակաւ դեպքերում խնդրի փոխարեն նախադրության վրա դրվում է ստացական հոդ: Օրինակ՝ «Զքոյին իսկ զհոգիդ տեսանես հանապաղ մեռեալ առաջիդ» (Փար., էջ 182), այսինքն՝ առաջի քո:

Ձառաջեալ բառն իբրև նախադրութիւն գործածվելիս արտահայտում է՝

ա) դադարում՝ «առջևը», «մոտը», «դիմացը» իմաստներով: Օրինակներ. «Որք սնան զառաջեալ թագաւորին Հայոց» (Բուզ., էջ 10): «Եւ կային զառաջեալ արքային ամենայն մեծամեծք նախարարք իւր» (Սեբ., էջ 42):

բ) ուղղութիւն՝ շարժում արտահայտող բայերի մոտ, ինչպես՝ «Ապա կոչեն զՄուշեղ զառաջեալ արքային» (Բուզ., էջ 63): «Եւ զոմն յառաջին կապելոցն Պարսկաց լուծեալ և ածեալ զառաջեալ նախարարացն, խօսէին ընդ նմա և ցուցանէին զամենայն վնասն որ եղև» (Եղ., էջ 81): «Հրաման տային ածել զերանելի սեպուհն Սիւնիաց զՅազդ ի նմին աւուր զառաջեալ իւրեանց» (Փար., էջ 139): «Եւ եմուտ ի խորանն, զառաջեալ արքայի եւթն արամբք» (Սեբ., էջ 45):

գ) «առջևից», «առջևով» իմաստները, ինչպես՝ «Յայնժամ արկեալ ի միտս իւր նենգաւոր արքային Քուշանաց՝ երթեալ անցանէր զառաջեալ նորա սակաւ արամբք» (Սեբ., էջ 62)⁴:

Նույն իմաստով և կիրառութեամբ շատ հազվադեպ հանդես է գալիս նաև յառաջ բառը: Օրինակ՝ «Վասն այնորիկ նա մի՛ հասցէ առ այն՝ որով սպառնացան, այլ խափան լիցի իւր յառաջն նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց» (Բուզ., էջ 98):

Արտաբոյ. այս նախադրութիւնը գործածվում է նախադաս և նըշանակում է՝

ա) «դուրս», «դուրսը»: Օրինակներ. «Եւ երինջն՝ զոր արտաբոյ բանակին սպանանէին յողջակէզ, ըստ որոց օրինակի և Քրիստոս արտաբոյ քաղաքին շարշարեցաւ» (Եղն. էջ 282): «Հանեալ այնուհետև զմարդն... արտաբոյ դրախտին բնակեցուցանէր» (Ագաթ., էջ 150): «Արդ ել նստաւ Դենշապուհ արտաբոյ բանակին յատենի» (Եղ., էջ 159): «Զգործս քաջութեան... թէ կամիցիս՝ արտաբոյ յայտրիկ գրոց կարգեսցուք, և կամ թողցուք. ապա թէ ոչ ի սմին» (Խոր., էջ 42): «Եւ քարշեալ արտաբոյ տանցն՝ գլխատեցին» (Սեբ., էջ 115): «Ապա ելեալ բանակեցան արտաբոյ քաղաքին» (Թ. Ա., էջ 154):

բ) «հեռու», ինչպես՝ «Զհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաբոյ իւերաւոց սահմանացն» (Բուզ., էջ 122):

գ) «հակառակ», «անկախ», «դուրս». այսպիսի գործածութեամբ արտահայտում է ընդդիմութեան հարաբերութիւն: Օրինակներ. «Արդ

⁴ Ձառաջեալը, որն ունի նաև զառաջն ձևը, խնդիր է վերցնում նաև գործիական հոլովով, որի մասին տե՛ս ստորև:

անասատութիւնն ևեթ որ արտաբոյ Աստուծոյ կամացն գործիցի պատ-
ճառ շարեաց իմանալի է» (Եղև., էջ 44): «Արտաբոյ գրոց սրբոց բար-
բանքն» (Ն. տ., էջ 260): «Եթէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր ան-
յուստութեամբ արտաբոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն» (Բուզ.,
էջ 193): «Եւ ըկարացեալ տանել դայթաղութիւնն՝ արտաբոյ Քրիստոսի
կանոնին վարեցաւ» (Փար., էջ 187): «Զնոյն գրեցաք, և զոր արտաբոյ
սոցա է՝ ոչ գիտելով թէ որպէս էր» (Թ. Ա., էջ 520): «Եւլանէ արտաբոյ
կանոնական կարգաց, և կոչէ զայլոս զայս յառաջ և առնէ այլ իւր» (Ա.
Լ., էջ 52):

դ) «դուրս» (անշատման իմաստով), ինչպես՝ «Եւ զխորխն խոզի
արտաբոյ մարմնոյն իւրոյ ի բաց ընկնոյր» (Ագաթ., էջ 401):

Միատեսակ կիրառութիւնն ունեն յանդիման, դէմ յանդիման, դէմ
ընդդէմ, հանդէպ նախադրութիւնները, որոնք դրվում են իրենց խընդ-
րից առաջ և արտահայտում են «դեմ», «դիմաց», «առջև» իմաստները:
Օրինակներ. «Յանդիման դրախտին բնակեցուցանէր» (Ագաթ., էջ 150):
«Որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յովն անուանեալ կար-
դան» (Բուզ., էջ 33): «Եւ բանակեցաւ դէմ յանդիման նորա» (Սեբ., էջ
27): «Կային ճակատեալք երկոքեան կողմանքն դէմ ընդդէմ միմեանց,
Պարսից և Հայոց» (Փար., էջ 134): «Եւ դարձցին բանակեսցին դէմ
յանդիման հանգրուանին... հանդէպ Բէհզսեպիոնեայ. յանդիման նոցա
բանակեսցիս առ ծովեղբրն» (Ս. Գ., հ. 1, էջ 134): «Կայցէ արեգակն
հանդէպ ձորոյն Գաբառնի» (Եղև., էջ 189):

Իբրև նախադրութիւն գործածվում է նաև ի դէմ կազմութիւնը,
որն արտահայտում է «դեմ», «ընդդէմ» իմաստները, ինչպես՝ «Եւ գնա-
ցին ինքեանք անդէն ի փղզմանս Թրակացւոց աշխարհին ի դէմ թըշ-
նամտյն» (Սեբ., էջ 72):

Այս նախադրութիւնները շատ հազվադեպ հանդես են գալիս նաև
ետադաս գործածութեամբ: Օրինակներ. «Որոց յանդիման կացոյց զինքն
կենդանի յետ շարշարանացն իւրոց» (Ս. Գ., հ. 4, էջ 242): «Եւլանիցէք
մերկք միմեանց դէմ ընդդէմ» (Ն. տ., հ. 3, էջ 452):

Որպես նախադրութիւն գործածվում է նաև ի հանդիպէ կազմու-
թիւնը, ինչպես՝ «Եւ յայնկոյս Յորդանանու ի հանդիպէ Երեքոյի» (Ս.
Գ., հ. 1, էջ 459):

Յանդիման-ը երբեմն խնդիր է առնում տրական հոլովով, ինչպես՝
«Բայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա
յետոյ զնա գլխատել» (Բուզ., էջ 206): «Եւ յանդիման նմին զկին նորա
Վարդանոյ խայտառակեալ իցէ» (Ս. Գ., հ. 3, էջ 689):

Նախադրութեան դերում հանդես է գալիս նաև ի դէմս կազմութիւ-
նը, որը դասական շրջանի մատենագրութեան մեջ ունի սահմանափակ

կիրառութիւնն: Այն սովորաբար գործածվում է անձ ցույց տվող բառերի հետ և արտահայտում է՝

ա) «դեմ», «դիմաց», «առջև» իմաստները, ինչպես՝ «Պսակ փառացն ունեւում ի դէմս իւր» (Ա. Լ., էջ 56)։

բ) «դիմաց», «ներկայութեամբ» գաղափարը, օրինակ՝ «Որպէս ասէն յիրաւի ի դէմս նոցա նոյն երգողին մարգարէութիւն» (Ագաթ., էջ 324)։

գ) «միջոցում» իմաստը, ինչպես՝ «Եւ զի յայտ արասցէ, եթէ անտի մարգարէացաւ՝ զնովիմբ ածեալ և ի դէմս աշակերտացն» (Ագաթ., էջ 241)։ «Որ և ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի» (Ս. Գ., հ. 4, էջ 438)։

Իբրև նախադրութեան է գործածվում նաև ի դիմաց կազմութիւնը, որը նշանակում է «կողմից», «անունից», «փոխարեն»։ Օրինակներ. «Ասաց մարգարէն ի դիմաց Տեառն» (Ագաթ., էջ 174)։ «Եւ եղև զկնի երից ատուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բովսայի ըի դառնութեամբ, կնքեալ մատանեալ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ» (Թ. Ա., էջ 248)։

Յերեսաց հոլովածը հանդես է գալիս նաև իբրև նախադրութիւն, որն արտահայտում է պատճառի իմաստ՝ «պատճառով» նշանակութեամբ։ Օրինակներ. «Յերեսաց քոց ես յո՞ փախեալց» (Ագաթ., էջ 147)։ «Եւ երկիր խախտեցաւ յերեսաց նորա» (Ն. տ., էջ 239)։ «Աստուած զազգսն զայնոսիկ ջնջեաց յերեսաց որդւոցն Իսրայէլի» (Խոր., էջ 25)։

Յերեսաց-ը արտահայտում է նաև անջատում, ինչպես՝ «Եւ ի սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս» (Խոր., էջ 56)։ «Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, և զնայր նա փախստական» (Սեբ., էջ 4)։ «Եւ ի խմբել պատերազմին՝ փախստական լինի Սմբատ զօրօքն հանդերձ յերեսաց այլազգեացն» (Թ. Ա., էջ 453)։

Գրաբարում սրանով արտահայտվում էր նաև ներգործող խնդիրը, ինչպես՝ «Ապա ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց նոցա, դարձան ի փախուստ» (Բուդ., էջ 125)։

Որպես նախադրութեան հանդես է գալիս նաև յերեսս ձևով, օրինակ՝ «Եւ խոնարհեցի հպարտութիւն Իսրայէլի յերեսս նորա» (Ս. Գ., հ. 3, էջ 439)։

Զկնի և զհետ հոմանիշ նախադրութիւններն արտահայտում են՝

ա) «ետևից» գաղափարը։ Օրինակներ. «Որ զկնի իմ գայ՝ առաջի իմ եղև» (Ագաթ., էջ 208)։ «Հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէտյ արշաւիցեն» (Եզն., էջ 107)։ «Գնացին զհետ նորա հանդերձ կանամբք և որդւովք»

(*Խոր.*, էջ 310): «Եւ ընդոստուցեալ դառնութեամբ Խոսրով՝ արձակէ զկնի նոցա զար» (*Սեբ.*, էջ 46).

բ) «Հետո» (ժամանակի առումով) գաղափարը: Օրինակներ. «Զկնի իսկ եկելոցս մարգարէիւք ամեներումք ծանօթս տայ» (*Ագաթ.*, էջ 185): «Զկնի Խոսրովու Փոքու թագաւորէ Տիրան որդի նորա» (*Թ. Ա.*, էջ 107): «Սա զնետ հօրն իւրոյ զառաքելական յաջորդէր» (*Բուդ.*, էջ 26).

գ) «Հետ», «միասին» դաղափարը: Օրինակներ. «Տեսանէի և ահա-լասիկ անիւ մի յերկրի զնետ գաղանացն շորեցունց» (*Ս. Գ.*, հ. 3, էջ 703): «Ուր ենն երթամ, դու՝ ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ» (*Ն. տ.*, հ. 4, էջ 216):

Ինչպես երևում է բերված օրինակներից էլ, այս նախադրությունները հիմնականում ունեն նախադաս գործածություն, այսպես, օրինակ, Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» գրքում զկնի-ն 40 անգամ գործածված է նախադաս, 3 անգամ հտադաս, զնետ-ը՝ 14 անգամ նախադաս, 1 անգամ հտադաս, Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» գրքում զկնի-ն 27 անգամ գործածված է նախադաս, 2 անգամ հտադաս, զնետ-ը՝ 14 անգամ նախադաս, 1 անգամ հտադաս, Նղիշի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում տվյալ նախադրությունները գործածված են միմիայն նախադաս (զկնի-ն՝ 14 անգամ, զնետ-ը՝ 6):

Այժմ բերենք հտադաս գործածության օրինակներ. «Ի վերայ պատուարին եօթնետասն այր նետիւք հարեալ՝ վերուստ ի վայր հոսեաց միմեանց զկնի, իբր ի սաստիկ իմն մորկէ վաղահասուկ թզենեաց» (*Խոր.*, էջ 308): «Զորոյ զնետ յաջորդեաց զթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ» (*Փար.*, էջ 33):

Զկնի և զնետ նախադրությունների զ նախդիրը հաճախ անջատվում է բառից և անցնում է խնդրից կամ նախադասության այլ անդամից առաջ, այսպես՝ «Հոմերոս զրաբանեալ, զնորին հետ երթեալ, պաճուճեալ բանիւք զնոյնս ճամարտակէ» (*Եզն.*, էջ 240): «Մի զմիոյ կնի ընթացուցանէր դեսպանս հրովարտակօք պատարագօք» (*Թ. Ա.*, էջ 74):

Երբ հիշյալ նախադրությունները գործածվում են հտադաս, սովորաբար զ նախդիրը դրվում է նաև խնդրի վրա: Օրինակներ. «Վասն որոյ ածէ զնորին զկնի, թէ յափշտակեցաւ այնպիսին ի դրախտն» (*Եզն.*, էջ 262): «Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդոյն նորա ի Պապայ զմիմեանց զկնի ի շաբաթու եկեալ հասանէին» (*Բուդ.*, էջ 144—145): «Որ կուռ զմիմեանց զկնի ի վերայ գային» (*Խոր.*, էջ 11): «Զորոց զկնի հետաժուտ եղեալ Սմբատ որդի Աշոտի զօրօքն իւրովը՝ կամէր արկանիլ

զգիտաստեայան ի սուր սուսերի» (Ղեւոնդ, էջ 25): «Մեք զգրոց սրբոց զնեւ երթիցուք» (Եղն., էջ 211): «Ի պէտս սրբոց հաղորդեցար ուր. զհիւրասիրութեան զնեւ երթայք» (Ս. Գ., հ. 4, էջ 393): «Զխաղաղութեան զնեւ երթայք ընդ միմեանս՝ և զսրբութեան» (ն. տ., էջ 524):

Երբ միևնույն նախադրությունը վերցնում է բաղմակի խնդիրներ, նա դրվում է միայն առաջին խնդրի վրա, իսկ մյուսների հետ կրկնվում է զ նախդիրը: Օրինակներ. «Ե՛րթ զնեւ արդարութեան, զհաւատոյ, զսիրոյ, զխաղաղութեան, զսրբութեան» (Ս. Գ., հ. 4, էջ 539): «Ե՛րթ զնեւ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան» (ն. տ., էջ 535): Այսինքն՝ զնեւ արդարութեան, զնեւ աստուածպաշտութեան, զնեւ հաւատոյ, զնեւ սիրոյ և այլն: Այս օրինակները ցույց են տալիս, որ հիշյալ նախադրությունների կազմում զ-ն իբրև նախդիր գլխակցվել է, տարրորոշվել:

Շատ հազվադեպ՝ խնդիրն փոխարինում է ստացական հոդը: Օրինակ՝ «Եւ երթայր Յիսուս առաջի քան զնոսա, և զարմացեալ էին որ զնետն երթային» (Ս. Գ., հ. 4, էջ 93), այսինքն՝ որ զնեւ նորա երթային:

Նախադրության դերում հանդես է գալիս նաև զկնիագոյն ձևը, որը կազմում է զկնի-ի համեմատական աստիճանը, այսպես՝ «Որ կայ զրկնիագոյն եպրսկոպոսին Նաեբի» (Բուզ., էջ 83):

Որպես նախադրություն գործածվում է ի նետոց կազմությունը, որն արտահայտում է «ետևից», «թիկունքից», «հակառակ կողմից» իմաստները: Օրինակ՝ «Միշնչե ցե՞րք ոչ ապիցես ժողովրդեանն դառնալ ի նետոց եղբարց իւրեանց» (Ս. Գ., հ. 4, էջ 75):

Ընդ աջմէ. երբ հանդես է գալիս իբրև նախադրություն, դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է «աջից», «աջ կողմից» գաղափարը: Օրինակներ. «Եւ զՈրդին ընդ աջմէ Հօր Աստուծոյ այս գործով արժանի եղև տեսնել» (Բուզ., էջ 66): «Եւ նստաւ ընդ աջմէ ծնողին իւրոյ Աստուծոյ» (Ագաթ., էջ 195): «Եւ նստաւ ընդ աջմէ հայրենի աթոռոյն» (Եղ., էջ 148)⁵:

Նույն կիրառությամբ երբեմն հանդես է գալիս յաջմէ բառը, ինչպես՝ «Խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ անտի» (Բուզ., էջ 68): «Նստելովն յաջմէ աստուածութեան քոյ» (Ագաթ., էջ 83):

Ընդ առաջ մակերայր հաճախ գործածվում է նաև որպես նախադրություն, որը սովորաբար լինում է նախադաս և արտահայտում է «դեմ»,

⁵ Նույն իմաստով գործածվում է նաև բացառական խնդրով, ինչպես՝ «Կայցէ զշատ ընդ աջմէ կողմանէ իւրոյ զնգին պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարին» (Եղ., էջ 116):

«դիմաց», «առջև» գաղափարը: Օրինակներ. «Եւ ելանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թակղէս դարդարեալ մեծապայծառ» (Բուզ., էջ 86): «Աստ աճապարեալ Արտաշէս մեծապէս ընծայիւք իջանէ ընդ առաջ նորա» (Խոր., էջ 185): «Փութացան եւ ելին ընդ առաջ նորա վաղվադակի արք և կանայք» (Նղ., էջ 190): «Եւլանէին ընդ առաջ նորա ի քաղաքաց քաղաքաց» (Ղեւոնդ, էջ 111):

Ունի նաև ետադաս գործածութիւն: Օրինակներ. «Եւլանէին միմեանց ընդ առաջ մեծաւ ուրախութեամբ» (Բուզ., էջ 87): «Երթեալ թագաւորին ընդառաջ», վստահութիւն տայր բանից» (Ա. Լ., էջ 28):

Երբեմն խնդիր է ընդունում տրական հոլովով, ինչպես՝ «Ընդ առաջ նմա վերանալ» (Ագաթ., էջ 387): «Յորժամ յնկեղեաց կամ ի Կարին ելանես, քեզ ընդառաջ գայ» (Ա. Լ., էջ 28):

Ընդ դէմ նախադրութիւնը (որին մեր մատենագրութեան մեջ ավելի հաճախ հանդիպում ենք կից գրութեամբ) դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է՝

ա) դադարման գաղափար՝ «դեմ», «դիմաց», «առջև», «առաջ» իմաստներով: Օրինակներ. «Կարգէր և զիւր դունդն երանելի զօրավարն Հայոց Վարդան, ըստ բաւականին այրուծիոյն իւրոյ, ընդդէմ նոցա» (Փար., էջ 65): «Վասն որոյ աղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց, որք գտնողի առեալ կային ընդդէմ զնդին Վարդանայ» (Նղ., էջ 118): «Իսկ ընդդէմ լերինն Կապասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր աղզն» (Խոր., էջ 114): «Կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գումարտակ զնդաւ» (Ն. տ., էջ 287):

բ) ուղղութեան գաղափար՝ «դեմ», «դեպի» և նման այլ իմաստներով. այսպիսի կիրառութեամբ գործածվում է տեղաշարժ ցույց տվող բայերի հետ: Օրինակներ. «Թագաւորն Յունաց... շու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից» (Բուզ., էջ 47): «Եւ նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդ դէմ սոցա» (Ն. տ., էջ 123): «Իսկ ի բաղիսն զմիմեանս՝ եղև ի վերայ հովանի ամպոց, և հողմ սաստիկ ի մերօցն կուտէ ընդդէմ պարսկականին փշեալ» (Խոր., էջ 304):

գ) «հակառակ», «ենդհակ», «ընդդեմ» գաղափարը (ընդդիմութեան իմաստով): Օրինակներ. «Մեք ընդէ՞ր դառնայցեմք ընդդէմ հրամանացն» (Նղ., էջ 162): «Եւ ոչ ոք եկաց ընդդէմ ձեր մինչև ցայսօր» (Ս. Գ., հ. 1, էջ 464): «Որ հակառակն էին ընդդէմ աստուածատուր շնորհացն» (Թ. Ա., էջ 510):

6 Ա. Լատիվերտցու «Պատմութիւն» գրքում այս բառը հանդես է գալիս որպէս կցական բարդութիւն:

դ) հանգամանքաւոր, ինչպես՝ «Եւ հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց» (Թ. Ա., էջ 241)։

ի) «փոխարեն», «դիմաց» գաղափարը, օրինակներ. «Որք իշխեցին ընդդէմ Աստուածորդոյն խոտտանալ» (Ագաթ., էջ 289)։ «Եւ առցէ յարենէ զուարակին, և ցանեացէ մատամբ իւրով ի վերայ քառութեանն ընդ կողմն արեւելից ընդդէմ քառութեանն» (Ս. Գ., հ. 1, էջ 228)։

Շատ սակաւ դեպքերում դրվում է իր խնդրից հետո։ Օրինակներ. «Եւ նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն» (Ագաթ., էջ 17)⁷։ «Դարձեալ անդրէն առ միմեանս միմեանց ընդդէմ ի մի վայր ժողովէին» (Ս. Գ., հ. 2, էջ 564)։

Երբեմն սրան համեմատվում է դէմ բաղադրիչը, այսպես՝ «Եւ եղ զնոսա դէմ ընդ դէմ միմեանց» (Ս. Գ., հ. 1, էջ 29)։

Նախադրութեան դերում հանդես է գալիս նաև ընդդիմակ ձևը, որն արտահայտում է ընդդիմութեան գաղափար, օրինակ՝ «Կեանք ցաւագինք քան թէ առողջութիւն ընդդիմակ մահու յաջորդին» (Թ. Ա., էջ 398)։

Ի թիկանց, ի թիկունս, զթիկամբ կազմութիւնները գործածվում են նաև իբրև նախադրութիւն և արտահայտում են տեղի գաղափար՝ «թիկունքից», «ետևից», «ետևի կողմից» նշանակութեամբ։ Օրինակներ. «Ի պատիւ գլխոյ ի վերայ գազաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյց» (Բուզ., էջ 207)։ «Բանակեցան Եգիպտացիքն ի թիկանց նոցա» (Ս. Գ., հ. 1, էջ 135)։ «Եւ չափեաց երկայնութիւն անշրպեալին ընդդէմ խորշիցն ի թիկանց տանն» (Ն. տ., հ. 3, էջ 788)։ «Եւ հայեցաւ Բենիամին ի թիկունս իւր» (Ն. տ., հ. 1, էջ 516)։ «Դարձեալ ի յաթոռ հայրապետութեան իւրոյ ի կղզիս Աղթամար ի դուռն սուրբ Խաչիս շինեաց գեղեցիկ և մեծանիստ տեղեալք ի թիկունս սուրբ Խաչին զժամատունն մեծ յաւուրս ձմերայնոյ» (Թ. Ա., էջ 523)։ «Ապա երանէ՛ արքայ զթիկամբ Մասեաց առնել որսս իւրում սիրեցեալ գաւառին ի Կոգայտլտի» (Խոր., էջ 283)։ Վերջինս երբեմն գործածվում է զթիկամբն ձևով, ինչպես՝ «Բայց Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ ելանէ առ ափն ծովուն Գեղամայ, զթիկամբն Արագածն կռեցեալ լերին» (Խոր., էջ 170)։

Ի կողմն, ի կողմանս, ի կողմանէ կազմութիւնները երբեմն հանդես են գալիս նախադրութեան դերում, տրոնք, բացի սեռական հոլովով խնդիր ընդունելուց, հոլովակաճ ձգողութեան օրենքի համաձայն՝ խընդիւր կարող են ստանալ նաև կողմն բառի հոլովով։ Դասական գրաբարում դրանք հիմնականում պահպանում են հատկացուցչի և հատկացյալի հարաբերութիւն։ Տվյալ բառերը, երբ գործածվում են որպես նախա-

⁷ Այսպիսի կիրառութիւնից էլ առաջացել է ընդդէմ կամ հարադրութիւնը։

դրություն, ցույց են տալիս տեղ՝ «կողմում», «կողմերում», «կողմից» նշանակութեամբ: Օրինակներ. «Ջսուրըն Գալիանէ ի կողմն հարաւոյ, իւրոյ մարտիրոսութեանն երկու ընկերօքն զնէր ի վկայարանի տաճարին» (Ագաթ., էջ 399): «Որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ» (Բուզ., էջ 9): «Եւ եկին ի հարաւոյ կողմանէ» (Ս. Գ., հ. 2, էջ 123):

Որպէս նախադրություն է գործածվում նաև ընդ կողմն կազմությունը, ինչպէս՝ «Եւ մեծ մասն զօրոն հատեալ ասպատակէին յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից» (Ղեւոնդ, էջ 7):

Նախադրութեան դերում հանդես է գալիս նաև զկողմամբ բառը, որն արտահայտում է շարժման կամ դադարի դադարիար՝ «կողմերը», «կողմերում» նշանակութեամբ: Օրինակներ. «Իսկ Սմբատայ տեղի տուեալ Գնաց զկողմամբ Ասորեստանի» (Խոր., էջ 183): «Եւ ելեալ ասպատակ սփռէր զկողմամբ Ատրպատական աշխարհին» (Ղեւոնդ, էջ 133):

Յայսկոյս և յայնկոյս բառերը հիմնականում գործածվում են իբրև մակրայ: Երբեմն դրանք կիրառվում են նաև որպէս նախադրություն. այդ դեպքում արտահայտում են տարածական հարաբերություն:

Յայսկոյս բառը արտահայտում է «այս կողմը», «այս կողմում», «առաջը» դադարիար: Օրինակներ. «Նա և զհամբարապետն իսկ և բազումս ի շանց յայսկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն» (Ագաթ., էջ 28): «Արդ առեալ զպատուաւորս քո զօրուդ ըստ թուոյ աղջկանցս իմոց՝ ա՛նց յայսկոյս գետոյս» (Ղեւոնդ, էջ 39):

Իսկ յայնկոյս-ը արտահայտում է «այն կողմը», «այն կողմում», «մյուս կողմում», «դիմացը» իմաստները: Ըստ որում, սա ավելի հաճախակի է հանդիպում: Օրինակներ. «Եւ կէսքն անկեալ երին յայնկոյս չրոյն» (Ագաթ., էջ 385): «Տարեալ անցուցանէին զքաղումս ի զօրացն Պարսից յայնկոյս Կուրն գետոյն» (Փար., էջ 134): «Որ է յայնկոյս Յորդանանու» (Ս. Գ., հ. 1, էջ 100): Նախադրությունն առաջին երկու օրինակում արտահայտում է շարժման, իսկ երրորդում՝ դադարի իմաստ:

Ի համար նախադրությունն ունի նպատակի իմաստ՝ «համար», «նպատակով» նշանակութեամբ: Օրինակներ. «Եւ միայն զառաջին որդին իւք, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան» (Խոր., էջ 118): «Թէպէտ և էր ի համար Արտաշիւրի՝ այլ ոչ տեսանէ զնա» (Ն. տ., էջ 235): «Ջալսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ... յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի որօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ» (Ն. տ., էջ 242):

Հաւասար ածականը, երբ գործածվում է որպէս նախադրություն, արտահայտում է բաղդատական հարաբերություն՝ «նման», «պէս»,

«հալածար» նշանակութիւնով: Ունի՛ւ և՛ նախադաս, և՛ ետադաս շարահասութիւն: Օրինակներ. «Զի ոչ որ է առաջին քան զնա... և ոչ ընկեր հաւասար նորին» (Եզն., էջ 6): «Եւ շափեաց զկողական վեց վեց զկամարօք դրանն հաւասար ձողոյն. և զերկայնութիւն կողակին հաւասար ձողոյն, և զլայնութիւն նորին հաւասար ձողոյն» (Ս. Գ., հ. 3, էջ 784): «Եւ երթայր հողմն ուռուցեալ լերինն հաւասար» (Ագաթ., էջ 424):

Ի ձեռն, ի ձեռս, ի ձեռանէ, ի ձեռաց, ընդ ձեռն, ընդ ձեռամբ նախադրութիւններն ու որպես նախադրութիւն գործածվող բառերը հիմնականում ցույց են տալիս աջն առարկան, որի միջոցով կամ օգնութիւնով կատարվում է գործողութիւնը: Օրինակներ. «Ի ձեռն առն միոջ եցոյց զսքանչելիս» (Ագաթ., էջ 11): «Եւ գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ և որք ընդ նմա էին, առաքէր» (Բուդ., էջ 88): «Արդ՝ ի վերայ նոցա այր մի ընտիր, ի ձեռանէ Մովսիսի, հրամանաւ Աստուծոյ զօրավար և առաջնորդ կացուցեալ» (Ագաթ., էջ 162): «Արդ՝ եթէ դու եղալ ես պատճառքո կորստեանդ և այնչափ բազմութեանն որ կորեան ընդ քո ձեռն՝ դու այսօր հարցման արժանի էիր, և պատուհասի և շարաշար մահու» (Փար., էջ 172): «Յատուր յորո՞ւմ մատնեաց Տէր Աստուած զԱմովրհացին ընդ ձեռամբ որդւոցն Իսրայէլի» (Ս. Գ., հ. 1, էջ 435):

Կրավորական կառուցվածքի նախադասութիւնների կազմում զբաղւած արտահայտում են «կողմից» իմաստը: Օրինակներ. «Ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն» (Բուդ., էջ 167): «Իբրեւ ետես Անտիոքոս եղբայր Դեմետրեայ, եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս ի ձեռս Արշակայ արքայի՝ ինքն թագաւորէ ի վերայ Ասորաց և Ասիաստանի» (Սեբ., էջ 8):

Բացառականից կազմված ձևերն իբրեւ նախադրութիւն գործածվելիս արտահայտում են նաեւ անջատման հարաբերութիւն, ինչպես՝ «Ասէ՛ Աստուած Հօր իմոյ օգնական իմ, և ապրեցայց զիս ի ձեռաց փարաւոնի» (Ս. Գ., հ. 1, էջ 142): «Ո՞վ է Աստուած որ փրկէ զձեզ ի ձեռաց իմոց» (Ա. Լ., էջ 93):

Ձեռն գոյականից առաջացած նախադրութիւններն ու որպես այդպիսիք գործածվող բառերը արտահայտում են նաեւ պատճառական հարաբերութիւն, օրինակ՝ «Զոր օրինակ սոռացան հարբն դոցա զանուն իմ ի ձեռս Բահաղու» (Ս. Գ., հ. 3, էջ 568):

Երբեմն խնդիրն ընկնում է նախադրութիւն բաղադրիչների միջև: Օրինակներ. «Յորոյ ձեռն բոխեցէ աղբիւր մկրտութեան» (Ագաթ., էջ 390): «Զամենայն ընդ Մովսիսի ձեռն պատուիրեաց» (Ղեոռնդ, էջ 56):

Ետադաս գործածութիւն ժամանակ ի նախդիրը դրվում է նաեւ խնդրի վրա: Նման կիրառութիւն հանդիպում ենք բարդ նախադասու-

թյան կազմում: Այդ դեպքում երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է ու հարաբերական դերանվամբ: Օրինակ՝ «Քրիստոսն է որդի Աստուծոյ, յուրոյ ի ձեռն արար նա զաշխարհս» (Ագաթ., էջ 35):

Մասամբ բառը երբեմն գործածվում է իբրև նախադրություն և արտահայտում է սահմանափակման հարաբերություն՝ «կողմից», «տեղանկից» նշանակությամբ: Ունի և՛ նախադաս, և՛ հետադաս գործածություն: Օրինակներ. «Դու ոչ խնայեցեր յաղագլինսն մեր Կամսարականս, որ առաւել քան զիս էին քեզ հարազատագոյնք, դենի ձերոյ մասամբ և աշխարհաւ համաբնական» (Խոր., էջ 299): «Եկեալ Շամուէլի՛ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեանն, հետեւեալ վարուցն Բրքիշոյի՛ և առաւել ևս ազահութեան մասամբ» (Ն. տ., էջ 353):

Ի մէջ, ի միջի, ի միջոյ, ընդ մէջ կազմությունները գործածվում են նաև նախադրության դերում⁸:

Հին հայերենի ամենագործածական նախադրություններից մեկը ի մէջ-ն է, որն արտահայտում է՝

ա) «մեջ» (ներգոյականի առումով), շրջանում՝ իմաստները: Օրինակներ. «Օղս՝ որ ի մէջ գնդից երկնից՝ փակեալ կայ» (Եղն., էջ 192): «Յայնմ ժամանակի ոչ սակաւ ինչ խռովութիւն լինէր ի մէջ Յունաց աշխարհին» (Ագաթ., էջ 86): «Ի մէջ Բաբելոնի վախճանեսցի» (Ս. Գ., հ. 3, էջ 732): «Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գաղանաց ի ժողովս խուժադուժ բարձարոսաց բնակէր» (Թ. Ա., էջ 266):

բ) ուղղության գաղափար. այս դեպքում գործածվում է տեղաշարժ ցույց տվող բայերի մոտ: Օրինակ՝ «Ապա այն... երթեալ մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց» (Բուզ., էջ 226):

գ) «միջև» (տարածական իմաստով) գաղափարը: Օրինակներ. «Բարիոք է արեգակն... իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ» (Եղն., էջ 14): «Ընդ անհնարին պատերազմ մարտնչին ի մէջ բարձրացելոց ջրեղէն լերանց և ի մէջ խոնարհելոց ծովային ձորոց» (Ագաթ., էջ 3):

դ) «միջև» (փոխադարձ կապի իմաստով) գաղափարը: Օրինակներ. «Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից» (Բուզ., էջ 42): «Եւ սաստկացաւ պատերազմ ի մէջ նոցա զգ ամս» (Ղեւոնդ, էջ 15):

⁸ Ի միջի-ն ստացական դերանունների հետ գործածվելիս խնդիր է ստանում նաև տրական հոլովով (տե՛ս ստորև):

⁹ Այս իմաստն արտահայտվում է նաև ընդ նախդրի կրկնությամբ: Օրինակ՝ «Վի՛ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ» (Ս. Գ., հ. 4, էջ 159), այսինքն ի մէջ մեր և ձեր:

Փոխադարձ կապի իմաստը սաստկացնելու և ավելի կոնկրետացնելու նպատակով երբեմն ի մէջ-ը դրվում է բաղմակի իր բոլոր խնդիրները միասին՝ Օրինակներ. «Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես պատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո» (Բուզ., էջ 139): «Եւ եղև խաղաղութիւն ի մէջ Թադաւորացն Յունաց և ի մէջ Թադաւորին Պարսից Շապհոյ» (Ն. տ., էջ 115):

Ի միջի նախադրութիւնը մեծ մասամբ գործածվում է նախադաս և արտահայտում է տարածական հարաբերութիւն՝ «մեջ», «ներսում» նըշանակությամբ: Օրինակներ. «Զի մի՛ ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ ինչ երեւեսցի հուն մի, նշանակեցաք» (Բուզ., էջ 5): «Զոր օրինակ ձուլեսցի արծաթ մի ի մէջ բովոյ, այնպես ձուլեսջիք ի միջի դորա» (Ս. Գ. հ. 3, էջ 745): «Զի արիւն նորա ի միջի նորա է» (Ն. տ., էջ 750):

Տեղաշարժի փմաստ ունեցող բայերի հետ գործածվելիս ցույց է տալիս ուղղութիւն: Օրինակ՝ «Զի շնն սովոր դժոխք՝ ընդունել ի միջի իւրեանց զկեանս» (Եզ., էջ 247):

Երբեմն ի միջի-ի բաղադրիչները հեռանում են իրարից, և խնդիրն ընկնում է նրանց միջև: Կրնում են շեղւել էլ, երբ որպէս նախադրութիւն հաղորդում գործածությամբ հանդես է գալիս միջի բաղադրիչը: Օրինակներ. «Կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի» (Կոր., էջ 92): «Որ ի մարդկան միջի ոչ պաշտի» (Եզ., էջ 252): «Յորժամ ուրախութեան միջի իցես՝ չարաց զգոյշ կաց» (Ս. Գ., հ. 4, Յաւելուած, էջ 15):

Ի միջոյ նախադրութիւնն արտահայտում է անջատման հարաբերութիւն, ինչպէս՝ «Եւ հանեալ զոգիսն ի միջոյ նորա, տարաւ յերրորդ երկինսն առ հայրն փր» (Եզ., էջ 248): «Եւ ի բաց բարձ զանուն քրիստոնէութեան ի միջոյ նոցա» (Թ. Ա., էջ 207):

Ընդ մէջ-ն արտահայտում է՝

ա) «միջև», «միջով» գաղափարը (հոգնակի կամ բաղմակի խնդիրներով): Օրինակներ. «Յայտ է՝ թէ այլ ինչ էր անջրպետ ընդ մէջ երկոցոն մեծ քան զերկոսին» (Եզ., էջ 23): «Գլխատը գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բղնունիք, Մոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք» (Բուզ., էջ 97): «Եւ հերձ ճանապարհ ընդ մէջ կենդանեաց և մեռելոց» (Ս. Գ., հ. 3, էջ 265):

բ) «միջից», «միջով» գաղափարը: Օրինակներ. «Եւ ինքն հզօրաբար քաջ ուխտակցօքն նման առիծու ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր» (Փար., էջ 152): «Եւ հատանէ անցանէ ընդ մէջ նորա գետ յորդահոսան» (Սեբ., էջ 5):

ի) միջոց. սա երբ գործածվում է որպէս նախադրութիւն, արտահայտում է՝

ա) տեղ՝ «մեջտեղը», «մեջտեղով», «մեջտեղում», «միջով» իմաստ-

ներով, Օրինակներ. «Արշաւալ ի միջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամբոխիւ» (հոր., էջ 266): «Հասանէ ի միջոց աշխարհիս» (ն. տ., էջ 106): «Եւ այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնացան ի վերայ բազում ամրոցացն» (Եղ., էջ 125): «Եւ յառաջ խաղացին ի միջոց աշխարհին, մարտ եղեալ կոռէին ընդ մեծ ամուրս կապոյտ լերինն» (ն. տ., էջ 125):

բ) Հանգում (այսպիսի կիրառութիւնը խիստ հազվադեպ է), ինչպես՝ «Եւ գունդն, որ էր ի կողմանս Ատրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ ի միջոց աշխարհին» (Եղ., էջ 79):

Տարածական հարաբերութիւնն է արտահայտում նաեւ ի միջոցի կազմութիւնը, ինչպես՝ «Արքայն Տիտանեան... խորհէր ի միջոցի ամբոխին ամբանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն» (հոր., էջ 36): «Որ ի միջոցի աշխարհիս» (ն. տ., էջ 105): «Դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին» (ն. տ., էջ 165):

Յետ. սա եւ գրաբարի ամենագործածական նախադրութիւններից է, որն ունի նախադաս կիրառութիւնն և նշանակում է «հետո» (ժամանակի առումով), «անց», «այնուհետեւ»: Օրինակներ. «Յետ հազար ամի յաշտ առնելոյ սկսաւ ածել զմտաւ» (Եղ., էջ 113): «Դէպ լինէր յետ վախճանի սրբոյն» (Կոր., էջ 96): «Յետ գնալոյ նորա անտի, յետ Լրկուց աւուրց սատակեցաւ կինն Մանաճերհայ» (Բուզ., էջ 22): «Եւ յետ այսորիկ ետ հրաման» (Ագաթ., էջ 61): «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, և կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց սիրելեացն» (Եղ., էջ 124): «Յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ հայրապետն Մշտոց» (Թ. Ա., էջ 132): «Զի կտակ՝ յետ մահու հաստատուն է» (Ս. Գ., հ. 4, էջ 516)¹⁰:

Յետոյ մակբայը երբեմն գործածվում է իբրեւ նախադրութիւն, դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է՝

ա) «հետո» (տեղի առումով), «ետևում», «ետևը», «ետևից» իմաստները: Օրինակներ. «Քանզի յետոյ նորա կայր» (Ս. Գ., հ. 1, էջ 32): «Եւ այս գունդը Գեթսոնի՞ յետոյ խորանին ընդ ծովակողմն բանակեսցին» (ն. տ., էջ 263): «Փրկեցեր զանձն իմ զի մի՞ կորեայց, և ընկեցեր յետոյ իմ զամենայն զմեղս իմ» (ն. տ., հ. 3, էջ 385): «Եւ յառաջնումն ամի իշխանութեան նորա երկեցաւ աստղն զարմանալի տեսլեամբ վարսաւոր, զի ճաճանչ նշողիցն սիւնածև յիւրմէն փողփողէր զլոյսն յետոյ ինքեան» (Դեռնդ, էջ 17):

բ) «հետո» (ժամանակի առումով) գաղափարը, ինչպես՝ «Երեմիս

¹⁰ Այսպիսի կիրառութիւնից էլ առաջացել է աշխարհաբարի հետմահու բառը:

մարդարէ հրամանն ետ առնուլ ի հրոյ անտի յայնմանէ յետոյ նոցա՝ որպէս ցուցանի» (Ս. Գ., հ. 2, էջ 609)¹¹:

Յետուստ մակբայը գործածվում է նաև որպես նախադրութիւն, որն արտահայտում է ժամանակի և տեղի գաղափար, ինչպես՝ «Վասն բազմութեան անիրաւութեան քոյ՝ յայտնեցաւ յետուստ քո խայտառակեալ զկրկոնս քո» (Ս. Գ., հ. 3, էջ 549): «Եւ ելեալ զնացիւն բռնութեամբ, հարեալ զՅոյնն և փախստական արարեալ յետուստ իւրեանց» (Սեբ., էջ 80):

Նախադրութեան դերում հանդես է գալիս նաև յետս մակբայը, որն ունի՝ «հետ», «ետևից» իմաստները: Օրինակներ. «Յայնժամ ասէ ցնա Յիսուս. ե՛րբ յետս իմ սատանայ» (Ս. Գ., հ. 4, էջ 10): «Եւ նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ. ե՛րբ յետս իմ սատանայ» (ն. տ., էջ 38):

Ներքոյ. սա իբրև նախադրութիւն գրաբարում շատ սահմանափակ կիրառութիւն ունի: Երբ գործածվում է որպես նախադրութիւն, արտահայտում է տեղի գաղափար՝ «տակ», «ներքև» նշանակութեամբ: Օրինակներ. «Եւ եղ զնա ի Փորոնին ներքոյ սեանն» (Խոր., էջ 238): «Հաւաքեալ ի սայլսն ներքոյ եղեգանն՝ բերեալ թաղեցին ի նոյն հորս» (ն. տ., էջ 296): «Զյարուցեալսն ի վերայ իմ և ներքոյ իմ արարեր» (Ս. Գ., հ. 3, էջ 26):

Նախադրութեան դերում ավելի շատ հանդես է գալիս ի ներքոյ կազմութիւնը, որն արտահայտում է՝

ա) «ներքև» իմաստը, օրինակներ. «Բարիոք է արեգակն... մեղ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման» (Եղն., էջ 14): «Յորում է շոնջ կենդանի ի ներքոյ երկնից» (Ս. Գ., հ. 1, էջ 16): «Որք վիճակեալք են ի բնակութիւն ի ներքոյ արեգականս» (Եղ., էջ 47):

բ) «տակ» (դադարի կամ շարժման ուղղութեան իմաստով). այսպիսի կիրառութեամբ ավելի շատ է հանդիպում: Օրինակներ. «Եւ եմուտ ի ներքոյ փղին» (Բուզ., էջ 117): «Ի գիշերի կամին ի ներքոյ պարսպին զերկիւն փորել և մտանել ի ներքս» (Ա. Լ., էջ 91):

գ) «տակով», «ներքևով» իմաստները, ինչպես՝ «Անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զաւրաւոր ծառոց... յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր» (Սեբ., էջ 56):

դ) «տակ» (իրավական իմաստով) գաղափարը: Օրինակներ. «Քրիստոս... դնէ զամենայն թշնամիս ի ներքոյ ոտից փոքոց» (Եղն., էջ 273): «Դաւիթ... զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա» (Թ. Ա., էջ 17):

¹¹ Գործածվում է նաև բացառական խնդրով, այսպես՝ «Եւ թաքիչք անդ զերիս աւուրս, մինչև դարձցին խնդրակցն յետոյ ձերմէ» (Ս. Գ., հ. 1, էջ 418):

Նորեմբեր Ընդունում է կրկնակի նախդիրներ, ինչպես՝ «Ձմախելացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք առ ի ներքոյ երկնից» (Կոր., էջ 30):

Շատ հազվագեղ է ետադաս գործածությունը, այսպես՝ «Իսկ մարդկանս ի ներքոյ, ի հողեղէն բնակութեան երկրիս, տուան վիճակը» (Ագաթ., էջ 126):

Ի ներքս մակբայի բաղդատական աստիճանը, երբ գործածվում է իբրև նախադրություն, դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է «նեքսը», «նեքսում», «խողքը», «խորքում» գաղափարները: Օրինակներ. «Ի ներսագոյն խորանացն... յերեսին վկայարանսն մէն մի կանգնեաց զսուրբ նշան տէրունական խաչին» (Ագաթ., էջ 399): «Ի ներսագոյն խորանին զսրբոյն հանդիստն յօրինեալ» (Կոր., էջ 94):

Ի ներքուստ մակբայը ևս կարող է գործածվել որպես նախադրություն՝ արտահայտելով անջատման և տարածական հարաբերություն՝ «նեքսից», «տակից», «տակ» նշանակությամբ: Օրինակներ. «Օրհնեալ է Տէր զի փրկեաց զժողովուրդդ ի ներքուստ ձեռինն Եգիպտացոց» (Ս. Գ., հ. 1, էջ 142): «Միթե սկա՛յք ծնանիցին ի ներքուստ ջրոյ, և ի դրացեաց նորա» (Ն. տ., հ. 3, էջ 299): «Դղրեցաւ ծովն ի ներքուստ անդնդոց ի վեր» (Սնբ., էջ 149): Առաջին օրինակում ունի անջատման, իսկ մյուսներում՝ տեղի իմաստ:

Ետդասական շրջանից սկսած նախադրության դերում հանդես է գալիս շնորհ գոյականի գործիական հոլովաձևը, որն արտահայտում է «միջոցով», «օգնությամբ» իմաստները: Օրինակներ. «Յերկարեալ զուրախութիւն ճաշակմանն միխթարութեան շնորհիւ» (Փար., էջ 89): «Եւ լուեալ զանուն մահուան Մամիկոնէին Վահանայ և քաջի եղբօր նորա Վասակայ՝ քաջալերեալք զօրացան, և լցեալք սուրբ Հոգւոյն շնորհիւ յորդորեցան» (Ն. տ., էջ 120): «Այսպէս և մեք յաւետախաղաց շնորհիւ ցոլացեալ յիմանալի ճառագայթից հոգեւոր հարցն, ըստ հարաւային մասանցն պարայածեալք՝ յնդեսացոցն հասանէաք քաղաք» (Խոր., էջ 344):

Պատճառաւ և ի պատճառս բառերը գործածվում են նաև որպես նախադրություն և արտահայտում են պատճառի գաղափար՝ «պատճառով», «պատրվակով», «համար» իմաստներով: Սրանցից առաջինը սովորաբար դրվում է իր խնդրից հետո, իսկ երկրորդը՝ առաջ: Օրինակներ. «Պարթև... ելեալ երթալը հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց» (Ագաթ., էջ 21): «Աս յարուցեալ իբրև ի ճամիշն երթալոյ պատճառաւ, և դուք պատեսցիք զնովաւ» (Բուզ., էջ 200): «Մի՛ թիւնաթափ լինիր յեղբայրն խրատու պատճառաւ» (Նզն., էջ 303):

Ավելի հաճախակի հանդիպում է ի պատճառս նախադրությունը՝ Օրինականը. «Առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ զբօսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա» (Ագաթ., էջ 22): «Վասն արդարոյն խնային մեղաւորք առ ժամանակ մի և ապրին, և յերկարին յաշխարհիս վասն նոցա կենացն և նոքա ի պատճառս նոցա» (Բուզ., էջ 95):

Նտդասական շրջանում սույն նախադրությունների շարադասութեան վերոհիշյալ օրինաչափությունը խախտւում է. պատճառաւոր գործածւում է նաև նախադաս, իսկ ի պատճառս նախադրութեան խորհրդը ընկնում է նրա բաղադրիչների միջև: Օրինականը. «Եւ զօրածողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն հմուտ յերկիրն Տարօնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ» (Թ. Ա., էջ 184): «Դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան» (ն. տ., էջ 280): «Ոչ միայն դանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլ և բազմաց ամենեցուն՝ որ ի ձեր պատճառս և զնոսա ևս շարչարեցեն» (Եղ., էջ 56): «Եւ զայն տեսեալ ամէնիմաստ հօգորին՝ խորհուրդ բարձրագոյն ի մէջ առնու, ի հատուածի պատճառս առաքէ առ նա զքեռորդի իւր զՀասան» (Թ. Ա., էջ 422):

Թուվա Արծրունու գրքում հանդիպում ենք նաև ի պատճառ և պատճառանօք ձևերին. «Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկանն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել» (Թ. Ա., էջ 374): «Ագեորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս» (ն. տ., էջ 355):

Ի պէտս կազմութեան իբրև նախադրություն գործածւելիս արտահայտում է նպատակի («համար», «նպատակով») և պատճառի («պատճառով») գաղափարները: Օրինականը. «Բայց առաւել կարեւոր է, որ ի պէտս եղբարցն սպասաւորեցէ» (Եզն., էջ 309): «Անդ գտանին և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց» (Փար., էջ 9) «Եւ ոմանք ի ձորն Արագեղտայ ամրացեալք՝ սփռէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց և անդրէն դառնային յամուրս իւրեանց» (Ղեւոնդ, էջ 144): «Յորժամ... կամէր տրեք երթալ ի պէտս ճանապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն ընկէր առաջի նորա» (Բուզ., էջ 32): Վերջին նախադասութեանում ունի պատճառի, իսկ մյուսներում՝ նպատակի իմաստ:

Գործածւում է նաև կրկնակի նախդիրների հետ, ինչպես՝ «Որ արարեր զերկուս լուսաւորս առ ի պէտս շրջմանց տարեաց, ամսոց, ժամանակաց» (Ագաթ., էջ 52): «Եւ զայս խորհէր սուրբն Վարդան, իբրև ոչ առ ի պէտս ինչ օգնականութեան իւրում առաջադրեալ գոր-

ծոյն» (Փար., էջ 59): «Որք և ի ծով անկանելով՝ բղխեն ձկուռս մանունս առ ի պէտս վայելչութեան բնակչաց աշխարհին» (Թ. Ա., էջ 476):

Սակս. այս նախադրությունը դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է նպատակի, պատճառի, վերաբերության հարաբերություններ՝ «համար», «պատճառով», «մասին» իմաստներով: Օրինակներ. «Ստորագրութիւն, որ ինչ սակս Բիւրասպեայ հաւաստին» (Խոր., էջ 90): «Սակս նորին և սպանաւ ի նմանէ» (Ն. տ., էջ 174): «Հարքն որ մեղանն՝ նոքին սակս այնր և մեռան» (Ն. տ., էջ 323): «Զայս ոչ եթէ սակս ուրախութեան ինչ ամբաստան լինի զինքենէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր» (Թ. Ա., էջ 270):

Գործածվում է նաև ի սակս կազմութեամբ, օրինակ՝ «Վասն այդորիկ ի ձեր սակս, Սիօն արօրադիր լիցի» (Ս. Գ., հ. 3, էջ 463):

Վասն. գրաբարի ինչպես դասական, այնպես էլ հոդասական մատենագրության մեջ ամենից շատ գործածվող նախադրություններից մեկն է: Այսպես, օրինակ, Ագաթանգեղոսը իր գրքում գործածել է 422 անգամ, Եղիշի՝ 175, Կորյունը՝ 45, Մ. Խորենացին՝ 273 անգամ, որից երկուսը հայցական խնդրով, Եղիշեն՝ 154, Ղ. Փարպեցին՝ 107 անգամ և այլն: Այս նախադրությունն արտահայտում է ավելի շատ ու բազմազան հարաբերություններ, ինչպես՝ նպատակի, պատճառի, վերաբերության և այլն: Այն դրսևորում է հետևյալ իմաստները՝

ա) «համար», «նպատակով»: Օրինակներ. «Դասիթ... վասն ամենայն աղգաց՝ զվիճակ աստուածատուր օրինացն նշանակէր» (Կոր., էջ 56): «Արար Աստուած զլուսաւորսն մեծամեծս, և եդ զնոսա ի հաստատութեան երկնից՝ լուսատու լինել յերկիր: Ուստի յայտ է՝ թէ վասն լուսատու լինելոյ միայն արարան» (Եզն., էջ 185): «Եւ մեք պատրաստ եմք ի մեռանել վասն սիրոյդ» (Եղ., էջ 76): «Լաւ է մեզ մեռանել վասն անուան Քրիստոսի, քան վայելել ընդ բեզ» (Թ. Ա., էջ 35):

բ) «պատճառով»: Օրինակներ. «Գազանք վասն վնասակարութեանն ի շարէ ումեքէ արարչէ կարծիցին» (Եզն., էջ 146): «Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն» (Բուզ., էջ 226): «Եւ ոչ որ կարաց ձգել զձեռն իւր վասն որմոյն բարձրութեան» (Ագաթ., էջ 27): «Որք... վասն... բարուցն ճիւղութեան... դժուարամտոյցք էին» (Կոր., էջ 54): «Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց և պատժեցաւ վասն մեքոյ անօրէնութեան» (Ղեւոնդ, էջ 78): «Բազում փորձութիւն անցին զմեօք վասն ոչ երթալոյ իշխանին առ ամիրայն Ափշին» (Թ. Ա., էջ 448):

դ) «մասին», «վերաբերյալ». այսպիսի կիրառություն ունի ասացական, իմացական բայերի մոտ, ինչպես՝ ասել, խօսել, ճառել, զեկուցանել, հարցանել, գիտել, պատմել, փառագել և այլն: Օրինակներ. «Եւ

արդ վասն նորա իսկ սատառնայի հարցցուք» (Եղն., էջ 52): «Պատմեցաւ նոցա յարեայէ վասն գտելոյն ի Դանիէլէ» (Կոր., էջ 44): «Ոչ որ գիտէր վասն նորա» (Ագաթ., էջ 29).

դ) «փոխարեն», «դիմաց», ինչպես՝ «Որ նմա վասն լաւութեանց շնորհեցաւ» (Եղն., էջ 41): «Զիարդ էր՝ զի վասն դոյլն յանցմանն անկանէր ընդ մահուամբ» (Ն. տ., էջ 73).

ե) «համար», «օգտին». այսպիսի կիրառութեամբ արտահայտում է շահի տրականի իմաստ, ինչպես՝ «Յայժմ ես վասն քո յաշտ առնեի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես» (Եղն., էջ 115):

Հատուկենտ օրինակներն ենք հանդիպում, որտեղ վասն-ը հանդես է գալիս հոտադաս գործածութեամբ, ինչպես՝ «Փորձելոյ վասն հաստատեալ է զնա աստուծոյ» (Եղն., էջ 182): «Օրէնքն յանցուածոց վասն յաւելան» (Ագաթ., էջ 176):

Լինում են դեպքեր, երբ վասն նախադրութիւնը պահանջում է հայցական հոլովով խնդիր¹²: Դա պատահում է այն ժամանակ, երբ նախադրութեան խնդիրը արտահայտվում է անորոշ դերբայով: Օրինակներ. «Ապա արծակէր զիշխանն պատուականս ի հնազանդութիւն խաղաղութեան վասն դերեղարձ առնել ի կայսերէն միւսանգամ» (Բուդ., էջ 49): «Գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ և որք ընդ նմա էին, առաքէր» (Ն. տ., էջ 88): «Ոմնիմ ի մտի և զԿեփաղիոնին, վասն ոչ տալ զմեզ բազմաց ծաղրել» (Խոր., էջ 56): «Յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագման» (Ն. տ., էջ 304):

Բայց Եղնիկի և Կորյունի երկերում վասն նախադրութիւնը անորոշ դերբայով խնդիր ընդունելիս էլ պահանջում է սեռական հոլով, ինչպես՝ «Վասն առաւել սիրելոյ զԱստուած ի բարութ արարածոց Աստուծոյ հրաժարեն» (Եղն., էջ 287): «Աղօթիւք մեծաւք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ» (Կոր., էջ 42):

Վասն նախադրութիւնն իր մի քանի խնդիրների հետ երկար ժամանակ գործածվելով՝ վերածվել է կայուն բառակապակցութիւնների, և այդպիսով ստացվել են վասն որոյ, վասն այնորիկ, վասն այսորիկ, վասն զի (սրա խնդիրը զեղչվել է)¹³, վասն է՞ր ոճական արտահայտու-

¹² Ղեւոնդ Մեծի գրքում վասն նախադրութեանը մեկ անգամ հանդիպում ենք տրական խնդրով. «Անացից և վասն ապստամբին այնմիկ, զոր նախ առաքէր Արդլա յաշխարհս Հայոց» (էջ 133):

¹³ Այս մասին տե՛ս սույն ուսումնասիրութեան 52-րդ էջի 3-րդ ծանոթագրութիւնը:

թյունները: Հետևյալ օրինակները ցույց են տալիս, թե ինչպես է կատարվում խնդրի դեղշումը, այսպես՝ «Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ արքայ ի Հրէիցդ» (Ս. Գ., հ. 4, էջ 309): «Վասն այսր պատճառաւաց աղաչեաց զձեզ՝ տեսանել և խօսել» (Ն. տ., էջ 316):

Ի վերայ. սա ևս գրաբարի հաճախակի գործածվող նախադրություններից է: Ագաթանգեղոսը գործածել է 213 անգամ, Ղ. Փարպեցին՝ 184, Մ. Խորենացին՝ 148, Եղիշեն՝ 125, Եղեհիկը՝ 42, Ա. Լաստիվերացին՝ 157 և այլն:

Ի վերայ նախադրությունը հանդես է բերում մի այլ յուրահատկություն ևս. մյուս բոլոր նախադրությունների համեմատությամբ ամենից շատ հարաբերություններ է դրսևորում: Այն սովորաբար դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է՝

1. «վրա» իմաստը. առարկայի մակերեսը, որտեղ կատարվում է գործողությունը. Օրինակներ. «Որ ի վերայ ոչընչի կայ հաստատեալ» (Եղն., էջ 17): «Զի նստէր նա ի գրաստու վերայ և դայր» (Բուզ., էջ 226): «Թող տուր ինձ և զնեցից զսինս՝ յորոյ վերայ տոնա հաստատեալ կայ» (Ս. Գ., հ. 1, էջ 506): «Քանզի հիմունք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմիտ անշարժութեան, և ո՛չ ի վերայ երկրի» (Եղ., էջ 103)¹⁴.

2. «վրայով» իմաստը, օրինակ՝ «Եւ ի դեռ փրբե հասանէր, կօշկօքն անցանէր ի վերայ ջուրցն գետոցն, և ոչ թանային կօշիկք նորա» (Բուզ., էջ 185).

3. ուղղության գաղափար (տեղաշարժ ցույց տվող բայերի մոտ): Օրինակներ. «Եւ Հոգին ի վերայ նորա իջեալ ի նմանութիւն աղանոյ» (Ագաթ., էջ 61): «Խաղաց զնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին» (Եղ., էջ 11): «Այս այն Վարդան է, յորոյ վերայ եկն ինքն արքայն Պարսից» (Սեբ., էջ 27): «Յորոյ վերայ հասեալ թշնամեացն՝ առժամայն առակեցին զամուրս նորա» (Ա. Լ., էջ 109).

4. վերաբերության իմաստ՝ «մասին», «վերաբերյալ», «նկատմամբ» նշանակությամբ: Օրինակներ. «Զոր խօսեցայ ի վերայ տանն Իսրայելի և ի վերայ տանն Յուդայ» (Ագաթ., էջ 197): «Ի վերայ եկացն և պանդխտաց հրաման կայր» (Եղն., էջ 268): «Եւ քննեալ զնոսա ի մէջ բաղմամբոյն հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն (Սեբ., էջ 56).

¹⁴ Երբեմն բայը, որի հետ նախադրությունը կապում է իր խնդիրը, դեղշվում է, բայց մտքից հասկացվում է: Օրինակ՝ «Քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զարաւոր ծառոց, ի վերայ յաղթանգամ և հզար երիվարին» (Սեբ., էջ 56), այսինքն՝ ի վերայ երիվարին նստեալ:

5. նպատակի գաղափար՝ «համար» իմաստով: Օրինակներ. «Եւ ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է» (Բուզ., էջ 217): «Ես եմ, ասէ, հովիւ քաշ, որ ի վերայ խաշանց իմոց մեռանիմ» (Ագաթ., էջ 228): «Որպէս մարտուցեալ կոռեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացոց» (Եղ., էջ 105): «Քաշութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան տտից լեալ պղծակից արանց զսրբարանս մեր և զտեղի փառատրութեան Աստուծոյ մերոյ» (Ղեւոնդ, էջ 149): «Յայսմ վայրի ոչ ի վերայ միոյ ազգի և ի վերայ միոյ աշխարհի է լալումն ողբումն և կոծումն, այլ ի վերայ բոլոր ազգաց և աշխարհաց Հայաստանեայց» (Թ. Ա., էջ 208).

6. հանգման գաղափար՝ «վրա» (ենթարկման իմաստով), ինչպես՝ «Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և Որմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ» (Եղն., էջ 115): «Ինքն ըստ հաւատարիմ ծառայի թագաւորէ ի վերայ տասն քաղաքաց» (Ն. տ., էջ 312): «Եւ որ թագաւորեաց իսկ յետ նորա, ի վերայ Յունաց աշխարհին և Հոռոմոց» (Ս. Գ., հ. 2, էջ 534): «Եւ հաւաքեալ զբազմութիւն անթիւ՝ կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն» (Ղեւոնդ, էջ 130).

7. «համեմատ», «նկատմամբ» (բաղդատական առումով) իմաստները: Այսպիսի կիրառութիւնը խիստ հազվադեպ է. «Այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ... մահուանն կենօք երեւեալ» (Կոր., էջ 24): «Ի վիմէ բա՛րձր արարեր զիս, և այժմ բա՛րձր արա զգլուխ իմ ի վերայ թշնամեաց իմոց» (Ս. Գ., հ. 3, էջ 33).

8. գործողութեան կատարման ձևի իմաստ, ինչպես՝ «Եւ ասէ Տէր Աստուած ցօձն... ի վերայ լանջաց և որովայնի քոյ զնասցես» (Ս. Գ., հ. 1, էջ 11).

9. պատճառի գաղափար՝ «պատճառով» նշանակությամբ: Օրինակներ. «Մաշեցայ ի վերայ ամենայն թշնամեաց իմոց» (Ս. Գ., հ. 3, էջ 16): «Ոչ զատելիս քո Տէր ատեցի, այլ ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ» (Ն. տ., էջ 130): «Պակասեաց անձն իմ ի վերայ սպանելոցն» (Ն. տ., էջ 531).

10. հանգման գաղափար. այս դեպքում ցույց է տալիս, որ ենթակայի գործողութիւնը հանգում է նախադրութեան խնդրին: Օրինակներ. «Եկին հասին ի վերայ նորա» (Ագաթ., էջ 19): «Եւ արկ Տէր Աստուած թմբրութիւն ի վերայ Ադամայ» (Ս. Գ., հ. 1, էջ 10): «Եւ յաւելոյր բարիս ի բարեաց վերայ ազգին իւրեանց» (Ն. տ., հ. 2, էջ 593): «Կատարեցին զովստն առաջի իմ ի տանն յորոյ վերայ կոշեալ է անուն իմ» (Ն. տ., հ. 3, էջ 592).

11. «վերև», «վերևում» իմաստները, ինչպես՝ «Յորժամ լուսաւորէր ճրագ նորա ի վերայ գլխոյ իմոյ» (Ս. Գ., հ. 3, էջ 301)։
12. «վրաս», «մեջ» (ներգոյականի իմաստով) գաղափարը։ Օրինակներ. «Եւ դու միայն բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի» (Ս. Գ., հ. 3, էջ 84)։ «Ստուգիւն և ոչ հաւատք զօրացան ի վերայ երկրի» (ն. տ., էջ 540)։
13. «մոտ» (տեղի իմաստով), ինչպես՝ «Եւ ինքն կայր ի վերայ դրանն» (Ս. Գ., հ. 3, էջ 784)։
14. «վրայով» «վերկից» գաղափարը, օրինակ՝ «Անցուցանէր զըմարդիկ ի վերայ գլխոց մերոց» (Ս. Գ., հ. 3, էջ 65)։
15. «դիմաց», «փոխարեն», «համար» իմաստները։ Օրինակներ. «Եւ զղջանաս ի վերայ շարեաց» (Ս. Գ., հ. 3, էջ 478)¹⁵։ «Զի Հրեայք, որ բնակեալ էին ի գաւառս Պաղեստինացոց՝ ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց, ի վերայ մեծամեծ երախտեացն, զոր արար առ նոսա» (Խոր., էջ 153)։
16. «մոտ», «ափին», «եզրին» իմաստները. այսպիսի գաղափար է արտահայտում այն դեպքում, երբ նախադրութեան խնդիրը գետի, ծովի կամ լճի անուն է։ Օրինակներ. «Նման իւրոյ քաղաքին շինեաց զքաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ» (Խոր., էջ 166)։ «Զկնի այսորիկ հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ» (ն. տ., էջ 175)։
17. «հետ», «մեկտեղ», «հավելաբար» իմաստները, օրինակ՝ «Այնպէս պարտ էր նմա հպատակ լինել, զի ի պատուոյն վերայ և այլ ևս պարգեւ մեծամեծս գտանէր ի նմանէ» (Եղ., էջ 184)։
18. «հետո» (ժամանակի առումով) գաղափարը։ Օրինակ՝ «Այս Արամայիս կեցեալ ամս՝ ծնանի զորդի իւր զԱմասիա. ի վերայ որոյ կեցեալ և այլ ևս ամս՝ մեռաւ» (Խոր., էջ 40)։
19. Ի վերայ նախադրութեանը երբեմն իր խնդրի հետ գործածվում է իբրեւ մասնակի բացահայտիչ, ինչպես՝ «Եւ մէջ անցեալ՝ յիւրմէ ազգէն իբրեւ ի թշնամոյ վերայ խոստանայր Վրէժ խնդրել» (Ագաթ., էջ 20)։
- Հաճախ, ինչպես երևաց նաև վերոբերյալ մի քանի օրինակներից, ի վերայ նախադրութեան խնդիրն ընկնում է նրա բաղադրիչների միջև, իսկ երբ վերջիններս միմյանցից շատ են հեռանում, նախդիրը դրվում է նաև խնդիրն նախընթաց մյուս անգամների վրա։ Օրինակներ. «Այլ և վիճեալ ևս պնտին ի բանիցն վերայ» (Եղ., էջ 99)։ «Զի յարիցէ ազգ՝ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ» (Ս. Գ., հ.

15 Այս օրինակում առկա է նաև պատճառական երանգը։

4, էջ 100): «2եմբ ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եղին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց» (Եւ., էջ 40): «Տեսամեոյր զամենեանս ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ» (Բուդ., էջ 59)¹⁶: Վերջին օրինակում ճիշտ շարադասութեամբ կլինե՞ր՝ ի վերայ նորին առաջին բանին:

Նախադրութեան բաղմակի խնդիրները մոտ երբեմն վերայ բաղադրիչը զեղչվում է, և գործածվում է միայն ի նախդիրը: Օրինակ՝ «Օրինացն աստուած... զու ի մօր կաթն շնորամայէ եփել, և ոչ զհաւ ի ձուոց կամ ի ձառուց վերայ նստեալ՝ ի միասին միանգամայն առնուլ» (Եզն., էջ 277), այսինքն՝ ի վերայ ձուոց կամ ի վերայ ձառուց:

Ի վերայ նախադրութեան հտադաս գործածութեան ժամանակ ի նախդիրը կրկնվում է. այն դրվում է նաև խնդրի կամ նրան նախորդող բառերի վրա: Օրինակ՝ «Եւ յաւուրս ձմեռայնոյն՝ յորժամ... յայնպիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի պէտս ճանապարհի, յանկարծօրէն ձիւն ցամաք արջն լինէր առաջի նորա» (Բուդ., էջ 32):

Շատ հազվադեպ խնդրի փոխարեն դրվում է ստացական հոդ: Օրինակ՝ «Զի անթաքուտ լիցին ի վրեժխնդրութենէն որ ի վերայն էր հասանելոց» (Ագաթ., էջ 281), այսինքն՝ ի վերայ նորա:

Երբեմն էլ բաղմակի խնդիրներից երկրորդի մոտ նախադրութեան է ամբողջովին զեղչվում, ինչպես՝ «Որ ձգեաց զերկինս միայն, և շրջի ի վերայ ծովու իբրև յատակի» (Ս. Գ., հ. 3, էջ 280), այսինքն՝ իբրև ի վերայ յատակի:

Ետդասական շրջանի մատենադրութեան մեջ եզակի օրինակների ենք հանդիպում, տրոնցում իբրև նախադրութեան գործածվում է միայն վերայ բաղադրիչը, որը ընկում է և՛ նախադաս, և՛ ետադաս: Օրինակներ. «Մատայի իմոյ կոչեացի անուն նոր, որ օրհնեացի վերայ երկրի» (Թ. Ա., էջ 236): «Եւ յայնմհետէ տիրեցին Հրէաստանի և Ասորեստանի վերայ» (Ղեւոնդ, էջ 6):

Ի վերայ մակբայը գործածվում է նաև որպես նախադրութեան, դրվում է իր խնդրից առաջ և նշանակում է «վերևը», «վերևի կողմը», «վերևում», «վերևի կողմում»: Օրինակներ. «Եւ անջրպետեաց Աստուած ի մէջ ջրոյն որ ի ներքոյ հաստատութեանն, և ի մէջ ջրոյն որ ի վերոյ հաստատութեանն» (Ս. Գ., հ. 1, էջ 7): «Եւ դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերոյ քո, կուրացուցիչք աչաց քոց» (Թ. Ա., էջ 292):

¹⁶ Աշխարհաբարի վրա ետադրութեանը առաջացել է վերայ բաղադրիչի ետադաս գործածութեանը:

Իրրև նախադրություն է գործածվում նաև միայն վերոյ բաղադրի-
չը, օրինակ՝ «նա և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապա-
րանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի,
որ թարգմանի բլուր» (Խոր., էջ 265):

Վերոյ բառը որպէս բաղադրիչ ավելի շատ հանդես է գալիս ի վե-
րոյ քան, գեր ի վերոյ քան և գեր ի վերոյ բաղադրյալ նախադրու-
թյունների կազմում, որոնցից առաջին երկուսը խնդիր են վերցնում
հայցական հոլովով (տե՛ս ստորև):

Գեր ի վերոյ. դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է «ավե-
լի վեր», «շատ» գաղափարները: Օրինակ՝ «Որպէս լուսաւոր վարդա-
պետութիւնն գեր ի վերոյ ամենեցուն շնորհօքն Աստուծոյ յարգեցաւ
(Ագաթ., էջ 11):

Ի վերուստ մակըայլը, երբ գործածվում է որպէս նախադրություն,
արտահայտում է «վերևից», «վերևի կողմից» գաղափարը: Օրինակներ.
«Եւ եկն Դաւիթ ի վերուստ խրամատիցն, և կոտորեաց անդ զայլազ-
գիսն» (Ս. Գ., հ. 2, էջ 81): «Հրաման ետ ամպոց ի վերուստ և զդունս
երկնից եբաց» (Ն. տ., հ. 3, էջ 78):

Փոխանակ, փոխաբէն, ի տեղի նախադրություններն ունեն միա-
տեսակ կիրառություն. սովորաբար դրվում են իրենց խնդրից առաջ և
արտահայտում են փոխարինության հարաբերություն:

Փոխանակ նախադրությունը համեմատաբար ավելի հաճախակի է
հանդիպում: Այն արտահայտում է՝

ա) փոխարինման գաղափար՝ «փոխարին», «տեղը», «տեղակ» ի-
մաստներով: Օրինակներ. «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր
աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ» (Ագաթ., էջ 295):
«Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նո-
րա» (Ս. Գ., հ. 1, էջ 20): «Զի՞նչ հատուցուր մեք աստուածոցն փո-
խանակ այս մեծի յաղթութեանս, որ ոչ որ կարաց ելանել ընդդէմ մեր
պատերազմաւ» (Եղ., էջ 18): «Այլեցան և ի մեզ փոխանակ միոյ տան՝
բազում եկեղեցիք» (Ա. Լ., էջ 77):

բ) նպատակի գաղափար՝ «համար», «դիմաց» իմաստներով: Օրի-
նակներ. «Տացուր զանձինս մեր փոխանակ պատուիրանաց քոց»
(Ագաթ., էջ 57): «Եւ փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ
աշխարհին Հայոց մեծաց յամենայն ի մարտ ճակատուցն պատերազ-
մաց» (Բուդ., էջ 16): «Ուրախ եղաք փոխանակ ատուրցն որ խոնարհ
արարին զմեզ, և ամացն յորս տեսաք զչարչարանս» (Ս. Գ., հ. 3,
էջ 91):

Օրինակներ փոխաբէն նախադրության վերաբերյալ. «Զի՞նչ ինչ
արդեօք կարիցեմք առնել դարձուածս փոխաբէն բարեացն որ ի քէն»

(Ագաթ., էջ 57): «Բարի արա՛ խոնարհին՝ և մի՛ ձեռն տար ամբարշտին զի մի՛ կրկին շար փոխարէն բարեացն ի նմանէ գտցես» (Ս. Գ., հ. 4, Յաւելուած, էջ 14):

Ի տեղի նախադրությունն արտահայտում է՝

ա) փոխարինման հարաբերություն¹⁷: Օրինակներ. «Եւ հրամանն ետուն մեծ եպիսկոպոսապետին Վրթանէս հանդերձ թագաւորան Արշակայ և Անդովկայ մնուցանել զպատանեակն զԱրտաւազդ, զի կայցէ ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ» (Բուզ., էջ 25): «Ի նմին աւուր և զորդի նորին զՇապուհ, զոր ի տեղի Արշակունւոյ թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անդրէն ի դրանմ մարդկանէ դաւով յարքունիքն սատակեցին» (Փար., էջ 19).

բ) բաղդատական հարաբերություն՝ «նման», «պես» իմաստներով: Օրինակ՝ «Եւ է բարեկամ՝ որ քինի ի տեղի թշնամւոյ» (Ս. Գ., հ. 4, Յաւելուած, էջ 9):

Եզակի օրինակների ենք հանդիպում, որտեղ իբրև նախադրություն գործածվում է միայն տեղի բաղդդրիչը, որին զուգահեռ հանդես է գալիս նաև փոխանակ նախադրությունը: Օրինակ՝ «Բայց լուա եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ հայրապետն Ներսէս, և փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ» (Բուզ., էջ 190):

Եզեիկին վերագրվող «խրատք»-ի մեջ մեկ անգամ գործածված է ի տեղ ձևով. «Տգէտ և անընտրող առաջնորդ... ի սիրոյ տեղ՝ ատելութիւն ցուցանէ» (Եզն., էջ 311):

Փոխանակ և փոխարէն նախադրություններին զուգահեռ հաճախ գործածվում է ընդ նախդիրը, որը իմաստային որևէ փոփոխություն չի առաջացնում (սեռական հոլովի հետ նույն հարաբերությունն է արտահայտում), այլ պարզապես ոճական արժեք ունի: Օրինակներ. «Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեան կրեն» (Եզն., էջ 57): «Սոքա փոխարէն ընդ հողեղէն յարկացն զոր սոցայն շինեցէք աստ՝ պատրաստեցեն ձեզ յարկս լուսեղէնս յարքայութեանն երկնից» (Ագաթ., էջ 376): «Իսկ թագաւորն զմուրհակս գիւղաց կամ զազարակաց գրեալ և կընքեալ դէէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղացն իւրեանց» (Բուզ., էջ 228): «Հատուցին ինձ շար փոխանակ ընդ բարոյ» (Ս. Գ., հ. 3, էջ 40): «Փոխանակ ընդ այնր յարքունուստ ընումք և զձերոյն պակասութիւն» (Խոր., էջ 319):

¹⁷ Այս իմաստով իբրև նախադրություն երբեմն հանդես է գալիս ի տեղում կազմությունը, ինչպես՝ «Այլ զու ի բա՛ց ոստիր, և մի՛ յամեր ի տեղում նորա» (Ս. Գ., հ. 3, էջ 156): «Որ կայցէ ի տեղում տգիտին» (Ն. տ., հ. 4, էջ 424):

Փոխանակ նախադրութիւնը գործածվում է նաև ետադաս և անկանոն շարադասությամբ: Օրինակներ. «Այո՛ հղբայր՝ ես քո փոխանակ եղէց ի Տէր» (Ս. Գ., հ. 4, էջ 549): «Զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեանն տեառն, մատուցին ի վերայ եկեղեցեաց» (Բուզ., էջ 24): «Զոր և ընդ նոցայն փոխանակ պատմեալ մարգարէին» (Ագաթ., էջ 251):

Ի փառս, ի պատիւ, յօգուտ, ի յիշատակ հոլովածները կիրառվում են նաև իբրև նախադրութիւն՝ «համար», «հանուն», «օգտին» նշանակությամբ: Օրինակներ. «Դու որ օրինօք անեալ ես և կեաս ի փառս կրակաց» (Փար., էջ 96): «Ուստի և բազում սուրբ պաշտօնեայքն զուարթութեամբ կատարեսցեն զսպաս վիճակին իւրեանց, ի փառս Հօրն բոլորեցուն» (Եղ., էջ 5): «Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անուն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հար իւրոյ» (Սեբ., էջ 118): «Եւ ժողովուրդն զհնչիւն փառատրութեանն բարձրացուցանէին ի վեր և զբուրումն անուշահոտութեան խնկոյն, և պայծառութիւն մոմեղինացն և շահիցն առաջի և զկնի բերելով ի պատիւ յաղթող և պատուական խաչին» (Ղեւոնդ, էջ 109): «Եւ ստիպով յիւրաքանչիւր աշխարհ տային հասուցանել վաղվադակի, յօգուտ երկնատր կենդանութեան ընտանեաց միանգամայն և զաւառին» (Փար., էջ 103): «Ամփոփել զոսկերս մեր յօգուտ հոգւոյ իւրոյ տենչացեալ» (ն. տ., էջ 141): «Եւ վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել» (ն. տ., էջ 176)¹⁸: «Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու... տօնեսցեն» (Ագաթ., էջ 435): «Այսպէս և զբաժակ գինւոյն, ասելով մարմին և արիւն իւր, պատուիրեալ զայս առնել ի յիշատակ իւր, նշանակելով զիւր իբրև զամբիծ և զանարատ դառնն զենումն» (Ղեւոնդ, էջ 83):

Զօրէն և զօրէնս (շատ հազվադեպ) հոլովածները գործածվում են նաև որպես նախադրութիւն և արտահայտում են «նման», «պես» իմաստները: Օրինակներ. «Եւ զօրէն հոգեմատեան դիւանին զլեառն արարեալ՝ ուսուցանէր զորդիան Իսրայէլի» (Ագաթ., էջ 160): «Զօրէն գազանաց ի լերինս շրջէին» (Բուզ., էջ 230): «Որ զօրէն ազատ էրէոյ շրջէին ի մէջ ծաղկաբեր լեռանց» (Եղ., էջ 194): «Զօրէնս երամոյ թրոււնոց բնակեալ էին սոքա ի ծագս վիմաց» (Բուզ., էջ 230):

Շատ սակաւ դեպքերում որպես նախադրութիւն գործածվում է նույն գոյականի նաև անորոշ հայցականը: Օրինակ՝ «Քանզի բազում ինչ աստ կարգաց և յօրինուածոց տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և համայն ասել՝ օրէն թագաւորութեան, և որ ինչ շուրջ

¹⁸ Հմմտ. «Այլ նա ում պիտոյ է յալլ իրս, յօգուտ կամ ի վնաս» (Փար., էջ 127), ուր տվյալ բառը հանդես է եկել իբրև գոյական:

զբազաւորութեամբն—զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց» (Խոր., էջ 109):

Նույն կիրառութեամբ հանդես է գալիս նաև օրինակ գոյականի հայցականը (որոշյալ և անորոշ): Օրինակներ. «Առաջին հարքն որ եղեն օրինակ նորա, յորս Աստուծոյ կերպարանքն նկարեալ կային» (Ագաթ., էջ 215): «Եւ արասցես ինձ ըստ ամենայնի զոր ցուցից քեզ ի լերինն. օրինակ խորանի՜ և օրինակ ամենայն սպասուող նորա» (Ս. Գ., հ. 1, էջ 154): «Իսկ թզենին բարձեալ ունէր զօրինակ անպտուղ մարդկան» (Ագաթ., էջ 338):

Այսպիսով, սեռական խնդրով գործածվում են ավելի քան ութսուն նախադրություններ և իբրև այդպիսիք առնված բառեր: Ըստ որում, վերջիններս ավելի շատ են (շուրջ հինգ տասնյակ), քան բուն նախադրությունները:

Սեռական հոլով պահանջող նախադրություններից և որպես նախադրություն գործածվող բառերից ավելի հաճախակի են հանդիպում ու ավելի շատ իմաստներ են արտահայտում հետևյալ բառերը՝ ի վերայ, վասն, աղագաւ, յաղագս, առանց, առաջի, արտաքոյ, զկնի, զհետ, ի ձեռն, ի մէջ, յետ, ի ներքոյ, փոխանակ, ընդդէմ, յերեսայ և այլն:

ՏՐԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ և ԱՆԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական (և ոչ միայն դասական) գրաբարում տրական հոլովի հետ քիչ նախադրություններ են գործածվում: Դրանք են՝ առ ընթեր, գունակ, պէս գունակ, դէպ, գոյց, ի միջի, լու ի լու, հակառակ, համեմատ, համաձայն, հեճուկս, միաբան, նման և այլն, որոնց մեծ մասը ածականներ են, բայց կիրառվում են նաև իբրև նախադրություն: Դրանք հիմնականում արտահայտում են տեղի, վերաբերության, նմանության, բաղդատության, համապատասխանության և նման այլ հարաբերություններ:

Առ ընթեր. այս նախադրությունը սովորաբար դրվում է իր խընդրից առաջ և նշանակում է «մոտ», «կից», Օրինակներ. «Առ ընթեր նմա զհիւղն դնեն» (Եզն., էջ 25): «Եւ դիցէ առ ընթեր սեղանոյն» (Ս. Գ., հ. 1, էջ 205): «Եւ առեւծն կայր առ ընթեր մեռելոցն» (ն. ա., հ. 2, էջ 165): «Սկիզբն արասցուք յաղագս պատուականութեան մարդկանն, նախակարգեալ ի գիրսս առընթեր Արտաշիսի» (Խոր., էջ 145):

Ունի նաև ետադաս գործածություն: Օրինակ՝ «Նա և ջուր մաքուր յապակի գուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոշորի նիւթն» (Թ. Ա., էջ 64):

Ծնագրաց գործածության ժամանակ առ նախդիրը դրվում է նաև խնդրից առաջ, ինչպես՝ «Ամաթ... առ եթերացն առ ընթեր լցեալ ուռուցեալ ...դՍրարչին հրամանս կատարին» (Ագաթ., էջ 283):

Գունակ. սա դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է նմանության հարաբերություն՝ «նման», «պես», «ըստ» իմաստներով: Օրինակներ. «Գունակ սմին և Բերեստոս ոմն և Աբիդիոնոս Քաղդէացոց իմաստունք, որք ոչինչ կարի հեռագոյնք ի Մովսէսէ զգիւտ ժամուց և ժամանակաց զմարդկայնոց սեռից կենցաղավարութիւնս կանուխադրեալ դրոշմեցին ի մատենան քաղդէական պատմութեանցն» (Թ. Ա., էջ 19): «Գունակ Կորնային բանակին յանդնդական տունսն զբնակութիւնսն արարին» (ն. տ., էջ 371): «Եւ այնուհետեւ առն ամբարիշտ զօր գումարեալ արս իբրեւ ժգո դիմէ ի վերայ արքայի, գունակ այլոց ոմանց զնա կարծելով» (ն. տ., էջ 490):

Սրան հոմանիշ է պէս նախադրությունը (օրինակ՝ օձից պէս), որը կաղմել է պէս գունակ բաղադրյալ նախադրությունը. «Այլ նա ի վազակաւորն հաստատեալ զաջն, պէս գունակ Տրդատայ Բագրատունւոյ, յիւր տունն անցեալ զնայր» (Խոր., էջ 332):

Դէպ. այս նախադրությունը միշտ լինում է նախադաս և ցույց է տալիս շարժման ուղղություն՝ «դեպի», «դեպի այն կողմը» նշանակություններ: Դասական շրջանի ինքնուրույն (և ոչ միայն ինքնուրույն) մատենագրության մեջ շատ սահմանափակ գործածություն ունի: Կորյունի, Ագաթանդեղոսի և Բուզանդի երկերում սրան բոլորովին չենք հանդիպում, իսկ Եզնիկի երկում գործածված է միայն երկու անգամ: Օրինակներ. «Կայցէ արեգակն հանդէպ ձորոյն Գաբաւտնի, և բուսին դէպ դաշտին էլոնայ» (Եզն., էջ 189): «Յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեգակն» (ն. տ., էջ 201): «Թէպէտ և այլոց շիցեմ առաքեալ, բայց դէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դո՛ւք էք ի Տէր» (Ս. Գ., հ. 4, էջ 415):

Ծնդասական շրջանի մատենագրության մեջ ևս քիչ է գործածվում¹⁹: Օրինակ՝ «Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց» (Խոր., էջ 37):

Ծնդասական շրջանից սկսած որպէս նախադրություն գործածվում է զոյգ ածականը՝ «նման», «պես», «համապատասխան» իմաստներով: Օրինակներ. «Վասն ջրոյն սաստկութեան և վասն ապականութեան երկրի՝ զոյգ հոգեւորացն բարբառին բանից» (Խոր., էջ 13): «Քանզի այր

¹⁹ Ավելի ուշ հանդես է գալիս դէպ ի կաղմությամբ, որը խնդիր է վերցնում հայցական հոլովով:

սրտեայ էր և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով» (ն. տ., էջ 107):

Երբեմն դրվում է իր խնդրից հետո. «Ուժով ոչ զոք ունելով իւր զոյգ» (Խոր., էջ 82):

Տեղ-տեղ զոյգ բառի հետ գործածվում է ընդ նախդիրը, որը հաղորդում է միասնության գաղափար (սհետ, «միասին»): Օրինակ՝ «Եւ ընդ մէջ կտրէր դայրն և զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարի» (Խոր., էջ 231):

Ի միջի. այս նախադրությունը, ինչպես ասվել է վերևում, բացի սեռականից, խնդիր է ընդունում նաև տրական հոլովով: Այս դեպքում նախադրության խնդիրը հիմնականում արտահայտվում է ստացական դերանուններով, որոնց հետ տվյալ նախադրությունը ավելի հաճախակի է գործածվում: Այն սովորաբար դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է՝

ա) «մեջ», «ներսում», «շրջանում» իմաստները: Օրինակներ. «Երկիր ...ի միջի իւրում ոմի զշուրս» (Եզն., էջ 197): «Որ ի միջի մերում է», (Խոր., էջ 79): «Հաստատել զտաճար բնակութեան քոյ ի միջի մերում» (Ս. Գ., հ. 2, էջ 695):

բ) «միջև» գաղափարը: Այսպիսի կիրառության ժամանակ խնդիրը դրվում է հոգնակի թվով, իսկ նախադրությունը ցույց է տալիս տարբեր առարկաների միջև եղած փոխհարաբերությունը: Օրինակներ. «Մի՛ ոք լիցի դատաւոր ի միջի մերում» (Եզն., էջ 248): «Տէր կացցէ լսօղ ի միջի մերում» (Ս. Գ., հ. 1, էջ 495):

Երբեմն խնդիրն ընկնում է նախադրության բաղադրիչների միջև, ինչպես՝ «Եւ վասն սրբոց վկայիցդ Աստուծոյ որ ի ձերում միջի, յաշխարհիդ ձերում փառաւորեցան» (Ագաթ., էջ 428): «Որ ի ձերում միջի շարժեցաւ» (Խոր., էջ 293):

Լու ի լու մակբայը երբեմն գործածվում է որպես նախադրություն, որին ավելի հաճախ հանդիպում ենք Աստվածաշնչի մեջ: Լինում է և՛ նախադաս, և՛ հետադաս, նշանակում է «բարձրաձայն», «լսելի ձևով», «լսելի լինելու աստիճան»: Օրինակներ. «Պատասխանի ետ Եփրոն Քեւտացի Աբրահամու՝ և ասէ, լու ի լու որդւոցն Քեւտայ, և ամենեցոն որ մտանէին ընդ դուռն քաղաքի նորա» (Ս. Գ., հ. 1, էջ 42): «Եւ ցնոսա ասէ՝ ինձ լու ի լու. գնացէք զհետ նորա ի քաղաքն՝ և կոտորեցէք» (ն. տ., հ. 3, էջ 715): «Եւ լու ի լու ամենայն ժողովրդեանն, ասէ ցաշակերտսն» (ն. տ., հ. 4, էջ 169): «Նստեալք առ միմեանս՝ լու ի լու այլոցն զինչպէտս խօսին» (Փար., էջ 201):

Կից ածականը երբեմն հանդես է գալիս նախադրության դերում: Այն դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է միասնության գա-

դափար՝ «հետ», «միասին» նշանակութեամբ: Օրինակ՝ Աղաղակեցին և երկոքին ծերքն կից նմին» (Ս. Գ., հ. 3, էջ 658):

Հակառակ ածականը ևս գործածվում է իբրև նախադրություն, որն ունի նախադաս և ետադաս գործածություն: Արտահայտում է ընդդիմության հարաբերություն՝ «դեմ», «ընդդեմ», «ենդհակ», «հակառակ» իմաստներով: Օրինակներ. «Որ շար իմն էութիւն հակառակ բարւոյն դընեն» (Եզն., էջ 9): «Արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր սնուցանես զՄարըդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս» (Խոր., էջ 163): «Եւ եթէ ելանիցէք ի պատերազմ յերկրի ձերում, ընդդիմակացացն որ կայցեն ձեզ հակառակ, ազդեսջի՞ք փողով և յիշատակեսջի՞ք առաջի Տեառն» (Ս. Գ., հ. 1, էջ 279):

Ընդդիմության իմաստն է՛լ ավելի սաստկացնելու համար երբեմն մատենագիրները սրան զուգահեռ գործածում են նաև նրա հոմանիշ ընդդէմ բառը: Այսպիսի կիրառության հանդիպում ենք Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց» գրքում, ինչպես՝ «Եսկ ես ո՞վ եմ, զի աղաչես դու զիս, իբրև թէ ես այր մի տառապեալ կարից եմ հակառակ ընդդէմ կամացն՝ զոր ինչ կամիցի առնել աստուած՝ առնել առ նա աղօթս՝ զի այնու շրջիցեմ զկամս նորա» (Բուզ., էջ 164):

Շատ հազվադեպ՝ հակառակը խնդիր է միացնում նաև սեռական հորովով: Օրինակ՝ «Ո՞չ լսես որչափ դոքա հակառակ քո մկային» (Ս. Գ., հ. 4, էջ 63):

Հանգոյն, համեմատ, միաբան, նման, համաձայն ածականները ևս երբեմն, ինչպես արդեն նշվել է, գործածվում են իբրև նախադրություն և արտահայտում են բաղդատական հարաբերություն՝ «նման», «պես», «ըստ» նշանակութեամբ: Համաձայն և միաբան բառերը սովորաբար լինում են ետադաս, իսկ մյուսները կարող են լինել և՛ նախադաս, և՛ ետադաս: Ավելի հաճախ գործածվում են նման և հանգոյն բառերը: Օրինակներ. «Երկրորդն հանգոյն նմին պատուիրէ» (Կոր., էջ 76): «Ոչ հակառակ օրինացն ուսուցանէր, այլ նմին միաբան» (Եզն., էջ 278):

Համաձայն ածականը նախադրության դերում սկսել է գործածվել ավելի ուշ շրջանից. դրան ավելի հաճախ հանդիպում ենք Ա. Լաստիվերտցու գրքում: Արտահայտում է նմանության, համապատասխանության հարաբերություն՝ «նման», «պես», «համաձայն» իմաստներով: Օրինակներ. «Մմին համաձայն և Պօղոս Եբրայեցւոցն ասէ» (Ա. Լ., էջ 113): «Նաև առաքեալ նմին համաձայն գրեալ, ասէ» (Ն. տ., էջ 119):

Հանգոյն և նման իբրև նախադրություն գործածվող բառերը տեղտեղ խնդիր են առնում նաև սեռական հորովով: Օրինակներ. «Հանգոյն սորա և կարապետն Յովհաննէս ասէր» (Ագաթ., էջ 187): «Զի զգիտու-

Թիւն Տեառն ի մէջ անցուցեալ, նորա գիտութեամբ զնորա արարածս ճանաչել՝ նորա նման անուանեցաւ (Ագաթ., էջ 137):

Դրանք, բացառութեամբ հաւգոյն-ի, դրվում են նաև իրենց խնդրից հետո, ըստ որում, նման-ը հտադաս գործածութեամբ ավելի շատ է հանդես գալիս: Օրինակներ. «Զի եթէ իւր որդի էր, նմին նման գոյր և նոյնպիսի» (Նզն., էջ 128): «Սմին նման և առաքեալն գրէ առ Սբրայեցիան» (Ա. Լ., էջ 54):

Աստվածաշնչում համդիպում ենք նաև հաւգոյնս ձևին, որն արտահայտում է «նման», «պես» գաղափարը: Օրինակ՝ «Այս ունին հաւգոյնս պոռնկաց՝ անդադարս ի մեղաց, պատրեն զանձինս յողորդաց» (Ս. Գ., հ. 4, էջ 324):

Հին հայերենում վերոհիշյալ նշանակութեամբ իբրև նախադրութիւն գործածվում է նաև հաւգիտակ ածականը: Օրինակ՝ «Եւ զանհոյսն ի նմա դիրածել գետոյն բերիւք՝ հաւգիտակ կղզւոյ առատագիւտս առնէ, շուրջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով, տրոհմամբ երկոտասանից վտակաց» (Խոր., էջ 344):

Հեռուի գոյականի հայցական հոլովը²⁰ երբեմն գործածվում է որպես նախադրութիւն, որն արտահայտում է ընդդիմութեան հարաբերութիւն՝ «մեկին կամ մի բանի հակառակ՝ ընդդէմ» նշանակութեամբ: Ունի ի՛նչ նախադաս, և՛ հտադաս գործածութիւն: Օրինակներ. «Զի նմա ալսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեռուիս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն» (Բուզ., էջ 194): «Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեռուիս առնելոյ, ութ հարիւր անգամ՝ որ կային ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջի նորա» (Բուզ., էջ 21)²¹:

Տրական խնդրով նախադրութիւնների ուսումնասիրութիւնը հանգեցնում է հետևյալ եզրակացութիւններին՝

ա) Տրական հոլովով խնդիր պահանջող նախադրութիւնների և որպես այդպիսիք գործածվող բառերի կեսից ավելին (շուրջ մեկ տասնյակը) իր խոսքիմասային հիմնական և սկզբնական արժեքով պատկանում է ածականներին, որոնք երկրորդաբար կիրառվում են նաև որպես նախադրութիւններ:

բ) Համեմատաբար ավելի հաճախակի գործածվող նախադրութիւններն ու իբրև այդպիսիք հանդես եկող բառերն են՝ ի միջի, նման, հաւգոյն:

²⁰ Որից էլ ի նախդրի հետ ծագել է աշխարհաբարի ի հեռուի կապը:

²¹ Այսպիսի կիրառութիւնից առաջացել է հեռուիս առնեմ բայական հարադրութիւնը:

Գրաբարում զգալի քանակությամբ նախադրություններ և իբրև նախադրություն գործածվող բառեր պահանջում են հայցական հոլովով խնդիր, ինչպես՝ անդր փան, առաւել փան, անելի փան, արտաֆոյ փան, դեպ ի, քող, իբր, իբրև, իբրու, հուպ, մեծ, մօտ, մինչ, մինչև, յառաջ փան, յառաջագոյն փան, նախ փան, որպէս, ի սակս, ի վեր փան, ի վերոյ փան, փան և այլն, որոնց մեծ մասի կազմում առկա է փան բաղադրիչը: Քան-ով կազմված բոլոր հարադրական նախադրություններն էլ ընդունում են զ նախդիրը կրող հայցականով խնդիր:

Անդր փան. դրվում է իր խնդրից առաջ²² և նշանակում է «այն կողմը (կողմում)», «ավելի այն կողմը (կողմում)»: Օրինակներ. «Զի չէ ևս անդր փան զնա որ» (Ագաթ., էջ 180): «Լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր փան զնա չիք բնակութիւն մարդկան» (Թ. Ա., էջ 60):

Առաւել փան, անելի փան. դրանք կիրառությամբ հոմանիշ են, որոնք դրվում են իրենց խնդրից առաջ և ցույց են տալիս համեմատելի հատկանիշ: Օրինակներ. «Զայս ասէր, և առաւել փան զտոյն սաստկացուցանէր զհրամանն արքունի» (Եղ., էջ 115): «Որ սիրէ զկին և զորդիս առաւել փան զիս՝ չէ ինձ արժանի» (Փար., էջ 51): «Սիրեցին զխաւար առաւել փան զլոյս» (Ագաթ., էջ 226): «Զայս և բազում անելի փան զտոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն» (Բուզ., էջ 217): «Այլ ոչ ինչ անելի փան զայն հարցանէր զնա յայն օր» (Փար., էջ 172):

Այս նախադրությունները ցույց են տալիս նաև գործողության կատարման չափ ու քանակը՝ «ավելի», «չափ» իմաստներով: Օրինակներ. «Զարշարեցաւ առաւել փան զՏիրան զհայրն քո» (Բուզ., էջ 102): «Եւ մեծացուցանէր զթագաւորն անելի փան զարեգակն» (Եղ., էջ 163):

Արտաֆոյ փան. արտահայտում է տարածական (դուրս), «հեռու») և բացատման («զատ», «բացի», «զերծ») հարաբերություններ: Օրինակներ. «Զոր արտաֆոյ փան զամուրսն գտանէին զբազմութիւն մարդկան» (Եղ., էջ 126): «Մատի՛ք և բարձ՛ք զեղբարս ձեր, հանդերձ պատմուճանօրն իրեանց յերեսաց սրբութեանցդ՝ արտաֆոյ փան զբանակն» (Ս. Գ., հ. 1, էջ 212): «Գիտաց՝ թէ գոյ այլ աստուած արտաֆոյ փան զնա» (Եղն., էջ 248): «Բայց Աստուած հոգի կենդանի է ... արտաֆոյ փան զամենայն ճառս» (Ագաթ., էջ 179): Վերջին երկու օրինակնե-

²² Քան-ով բաղադրված բոլոր հարադրական նախադրություններն էլ առհասարակ գործածվում են նախադաս:

րում նախադրութիւնն արտահայտում է բացառման, իսկ առաջինե-
րում՝ տեղի գաղափար:

Նույն իմաստով կիրառվում է նաև արտաքին քաղաքական կազմութիւնը:
Օրինակներ. «Եւ մի՛ ընդ Միմէի ելանել տայք արտաքին քաղաքական
կազմութիւնը, և մանաւանդ յաժեպել ի խնդիրս որդւոց Հագարու» (Փար., էջ 181):
«Զի չիք ինչ արարած բանաւոր արտաքին քաղաքական կազմութիւնը» (Եղե.,
էջ 97): Առաջին նախադրութիւնում նախադրութիւնը ցույց է տալիս
տեղի, իսկ երկրորդում՝ բացառում:

Ինչպիսիք ալ նախադրութիւնն ունի նախադաս գործածութիւն և
արտահայտում է ուղղութիւն հարաբերութիւն՝ «դեպի» նշանակու-
թյամբ: (Վերևում նշել ենք, որ դասական շրջանի մատենագրութիւն մեզ
գործածելում էր դէպ ձևը, որը խնդիր էր ընդունում տրական հոլո-
վով):

Այժմ բերենք օրինակներ դէպ ի-ի վերաբերյալ. «Զուեաց գնաց
Երակոս... և ճանապարհ կալեալ ընդ կողմանս հիւսիսոյ՝ ել դէպ ուղիղ
ի Կարնոյ քաղաք» (Սեբ., էջ 93): «Իսկ նորա ճանապարհ կալեալ ի Հեր
և ի Զարեանդ Գաւառ, դէպ ուղիղ ի Տիգրոն ի վերայ Խոսրովու» (Ն. տ.,
էջ 95): «Եւ գնաց ինքն ղճանապարհս իւր դէպ ուղիղ ի Միջագետս
Ասորոց» (Ն. տ., էջ 101)²³: Դրանք ճիշտ շարադասությամբ կլինեն՝
ուղիղ դէպ ի Կարնոյ քաղաք, ուղիղ դէպ ի Տիգրոն, ուղիղ դէպ ի Մի-
ջագետս:

Մ. Խորենացու գրքում հանդիպում ենք մի դեպքի, որտեղ ի նախ-
դրի փոխարեն գործածվել է առ-ը. «Իսկ ի միջօրեայ կողմանէ դէպ
ուղիղ առ երկին հայեալով՝ քարանձաւ կանգուն անշեղ» (Խոր., էջ 51):

Քող. երբ գործածվում է իբրև նախադրութիւն, դրսևորում է բա-
ցառման հարաբերութիւն՝ «առանց», «բացի», «զատ» նշանակությամբ:
Միշտ ընդունում է զ նախդիրը կրող հայցականով խնդիր²⁴, տրից առաջ
էլ դրվում է: Օրինակներ. «Եւ այլ յայսմ ազգաց և ի խնորհ՝ որ գոր-
ծակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. քող
զնահապետս մեծամեծս և զտանուեարս՝ որք գործակալք միայն էին,
ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին տրախտութեանն բազ-
մակալացն կարգելոց. քող զտանկայս գործակալութեանն սպասու»
(Թուղ., էջ 57): «Եւ ի գունդս գունդս զգազանսն բաժանէր, և առ մի մի փիղ
երեք հազար սպառազէնք, քող զայլ զօրսն ամենայն» (Եղ., էջ 115): «Եւ
էին ամենայն Իսրայէլ յերկոտասանամեկից և ի վեր, քող զժառայս
և զաղախնայս. բերք շորք, և երեքհազար և երեքհարիւր վաթսուն» (Ս.

²³ Այսպիսի կիրառութիւնից է առաջացել աշխարհաբարի դեպի կապը:

²⁴ Սա պարզ ցույց է տալիս դրանց միջև երեքմիջ գոյութիւն ունեցած «ստորոգյալ-
ուղիղ խնդիր» հարաբերութիւնը:

Գ., հ. 2, էջ 392): «Եւ դէմ եղեալ զնացին յաշխարհն Յունաց ժող արամբք, քող զկանայս և զմանկտիս» (Թ. Ա., էջ 500):

Իբր, իբրեւ, իբրու, որպէս կիրառութեամբ հոմանիշ նախադրութիւններն արտահայտում են բաղդատութեան, նմանութեան հարաբերութիւն՝ «նման», «պես», «ինչպես», «որպես», «չափ», «մոտ» իմաստներով: Բոլորն էլ ունեն նախադաս գործածութիւն, որոնք ընդհանրապէս պահանջում են զ նախդիրը կրող հայցականով խնդիր:

Իբր նախադրութիւնը քննարկվող շրջանի հայ մատենագրութեան մէջ ոմնի սահմանափակ գործածութիւն: Օրինակներ. «Ձի ոմն զգայլոյ կորիւն անուցանէ, և իբր զշան կորիւն՝ առ ընտելութեան ընդ անձն անկանին» (Եղն., էջ 69): «Ի ձեռն էառ իբրեւ զվահան, և ագաւ զնս իբրեւ զգրահս, և եղև իբր զինուոր կատարեալ կամաց նորա» (Եղ., էջ 91): «Մանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. այլ նանրացան ի խորհուրդ իւրեանց» (Թ. Ա., էջ 64):

Իբրեւ-ը գրաբարի ամենագործածական նախադրութիւններից մեկն է, որը հիմնականում պահանջում է հայցական հոլովով խնդիր և արտահայտում է՝

ա) «նման», «պես», «ինչպես», «որպես» իմաստները: Օրինակներ. «Եւ դալարեսցին երկինք իբրեւ զմագաղաթ, և ամենայն այստեղք թօթափեսցին իբրեւ զտեւ յորդոյ» (Ս. Գ., հ. 3, էջ 377): «Երկինք գալարեսցին իբրեւ զմագաղաթ, և երկիր իբրեւ զմոմ հալեսցի» (Եղն., էջ 272): «Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի» (Ս. Գ., հ. 4, էջ 423): «Եւ առ յոյժ յիմարութեան իբրեւ զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց» (Եղ., էջ 7): «Սպան զառիւծն իբրեւ զուլս այծեաց» (Ղեւոնդ, էջ 143):

բ) «չափ», «շատ» իմաստները: Օրինակներ. «Եւ տեսնի զօրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանն, զի էին իբրեւ զաստեղս երկնից, և իբրեւ զաւազ առ ափն ծովու» (Բուդ., էջ 17): «Եւ արարից զգաւակ քո իբրեւ զաւազ երկրի» (Ս. Գ., հ. 1, էջ 26): «Եւ եթէ եղիցի ժողովուրդն իբրեւ զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնացեն ի նոցանէ» (Ն. տ., հ. 3, էջ 344): «Կուտեսցէ զգերի իբրեւ զաւազ» (Ն. տ., էջ 483): «Եղիցին աւուրք նոցա իբրեւ զաւուրս երկնից ի վերայ երկրի» (Ն. տ., էջ 635):

Օրինակներ որպէս-ի վերաբերյալ. «Որ ի սկզբանէն արար և հաստատեաց զհիմունս երկրի, և ձգեաց զերկինս որպէս զխորան» (Բուդ., էջ 68): «Դնէ ձիւն. որպէս զասր, և զմէզ որպէս փոշի ցանեաց» (Ս. Գ., հ. 3, էջ 136): «Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհիս Հայոց ի տոհմէ նախարարաց՝ մատնէին որպէս զոչխարս ի մէջ գայլոց» (Ղեւոնդ, էջ 35):

Այս նախադրութիւններով ստվորաբար դրսևորվում է բացահայտիչ-բացահայտչալ հարաբերութիւնը: Այդ պատճառով դրանք, բացի հայցականից, նայած նախադասութիւնն այլ անդամների հետ ունեցած առնչութիւն, կարող են խնդիր ստանալ նաև մյուս հոլովներով: Այսպէս՝

ուղղակեանով. «Երկինք և երկիր ետեղակալք են հաստատեալք յարարէն ... և լուսաւորքն իբրև ճրագոնք լուցեալք» (Եղև., էջ 159): «Իբրև հովիւ հովուեսցէ զիսաշինս իւր» (Ագաթ., էջ 212): «Մի՛ յանկարգ իբրև հեթանոսս կոծ կամ աշխատանս որ անյուսութեամբ զնիցէ ինձ» (Բուդ., էջ 218): «Զի իբրև ձորձք ընդ ժամանակաւ մաշեսցին» (Ս. Գ., հ. 3, էջ 406): «Եւ գովելիք են, որպէս իմաստասիրեալքն» (Խոր., էջ 9):

սեռակեանով. «Սակայն և անդ իբրև ի վերայ որդոց հատուցելոց հայրաբար գթացեալ բարեգործէ» (Ագաթ., էջ 147): «Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ» (Ս. Գ., հ. 3, էջ 99):

տրակեանով. «Իբրև արդարոյ արժան էր խորհել՝ թէ զի՞նչ օգուտ է զի ես առնեմ»: (Եղև., էջ 259): «Բազում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդոյ վարդապետին տանէր» (Կոր., էջ 60): «Տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի... և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրոմ և մտերիմ հարազատի» (Խոր., էջ 241): «Ետ հրաման ահի մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիր պագանել իբրև աստուծոյ» (Թ. Ա., էջ 51):

բացառակեանով. «Գոչէ մարգարէն առ Հայր, իբրև յամենեցունց բերանոյ» (Ագաթ., էջ 321): «Որ արդարեւ անուն բլրակին մարգարէաբար, իբրու յանապակ գինւոյ զմայլեալ ուրախ արար զարբայ» (Թ. Ա., էջ 489): «Աստուածասէրն յիւր կամացն որպէս ի թշնամոյ զգուշանայ» (Եղև., էջ 299): «Դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեսցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ» (Խոր., էջ 298):

գործիակեանով. «Այլ փակեալ զերկինս իբրև սրահակաւ» (Ագաթ., էջ 277): «Եւ դուք իբրև կերակրով յագեալ կանամբք՝ յորժամ և կամիք՝ թողուք» (Ղեւոնդ, էջ 93): «Բանիւ վկայ Բանին Աստուծոյ, և յօժարութեամբն իւրով որպէս արեամբ պսակեալ» (Խոր., էջ 234): «Են՝ որ բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով» (Ս. Գ., հ. 3, էջ 161):

Այս նախադրութիւնները երբեմն գործածվում են առ, ի, ընդ նախդիրներին կամ այլ նախադրութիւններին զուգահեռ: Այս դեպքում նույնպէս դրսևորում են բացահայտիչ-բացահայտչալ հարաբերութիւն: Օրինակներ. «Թագաւորն... հրամայէր գրել հրովարտակս. և ոչ ևս ըստ սովորութեանն, այլ բանս զայրագինս իբր առ ատելիս և անպիտանս»

(Եղ., էջ 42): «Որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի» (ն. տ., էջ 118): «Մի՛ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս, զի հասակաւ կատարեալ եմք» (ն. տ., էջ 163): (Դիւրաւ ընթանան ի վերայ ձեռնն իբրև ընդ ցամաք երկիր» (Թ. Ա., էջ 204):

Ինչպես հայտնի է, գրաբարում տարածված էր պեսպիսության երեւութւթը. միեւնույն միտքը կրկնվում էր հոմանիշ բառերով: Քերականական այս իրողությունն արտահայտվում էր նաև հոմանիշ նախադրությունների միջոցով, ինչպես՝ «Եւ զուարճասցին իբրև զխոտ ջրաբքի, և որպէս զուռ ի մէջ ջրոց գնացից» (Ս. Գ., հ. 3, էջ 394): «Եւ գազանն զոր տեսի՝ նման ընծու, ոտք նորա իբրև զարջու, և բերան նորա որպէս զառիժու» (ն. տ., հ. 4, էջ 571):

Երբ համեմատության մեջ է դրվում երկու տարբեր առարկաների միեւնույն հատկանիշը, իբրև նախադրության խնդիրը զեղչվում է, և նրան փոխարինում է ստացական հոդը, ինչպես՝ «Եւ իմ սիրտս իբրև զձերդ է» (Ս. Գ., հ. 3, էջ 283), այսինքն՝ իմ սիրտս իբրև զձեր սիրտըն է:

Հույ ածականը, երբ գործածվում է իբրև նախադրություն, սովորաբար վերցնում է առ կամ ի նախդիրները կրող հայցականով խնդիր և նշանակում է «մոտ» (տարածությամբ կամ ժամանակով), «դեպի»: Օրինակներ. «Հեւրովդի հրամայեալ զիւր պատկերն հույ ի կայսերական պատկերն կանգնել ի մհհեանս Հայոց» (Խոր., էջ 143): «Բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հույ ի ճանապարհն» (ն. տ., էջ 177): «Եկեալ հասանէին զունդն Պարսից ի գաւառն Արտազ, հույ ի գեօղն որ կոչի Աւարայր» (Փար., էջ 69):

Օրինակներ ժամանակի հարաբերությամբ. «Նա և ոչ մատենագրութիւնք Դիողորի հույ առ մեզ են» (Խոր., էջ 257): «Մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հույ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի» (Թ. Ա., էջ 100)²⁵:

Ինչպես երևում է հիշյալ օրինակներից էլ, այս նախադրությունն ընդհանրապես գործածվում է նախադասութեան Բայց հանդիպում ենք նաև ետադաս գործածության դեպքերի, օրինակ՝ «Եւ Յովհանն ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենևին ոչ լինէր ի նոսա հույ» (Սեբ., էջ 55), այսինքն, ոչ լինէր հույ ի նոսա:

Տեղ-տեղ գործածվում է նաև տրական խնդրով, որտեղ արտահայտվում է դադարի իմաստ, ինչպես՝ «Որք եկեալ անկարգապէս բանակեցան հույ առ Բագնացն աւանի» (Խոր., էջ 355):

²⁵ Վերջին օրինակում գործածվել է առանց նախդրի:

Մերձ և մօտ նախադրությունները ևս ընդունում են առ կամ ի նախդիրներն ունեցող (առ-ը սովորաբար անձ ցույց տվող առարկաների անունների հետ, իսկ ի-ն՝ իր) հայցականով խնդիր և ցույց են տալիս՝

ա) տեղ՝ «մոտ», «մոտիկ» նշանակությամբ: Օրինակներ. «Եկեալ իշխելին մերձ ի թագաւորական քաղաքն» (Կոր., էջ 54): «Մօտ առ ինքն կոշեալ հարցանէր» (Բուզ., էջ 74):

բ) ժամանակ, ինչպես՝ «Եւ զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եղ առաջի» (Թ. Ա., էջ 360): «Եւ մնացին անդ մինչև մերձ ի զատիկն» (Ա. Լ., էջ 64): «Մօտ ի վախճան յայն սերմանէ կոյս մի ծնանկոց է» (Եզն., էջ 142):

Մերձ-ը ցույց է տալիս նաև գործողության կատարման ձևը, վիճակը, ինչպես՝ «Եւ յետ այսորիկ յատուսն յայնոսիկ հիւանդացաւ Եզեկիս մերձ ի մահ» (Ս. Գ., հ. 2, էջ 364): «Եւ արդարև խօթացաւ մերձ ի մահ» (Ն. տ., հ. 4, էջ 479)²⁶:

Մօտ-ը ցույց է տալիս նաև հանգում, ինչպես՝ «Եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա» (Բուզ., էջ 226): «Հասին մօտ ի շէնն» (Ա. Լ., էջ 102):

Շատ սակաւ դեպքերում ընդունում է ընդ նախդիրը կրող հայցական հոլովով խնդիր, օրինակ՝ «Եւ մօտ ընդ մուտս արևուն թըմբութիւն արկանէր ի վերայ Աբրահամու» (Ս. Գ., հ. 1, էջ 29):

Երբեմն ի նախդրի փոխարեն գործածվում է առ-ը: Օրինակներ. «Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարածաւէր, և մօտ առ երեկս կարճատէր» (Եզ., էջ 118): «Եւ զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եղ առաջի» (Թ. Ա., էջ 360):

Երբ նախադրության խնդիրն սկսվում է ձայնավորով, նախադրության հետ գործածվում է առ ի նախդրային հարադրությունը, ինչպես՝ «Իսկ իշխանն Աշոտ և եղբարք իւր խոյս տուեալ զկողմամբն Փոքր Աղբագոյ, մերձ առ յամուրան Զղմար և Սրինգ» (Թ. Ա., էջ 386):

Մօտ և մերձ նախադրությունները, մանավանդ առ նախդիրն կըցվելիս, խնդիր են ընդունում նաև մյուս հոլովներով, որը կախված է առ-ի խնդրառությունից: Այդ դեպքում արտահայտում են տարածական հարաբերություն՝ դադար կամ ուղղություն (տեղաշարժ): Օրինակներ.

սեռակաճով. կարող է գործածվել նախդրով կամ առանց նախդրի. «Եւ Երակլոս հասեալ բանակեցաւ առ դուրս մերձ Տիգրոն քաղաքին» (Սեբ.,

²⁶ Մերձ ի մահ կապակցությունը աստիճանաբար դարձել է բաղադրություն, որից էլ առաջացել է աշխարհաբարի մերձիմահ ածականը:

էջ 95): «Եւ ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա գտուն գանձու պաշտպանութեան կոոցն» (Թ. Ա., էջ 98).

տրակաւնով. այս դեպքում նույնպէս կարող է գործածուիլ առ նախադրի հետ կամ առանց նրան: «Եւ բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային» (Բուզ., էջ 195): «Ընկալան մերձ առ վիմին դատաւորք նոցա» (Ս. Գ., հ. 3, էջ 131): «Եւ եկեալ բանակէր մերձ առ նմա» (Ղեւոնդ, էջ 41).

գործիակաւնով (նախդրով կամ առանց նախդրի): «Եւ մերձ առ լերամբն ոչ թողացուցանէր այլում պարապիլ գործոյ» (Խոր., էջ 228): «Եւ բանակեցան... մերձ առ երկրամեծ Եդոմայ» (Ս. Գ., հ. 1, էջ 329): «Երթեալ անցանէ ընդ Շիրակ և ընդ Վանանդ մերձ քաղաքան Կարնոյ» (Սեբ., էջ 81): «Աւան մի էր ի գաւառին Բասենոյ՝ մերձ առ ստորոտով լերինն տր կոչի Միրանիս» (Ա. Լ. էջ 102):

Այն հանգամանքը, թե մօտ և մերձ նախադրությունները հոմանիշ են, երևում է նաև նրանից, որ դրանք երբեմն գործածվում են նախադասության համազոր անդամների հետ (պեսպիսություն): Օրինակներ. «Եւ ածին փոս դբանակաւն իւրեանց մօտ ի լեռանն ի նպատ մերձ ի գետն Եւփրատ» (Բուզ., էջ 161): «Զի եղ մերձ ի մահ գտուն իւր, և մօտ ի դժոխս՝ ընդ երկրածինս զշաւիղս իւր» (Ս. Գ., հ. 3, էջ 143):

Գտնում ենք նաև ետադաս գործածությամբ. «Եւ ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսին, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն» (Թ. Ա., էջ 361):

Երբեմն մերձ և մօտ նախադրություններին զուգահեռ գործածվում են միեւ չ միեւ չ նախադրությունները, որոնք է՛լ ավելի են մասնավորում դրանց արտահայտած իմաստները: Այս դեպքում կրկնակի նախադրություններն իրենց խնդիրների հետ դառնում են նախադասության մեկ անդամ: Օրինակներ, որոնցում դրանք ցույց են տալիս տեղ. «Եւ եղիցի ձեզ կողմն ընդ հարաւ ի սիւնն անապատէ միեւ չ մօտ յԵդոմ» (Ս. Գ., հ. 1, էջ 329): «Եւ եհան զզօրսն միեւ չ մերձ ի գլուխ լերինն» (Թ. Ա., էջ 297):

Օրինակներ, որոնցում ցույց են տալիս ժամանակ. «Եւ լցան երկոքին նաւքն՝ միեւ չ մերձ յըմկղմիլ նոցա» (Ս. Գ., հ. 4, էջ 126): «Եւ մընացին անդ միեւ չ մերձ ի գետիկն» (Ա. Լ., էջ 64):

Միեւ չ միեւ չ նախադրությունները պահանջում են առ, ի, ց նախդիրները կողմ հայցակաւնով խնդիր և ցույց են տալիս տեղ կամ ժամանակ: Ավելի հաճախակի գործածվում է միեւ չ-ը: Օրինակներ. «Ի Տարօն հասուցանէին միեւ չ թուն գիւղն յԱշտիշատ» (Կոր., էջ 88): «Որոյ լինիցի գլուխն միեւ չ յերկինս» (Ս. Գ., հ. 1, էջ 22):

Օրինակներ, որոնցում տվյալ նախադրությունները ցույց են տալիս ժամանակ. «Որ միեւ չ առ մեզ հասեալ շարագրեցին» (Թ. Ա., էջ

19): «Եւ հՀաս ահաւասիկ մինչև առ ձեզ» (Ագաթ., էջ 253): «Կարգ թաղաւորացն Յուդայ ձգեցաւ մինչև ցմակաբէացիսն» (Նդն., էջ 160): «Զի վասն գործոյ Տեառն մինչև ի մահ մերձեցաւ, դուն գործեալ ոգւովք շափ» (Ս. Գ., հ. 4, էջ 479): «Եւ նորա տիրեալ ունէր զիշխանութիւնն Հրէաստանի և Ասորեստանի մինչև ի վախճան կենաց իւրոց» (Ղեւտնդ, էջ 3)²⁷:

Երբ մինչ և մինչև նախադրություններին հաշորդում է մեկ այլ նախադրություն, վերոհիշյալ նախդիրները դրվում են երկրորդ նախադրությունից հետո կամ բոլորովին զեղչվում են, ինչպես՝ «Եւ լցան երկոքին նաւքն՝ մինչև մեծ յընկղմել նոցա» (Ս. Գ., հ. 4, էջ 126): «Եւ երկայնեաց դրանն մինչև ի մեջ գիշերոյն» (Ն. տ., էջ 294):

Այս նախադրությունները երբեմն արտահայտում են ժամանակացին կամ տարածական այնպիսի հարաբերություն, ուր նշվում են գործողության կատարման սկիզբն ու վերջը: Ըստ որում, սկիզբնակետը նշող անգամը միշտ դրվում է բացառական հոլովով, իսկ վախճանակետը նշող անգամը՝ հայցականով: Օրինակներ. «Ի մանկութենէ Գնելոյ մինչև յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ի բանակն արքունի» (Բուդ., էջ 156): «Որ առաջնորդեաց մեզ ի մանկութենէ մերմէ մինչև յօրս և ի ժամս յայտ» (Ագաթ., էջ 92): «Զամենայն եղեւսն յաշտարակագործութենէ մինչև առ մեզ ի հասողութիւն քեզ ի մերումս ածել ջանասցուք պատմութեան» (Խոր., էջ 28): «Եւ տիրեսցէ նա ի ծովէ մինչև ի ծով և ի գետոյ մինչև ի ծագս տիեզերաց» (Ղեւտնդ, էջ 72):

Նշեցինք, որ առ-ը գործածվում է անձ ցույց տվող առարկաների անունների հետ: Բայց երբեմն հանդիպում ենք ի նախդրի գործածության՝ առ-ի փոխարեն: Իսկ նման «շեղումը» կապվում է վերևում նշված իմաստի հետ: Օրինակներ. «Առ հասարակ կլանէր յԱղամայ մինչև ի Մովսէս» (Ագաթ., էջ 175): «Սկսեալ յԱբրահամէ և դայ անցանէ մինչև ի Յովսէփ» (Թ. Ա., էջ 28):

Սակն նախադրությունը, ինչպես արդեն նշվել է, առհասարակ խնդիր է ստանում սեռական հոլովով: Բայց հանդիպում ենք եզակի օրինակների, երբ այն խնդիր է վերցնում նաև հայցականով. դա հատկապես այն ժամանակ, երբ վերջինս արտահայտվում է անորոշ դերբայով: Օրինակ՝ «Բայց մի՛ ինձ մեղադիր լինիր, տ՛վ ուսումնասէր դու, սակն ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատմաս» (Թ. Ա., էջ 314):

Հայցական հոլովի հետ գործածվում է ի սակն կազմությամբ, այն

²⁷ Այստեղից են մեր օրերի բարբառային մինչի, մինչևի ձևերը:

էլ՝ յայն սակս, յոր սակս կապակցութիւններում: Դրանք ցույց են տալիս՝

ա) պատճառ՝ «պատճառով» նշանակութեամբ: Օրինակներ. «Վասն զի անտեւական են մարմինք՝ յայն սակս մեռանին» (Եզն., էջ 73): «Եւ յոր սակս սպան զնա» (Ս. Գ., Գ. 4, էջ 350).

բ) նպատակ՝ «համար» իմաստով, ինչպես՝ «Յոր սակս և հարքն մեր սուրբ եպիսկոպոսք սահմանեցին կանոնս» (Եզն., էջ 287):

Քան. գրաբարի ամենագործածական նախադրութիւններից մեկն է: Եղիշեն իր երկում գործածել է 114 անգամ, Ղ. Փարպեցին՝ 111, Եղ-նիկը՝ 107, Ագաթանգեղոսը՝ 88, Մ. Խորենացին՝ 94, Ա. Լաստիվերտցին՝ 42, Սեբեոսը՝ 30 անգամ:

Քան նախադրութիւնը դրվում է իր խնդրից առաջ, վերցնում է որոշյալ հայցականով խնդիր և արտահայտում է՝

ա) բաղդատական հարաբերութիւն՝ խնդրի համեմատութեամբ ավելի կամ պակաս, վերջինիս հետ կազմում է ածականի բաղդատական աստիճան, և միասին կատարում են մեկ պաշտոն²⁸: Օրինակներ. «Գտանի հիւղն մեծ քան զնա» (Եզն., էջ 23): «Որ և մարդ իսկ է, և վատթարագոյն քան զամենայն մարդիկ» (Ն. տ., էջ 253): «Մեծացուցէ Աստուած զանուն Սողոմոնի որդւոյ քոյ՝ քան զանուն քոյ, և մեծացուցէ զաթոռ նորա քան զաթոռ քո» (Ս. Գ., Գ. 2, էջ 131): «Յանկալի է նա քան զոսկի՝ և քան զականս պատուականս բազումս. քաղցր է նա քան զմեղու խորիսխ» (Ն. տ., Գ. 3, էջ 27): «Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան» (Սեբ., էջ 2).

բ) բաղդատական հարաբերութիւն, բայց որոշ յուրահատկութեամբ՝ «նման», «պես», «չափ», «շատ» իմաստներով, ինչպես՝ «Ասիցէ թէ քան զհողմս թեթեւ են» (Եզն., էջ 90): «Ունիցիք հաւատս քան զհաւ մանանխոյ» (Ս. Գ., Գ. 4, էջ 39): «Մի՛ այր քան զընկեր հպարտանայցէք ի վերայ ընկերին» (Ն. տ., էջ 407):

Նոր հայկադայն բառարանում և Հ. Աճառյանի քերականութեան հատորում նշված է, որ քան-ը կարող է խնդրի ստանալ նաև մյուս հոլովներով: Բայց նրանցում բերված փաստերը շին համոզում: Ահա-վասիկ՝ «Հզօր է բորբոքումն նորա քան զհրոյ» (Ոսկ, Յովհ., բ., էջ 27): «Քրիստոնեայն յաղքատութեանն առաւել պայծառանայ քան ի մեծութեանն» (Ոսկ. Երբ.)²⁹: Երկրորդ օրինակում (այն բերված է միայն Հ.

²⁸ Ինչպիսի հայտնի է, գրաբարում դա որակական ածականների համեմատական աստիճան կազմելու եղանակներից մեկն էր (տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 87—88):

²⁹ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Գ. 2, Վենետիկ, 1837, էջ 973, Հ. Աճառյան, Լեզվատար քեր. նշվ. հատորը, էջ 180:

Աճառյանի կողմից) շաղկապ է՝ «քան թե» իմաստով, իսկ առաջինում զեղչված է հայցականով խնդիրը՝ քան գործողումն հրոյ:

Քան-ը առանել, աւելի, արտաքայ, արտաքս, անդր, ի ներքոյ, ի վեր, ի վերոյ, յառաջ, յառաջագոյն, նախ և այլ բառերի հետ կազմում է հարադրութուններ, որոնք կիրառւում են նաև իբրև նախադրութուն: Դրանցից մի քանիսին անդրադարձել ենք վերևում, իսկ ստորև կանգ կառնենք մյուսների վրա:

Ի ներքոյ քան. դրվում է իր խնդրից առաջ և նշանակում է «ներքև», «աւելի ներքև», «տակ», «ցած»: Օրինակներ. «Եւ է մարմին ի վերոյ քան զերական արեանն և ի ներքոյ քան զերական» (Եղն., էջ 197): «Նոյն-պէս և ի ներքոյ քան զնա մարգարէանոցն Յովհաննու» (Բուզ., էջ 32):

Ի վերոյ քան. սա հականիշ է վերոհիշյալ նախադրությանը, այսինքն՝ արտահայտում է «վեր», «աւելի վեր», «աւելի բարձր» իմաստները: Օրինակներ. «Եւ արկ զաթոռ նորա ի վերոյ քան զբազումս ի նոցանէ, որք ի սինհոդոսին յայն էին» (Բուզ., էջ 23): «Եւ ի վերոյ քան զամենայն նախարարութիւնս կարգէ» (Խոր., էջ 204): «Եւ արկ զաթոռ նորա ի վերոյ քան զաթոռս թագաւորացն» (Ս. Գ., հ. 2, էջ 250): «Եւ անօրէնութիւնք մեր բարձրացան առանել ի վերոյ քան զերկինս» (Ն. տ., էջ 402): «Ի վերոյ քան զամենեսեան բազմեցուցին զնա» (Եղ., էջ 153):

Գեր ի վերոյ քան և ի վեր քան նախադրությունները ցույց են տալիս առարկայի համեմատելի հատկանիշը՝ «բարձր», «աւելի բարձր», «գերազանց» իմաստներով: Օրինակներ. «Որոյ երթեալ՝ լինէր օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեամբք. այլ կուսութեամբ գեր ի վերոյ քան զհարսն» (Խոր., էջ 259): «Ապա թէ անկատար էր, յայտ է, թէ էր ոմն ի վեր քան զնա» (Եղն., էջ 118):

Դրանք ցույց են տալիս նաև գործողության կատարման շափը, ձևը, ինչպես՝ «Եւ այսպէս հպարտացաւ ի միտս իւր ի վեր քան զմարդկային բնութիւն» (Եղ., էջ 12): «Վասն այնորիկ զի գոնեայ ի հրեշտակին խօսակցութենէ ի վեր քան զմարդ սոսկ երկիցի» (Ղեւոնդ, էջ 79):

Յառաջ քան, յառաջագոյն քան (բաղդատական աստիճանի երանգով), նախ քան նախադրություններն տւեն միանման կիրառություն. դրվում են իրենց խնդիրներից առաջ և արտահայտում են ժամանակի գաղափար: Դրանք գործածվում են այնպիսի նախադասությունների կազմում, որոնց բայերը ցույց են տալիս իրար հաջորդող գործողություն: Օրինակներ. «Եւ զայս աղօթս մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին» (Բուզ., էջ 189): «Որոյ այնչափ վնաս յառաջագոյն քան զմահն իւր արարեալ էր» (Եղն., էջ 268): «Որ նախ

փան զքո երթալն ի դուռն՝ և սպաս մի քո մեծ ծանուցանի արարուածքդ առաջի թագաւորին և ամենայն Արեաց» (Փար., էջ 171):

Երբեմն դրանք ցույց են տալիս նախադրութեան խնդրի միշտոյով արտահայտվող դեպքի, գործողութեան կատարման բացառում: Օրինակներ. «Ընտրեաց զմեզ յառաջ փան զլինելն աշխարհի» (Եզն., էջ 171): «ԶՔրիստոսի մասն կարօտեալ եղբօրն տուր նախ փան զքո ճաշակելն» (Ն. տ., էջ 307): «Եւ անուն նորա Արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ փան զերկին և զերկիր, որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է» (Եզ., էջ 30): «Իսկ Աբաս որդի Սմբատայ հպարտացեալ գայ իջանէ ի դաշտն Վաղարշապատ քաղաքի, կամեցեալ յառաջագոյն փան զգալուստն մեծի թագաւորին Հայոց Գագկայ անձինն ինչ ստանալ պարծանս» (Թ. Ա., էջ 489)³⁰:

Երբեմն փան բառը առաջոյ և առաջի մակբայների հետ կազմում է առաջոյ փան, առաջի փան բաղադրյալ նախադրութիւնները: Դրանցից առաջինը, որին մեկ անգամ հանդիպում ենք Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գրքում, ցույց է տալիս ժամանակ՝ «առաջ», «սկզբից», «շուտ» իմաստներով, իսկ երկրորդը՝ տեղ («առաջ», «առջեւից»): Օրինակներ. «Դուք իբրեւ զհրովարտակս զայս տեսանէք, անխափառ վաղվաղակի ալրուծի գումարեցէ՛ք առաջոյ փան զիս, յանդիման լինիքիք ինձ յԱպար աշխարհին» (Եզ., էջ 10): «Եւ երթայր Յիսուս առաջի փան զնոսա, և զարմացեալ էին որ զհետն երթային» (Ս. Գ., հ. 4, էջ 93):

Այսպիսով, հայցական խնդրով նախադրութիւնների շուրջ կհամասիր կազմում գործում է փան բաղադրիչը:

Այնուհետեւ, տվյալ հոլովի հետ ամենից հաճախ գործածվում են իբրեւ, փան, մինչև, որպէս նախադրութիւնները:

ԲԱՑԱՌԱՎԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարում բացառական հոլովով խնդիր ընդունող նախադրութիւններն ու իբրեւ նախադրութիւն գործածվող բառերը քիչ են: Դրանք են՝ բաց, բայց³¹, բացագոյն (ի բացագոյն), ի բացեայ, գաղտ, զան-

³⁰ Երբ տվյալ նախադրութիւններին հաջորդում է մեկ այլ նախդիր, գ-ն չի դրվում: Օրինակ՝ «Յառաջ փան ի խաչ ելանել եցոյց զթագաւորութիւն իւր» (Եզն. էջ 270): Այս երևույթը իր ժամանակին նկատել է գրաբարի անվանի քերական Վ. Զաւրխյանը (տե՛ս նրա «Քերականութիւն հայկազնեան լեզուի», էջ 449):

³¹ Ղեւտդ Մեծի գրքում բայց-ը մեկ անգամ գործածված է հայցական խնդրով. «Ահա թշնամին է այս, որ որդայ զամալութիւն իւր, որ այլ տեղի փախստեան ոչ եղիտ բայց զանապատն քոյ» (էջ 96):

խաղ, գատ, ընդհատ, լոկ, հեռի, հեռէ, մեկուսի, մերկ, ուրիշ, ուրոյն, ի վեր և այլն:

Բաց և բայց նախադրութիւններն ունեն միատեսակ կիրառութիւն. դրվում են իրենց խնդրից առաջ և արտահայտում են բացառման հարաբերութիւն՝ «բացի», «առանց», «զատ» իմաստներով: Այդպիսի իմաստ ունի նաև երբեմն իբրև նախադրութիւն հանդես եկող լոկ ածականը: Օրինակներ. «Ի խնդիր արկանէր՝ զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց ի մեծութենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտանէր» (Բուզ., էջ 43): «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն» (Ս. Գ., հ. 1, էջ 145): «Եւ յայսր ամենայն քաջութեան վերայ ոչ որ անկեալ վիրաւորեցաւ ամենեկին ի նոցանէ, բայց ի միոյ երանելոյ, որ կատարեցաւ նահատակութեամբ ի մեծ պատերազմին» (Սղ., էջ 78): «Զի եթէ լոկ ի բանիցն խօսելոյ ընդ մեզ սիրով նիխորոյ զձեօք այդպէս ամպ մթազին և շափառուկ անկաւ, և չերկիք ի գետնոյդ» (Փար., էջ 163):

Ուշ շրջանի մատենագրութեան մեջ սրանց հանդիպում ենք նաև առանց ի նախդրի³², օրինակ՝ «Զի ոչ ումեք զայդ յանձին կալաւ Աղէքսանդրոս՝ կարծել տիրել ումեք երկրի բաց Աղէքսանդրէ» (Թ. Ա., էջ 82):

Երբ նախադրութեանը հաջորդում է մեկ այլ նախդիր, ինչ չի դրվում. «Եւ մի ումեք պարտապան գտանիցիք, բաց զմիմեանս սիրելոյ» (Ս. Գ., հ. 4, էջ 394):

Իբրև նախադրութիւն հանդես է գալիս նաև բայց միայն կազմութիւնը, որն ունի նույն կիրառութիւնը, ինչ նախորդները: Օրինակներ. «Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այսց³³ կառաց» (Սղ., էջ 17): «Արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն» (Բուզ., էջ 63): «Ոչ որ էր զկնի տանն Դաւթի, բայց միայն ի գաւազանէ տանն Յուդայ և Բենիամինի» (Ս. Գ., հ. 2, էջ 162): «Քանզի և սա ասի թաղաւորեալ ամենայն Ասիաստանի և Լիբէստանի, բայց միայն ի Հնդկաց» (Թ. Ա., էջ 55)³⁴:

Բաց արմատից ծագած ի բացեալ և բացագոյն (ի բացագոյն) մակբայները երբեմն գործածվում են նաև որպես նախադրութիւն՝ «հեռու», «ավելի հեռու» նշանակութեամբ: Օրինակներ. «Հաճի ի գաւառին

³² Վերահիշյալ նախադրութիւնների հետ գործածվող ի նախդիրը դրանց լպետք է վերագրել, որովհետև գրաբարում բացառական հոլովը առանց ի նախդրի չի գործածվում: Միաժամանակ պետք է նկատել, որ աշխարհարարի բացի կապը առաջացել է այդպիսի կիրառութիւնից:

³³ Գրքում առանց ի (յ) նախդրի է, որը, հավանաբար, տպագրական վրիպակ է:

³⁴ Զմոռանանք, սակայն, որ ինչպես բայց, այնպես էլ բայց միայն բառերը հանդես են գալիս նաև որպես շաղկապներ:

կարնոյ, շինել զքաղաքն... իբր միշոց վարկուցեալ զվայրսն, ոչ կարի ի բացեալ ի տեղեացն, ուր Եփրատայ մասինն ինչ բղխնն աղբիւրք» (Խոր., էջ 338): «Որ կայ դէմ յանդիման լերինն մեծի... ի բազնին տեղւոջէ ի բացագոյն իբրեւ քարընկէց մի ի ներքոյ կուտէ» (Բուզ., էջ 33): «Ապա անգիտացեալ զօրուն Յունաց անգիտութիւն մեծ՝ զատուցանէին զաղիս բանակին իւրեանց բացագոյն ի նոցանէն բաղում վտանօք» (Ղեւոնդ, էջ 5): «Եւ ինքն ձենբակուր սակաւ արամբք բանակէր բացագոյն ի նոցունց իբրեւ վտանանօք ինչ սակաւ» (ն. տ., էջ 39): «Եւ բնակեն ըստ ազգս ազգս, բացագոյն ի միմեանց» (Թ. Ա., էջ 287):

Փաղտ մակրայլը, երբ գործածվում է նախադրութեան դերում, արտահայտում է «գաղտնի», «գաղտուկ», «ծածուկ» իմաստները: Օրինակներ. «Յորոց ձեռս տայր գաղտ յերանելի սպարապետէն Վարդանայ նենգաւորն Վասակ զգրեալսն շրջեցուցանել ընդ աշխարհս Հայոց» (Փար., էջ 68): «Զայս ածաք զմտաւ, թէ գաղտ բնաւ յանդգաստուց զարհուրեալ՝ դնամք» (ն. տ., էջ 168): «Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի ճակատն» (Բուզ., էջ 215)³⁵:

Նույն իմաստով է կիրառութեամբ որպէս նախադրություն հանդես է գալիս նաև զանխոյ մակրայլը: Օրինակներ. «Այլ մանուկն Արտաւազդ... վառեցաւ կաղմեցաւ և եմուտ զանխոյ ի մանուէլեան գնդէն, առափն Եփրատ գետոյն» (Բուզ., էջ 215): «Եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխոյ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ» (Խոր., էջ 317):

Զատ նախադրությունը գործածվում է նախադաս և ցույց է տալիս բացառման, առանձնացման, անջատման հարաբերություն՝ «բացի», «զատ», «առանձին», «անջատ» իմաստներով: Օրինակներ. «Զի եթէ կարող ոք ինչ էր, նախ իւր տեղիս զատ ի նմանէ առնէր» (Եղն., էջ 71): «Ոչ հաւատային ընդանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի» (Բուզ., էջ 200): «Հրաման տայր... զատ ի միմեանց փութալ հասանել ի գեօղն Վարազկերտ» (Փար., էջ 123): «Երանելի խոստովանողն... ընտրեաց իւր տեղի զատ յամենայն բաղմամբոյս ժողովրդոց» (Եղ., էջ 191):

Ընդհատ և օտար ածականները հազվադեպ գործածությամբ հանդես են գալիս նաև իբրեւ նախադրություն, որոնք ունեն միատեսակ կիրառություն: Դրանք արտահայտում են տարբերակման, առանձնացման գաղափար՝ «տարբեր», «առանձին» նշանակությամբ: Օրինակներ. «Եւ ոչ ինչ ընդհատ յայսց պատուոց տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն և ի կարմիր կոշկէ» (Խոր., էջ 174): «Յաղագս

35 Այս օրինակներում առկա է նաև մակրայական երանգը:

թէ ինչ որ հաւասար, եւ է ինչ որ օտար ի Մովսիսէ պատմեն այլքն հընախօսք, (Ն. տ., էջ 22):

Հեռի նախադրութիւնը ավելի շատ հանդիպում է նախադաս գործածութեամբ, նշանակում է «հեռու» և հականիշ է մօտ կամ մերձ նախադրութիւններին: Օրինակներ. «Յորմէ աստուածականն հեռի՝ որ ի վեր է» (Յզն., էջ 123): «Ընկալչիք հաւատս և օրէնս աստուածատուրս հեռի ի ստութենէ» (Թ. Ա., էջ 257):

Գործածվում է նաև հեռագոյն կազմութեամբ (բաղդատական աստիճանի երանգով): Օրինակներ. «Հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր» (Խոր., էջ 166): Եւ բանակեցան սակաւ մի հեռագոյն ի միմեանց ի վարարատ գաւառին» (Սեբ., էջ 38): «Արքայն Խոսրով նստէր ի մէջ Խորանին իւրում, և զաւրն Պարսից շուրջ զնովաւ բանակեալ, և զաւրն Յունաց հեռագոյն ի նոցանէ աւթիւ միով» (Ն. տ., էջ 42): «Եւ մինչ հասեալ առ զօրագլուխսն, այլ ի բացեայ երթայր հեռագոյն ի նոցանէ իբրև երկու մղոնս» (Թ. Ա., էջ 239):

Հետէ. իբրև նախադրութիւն գործածվում է ի հետէ կապակցութեան ձևով, որի նախդիրը դրվում է խնդրից առաջ, իսկ հետէ բաղադրիչը՝ խնդրից հետո: Արտահայտում է ժամանակային հարաբերութիւն՝ «հետո», «ի վեր», «այնուհետև», «այսուհետև» իմաստներով: Օրինակներ. «Զոր է նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ արշակունիս վաստակեալ եմք» (Բուզ., էջ 203): «Որ ի նախնեացն հետէ մոլորեալ դանդաշեցին» (Ագաթ., էջ 259): «Եւ զկնի հնգից ամաց յորմէ հետէ սկսան շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել»³⁶ (Թ. Ա., էջ 480):

Մեկուսի բառը, բացի ածականական և մակբայական կիրառութիւնից, գործածվում է նաև իբրև նախադրութիւն: Դրվում է իր խնդրից առաջ և արտահայտում է տեղի գաղափար՝ «մի կողմ», «հեռու», «դատ», «առանձին» իմաստներով: Օրինակներ. «Ապա բռնադատեաց զնա Յոհան, իշոյց ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն» (Բուզ., էջ 226): «Եւ յանձն առ՝ և խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն» (Ս. Գ., հ. 4, էջ 171): «Ընտրեաց երկուս ի նոցանէ, որ համեստագոյնք էին, առեալ մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա» (Յզ., էջ 183): «Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն Արամաղդայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն, գետոյ հզօրի ընդ մէջ անցանելով» (Խոր., էջ 233):

³⁶ Այս կիրառութիւնից է առաջացել արևմտահայերէնում գործածվող յորմէ հետէ կապակցութիւնը:

Մերկ ածականը երբեմն գործածվում է իբրև նախադրություն: Սովորաբար դրվում է խնդրից առաջ, ցույց է տալիս բացառման հարաբերություն՝ «առանց», «զուրկ», «զերծ», «զատ» իմաստներով: Օրինակներ. «Եւ նորա թողեալ զկտան՝ փախեալ մերկ ի նոցանէ» (Ս. Գ., 4, էջ 105): «Եւ մեկնեալ զգօրսն ի նմանէ ընդ կողմն Ասահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, տշ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երկւարօք իւրեանց» (Թ. Ա., էջ 358): «Վասն զի ի պատճառս որսոյ ելեալ շրջէր իշխանն... միանգամայն մերկ ի զինուց» (Ն. տ., էջ 424): «Այժմ մերկ գլխով և ոտամբ առաջի գերշացն գնան, մերկ ի զարդուց» (Ա. Լ., էջ 31):

Հանդիպում ենք նաև հտադաս գործածության օրինակների, այսպես՝ «Արդ որ այսպէս և այսքան էին յառաջ ժամանակաւ, այժմ է տեսանել... յամենայն բարեփառութենէ մերկ» (Ա. Լ., էջ 56):

Ռեիշ բառը, բացի ածականական և մակբայական կիրառությունից, շատ հազվագեղ գործածվում է նաև որպես նախադրություն, որն արտահայտում է «տարբեր», «առանձին», «զատ» իմաստները: Օրինակ՝ «Բերիցէ... և թուղն զտեսիլ իւրոյ տերեւոյն և զարար կեղեւոյն և զտարր մրդոյն ի նմանէ ուրիշ և այլքն ի նմանէ ուրոյնք» (Ազաթ., 330):

Սահմանափակ կիրառությամբ իբրև նախադրություն հանդես է գալիս ուրոյն մակբայը, որն արտահայտում է բացառման գաղափար՝ «առանց», «բացի», «զատ» իմաստներով, ինչպես՝ «Բայց Երուսաղայ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմարայ, ուրոյն ի կոցն» (Խոր., էջ 166):

Ի վեր. այս նախադրությունը դրվում է իր խնդրից հետո և նշանակում է «վեր», «վերև», «ավելի վեր (բարձր)»: Օրինակներ. «Կարի անարժան գործ էր, և ի լուսնոյ ի վեր զամենայն ինչ անմահ համարել» (Եղն., էջ 223): «Եւ բունն ի շորից կանգնոց. և ի բնէն ի վեր ցեղչերսն՝ կանգուն մի» (Ս. Գ., 4, էջ 793):

Երբեմն որպես նախադրություն է գործածվում և անդր կազմությունը, որն արտահայտում է ժամանակի գաղափար՝ «հետո», «այնուհետև» նշանակությամբ: Օրինակ՝ «Եւ Դանիէլ եղև մեծ առաջի ժողովրդեանն յօրէ յայնմանէ և անդր» (Ս. Գ., 4, էջ 661):

Այսպիսով, բացառական խնդրով նախադրություններից և որպես այդպիսիք գործածվող բառերից ավելի հաճախակի հանդիպում ենք բաց, բայց, զատ, հետէ բառերին:

Դրաբարում ամենից քիչ նախադրություններ գործածվում են գործիական հոլովի հետ: Դրանք են՝ զառաջեալ³⁷, հանդերձ, շուրջ, շափ, ի ստորև և այլն: Բացի դրանցից, մի քանի այլ նախադրություններ ու իբրև այդպիսիք գործածվող բառեր, ինչպես՝ իբր, իբրև, որպէս, հապ, մերձ, մօտ և այլն, իրենց հիմնական խնդրառությունից զատ, խնդիր կարող են ստանալ նաև գործիական հոլովով, որի մասին խոսվել է վերեւում:

Զառաջեալ. այս նախադրությունն ունի նախադաս գործածություն, ցույց է տալիս տեղ՝ «առջև», «դեմ», «դիմաց» իմաստներով: Օրինակներ. «Զեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զառաջեալ իւրով զսա էր սնուցեալ, (Բուզ., էջ 89): «Ապա հրաման տայր կոչել զառաջեալ իւրով արքայ Արշակ զամենայն մեծամեծս իւր» (Ն. տ., էջ 114):

Փ. Բուզանդի գրքում նույն կիրառությամբ հանդիպում է նաև զառաջեւ ձևը, օրինակ՝ «Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով» (Բուզ., էջ 141):

Ետադաս գործածության ժամանակ զ նախդիրն անջատվում է բառից և անցնում խնդրից առաջ, իսկ առաջև բաղադրիչը դրվում է խնդրից հետո. «Եւ հրամայէր զնա կապել զիւրով առաջև» (Բուզ., էջ 59):

Զառաջեալ—ին հոմանիշ են առաջի և յանդիման նախադրությունները, որոնք, ինչպես ասվել է, խնդիր են վերցնում սեռական հոլովով: Հմմտ. «Եւ ածին զԴրիգորիոս առաջի թագաւորին» (Ագաթ., էջ 30): «Եւ ածին զՏրդատիոս յանդիման թագաւորին» (Ն. տ., էջ 28): «Ապա կոչեն զՄուշեղ զառաջեալ արքային» (Բուզ., էջ 163): «Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով» (Ն. տ., էջ 141):

Հանդերձ. սա գրաբարի ամենատարածված նախադրություններից մեկն է: Ունի և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն, արտահայտում է միասնության հարաբերություն՝ «հետ», «միասին», «հանդերձ», «մեկտեղ» իմաստներով³⁸, իր ցույց տվող բառերի հետ գործածվելիս արտահայտում է գործիական հոլովի իմաստ: Օրինակներ. «Հնազանդելոց է փրկչին մերում հանդերձ մահուամբ և սատանայ» (Եղև., էջ 184): «Զոր առեալ վահանայ և Հմայեկի... հանդերձ աշխարհական ամբոխի...»

³⁷ Սա խնդիր է վերցնում նաև սեռական հոլովով, որի մասին խոսվել է «Սեռական խնդրով նախադրություններ» բաժնում:

³⁸ Եղիշեի գրքում այս իմաստով որպես նախադասություն մեկ անգամ գործածված է հետ բառը. «Եւ եհար եպիսկոպոսին զաջ ուան թիկամբն հետ և զձեռն ի վայր բնկէց» (Եղ., էջ 177):

յՈՂական ելանէին» (Կոր., էջ 94): «Հանդերձ սաղմոսիւք և օրհնութեամբ, կանթիւիւք վառելովք և մեծապաշտմամբք և բազում յիշատակօք զսուրբն յուղարկեցին» (Բուզ., էջ 184): «Զի Հայր ինձ վկայէ Հոգւովն հանդերձ ճշմարտութեամբ» (Ագաթ., էջ 223): «Որ իբրև լուաւ, զմի ի գլխաւորացն հանդերձ զօրու առաքեաց ի վերայ նորա» (Ա. Լ., էջ 106):

Այժմ բերենք օրինակներ հտադաս գործածութեամբ. «Եւ յետ առնելոյ զաշխարհս ել ինքն զօրօքն հանդերձ յերկինս» (Եզն., էջ 243): «Որոյ խոստացեալ այնուհետեւ առնուլ զնոյ ընտանեօքն հանդերձ և ամենայն շնչականօքն ի տապանն» (Ագաթ., էջ 155): «Զի շուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելովնէ կնան և որդւովքն և ամենայն աղխիւն հանդերձ» (Սեբ., էջ 3): «Որ ի վարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ» (Թ. Ա., էջ 77):

Հանդերձ նախադրութեան շարահասութեան համար օրինաչափութիւն գտնելը դժվար է, որովհետեւ մի մատենագիր գերադասում է նախադաս գործածութիւնը, մյուսը՝ հտադաս: Այսպես, օրինակ, Ագաթանգեղոսն այն իր գրքում գործածել է 25 անգամ նախադաս, 61 անգամ հտադաս, Կորյունը՝ 30 անգամ նախադաս, 3 անգամ հտադաս, Եզնիկը՝ 17 անգամ նախադաս, 9 անգամ հտադաս, Մ. Խորենացին՝ 117 անգամ նախադաս, 11 անգամ հտադաս, Նղիշեն՝ 17 անգամ նախադաս, 9 անգամ հտադաս, Ղ. Փարպեցին՝ 63 անգամ նախադաս, 9 անգամ հտադաս:

Հանդերձը երբեմն խնդիր է առնում նաև սեռական հոլովով: Օրինակներ. «Ըստ հաւատոցն ձերոց բժշկէ զսա Քրիստոս ծնունդ Աստուծոյ, և բարեմիտ յարիցէ նա առաջի քո. և հանդերձ արքայութեանն նորոգութեանն՝ անմահութեանն յաւերժ բարեաց ևս արժանի արասցէ զձեզ» (Բուզ., էջ 73): «Նոյնպէս և ամենայն զօրք և զօրագլուխք հանդերձ բազմակոյտ կարաւանին զկորստեանն ընկալան զվճիռ» (Թ. Ա., էջ 390):

Նոր հայկազյան բառարանում որպէս սեռական խնդրով օրինակ հիշատակված է Մ. Խորենացու «Հանդերձ առանձինն մտից և ոռճկաց» (Խոր., էջ 137) նախադասութիւնը³⁹: Պրոֆ. Աճառլանն իրավացիորեն այն սրբագրում է այսպես՝ «Հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ոռճկաց»⁴⁰: Աճառլանի տեսակետի օգտին է խոսում այն փաստը, որ Մ. Խորենացու գրքում այս նախադասութիւնը մասնակի տարբերութեամբ գործածված է երկու անգամ, ըստ որում, առաջինում ունի յաւելուածով բառը, իսկ երկրորդում՝ ոչ: Ահափասիկ այդ նախադասութիւն-

³⁹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 41:

⁴⁰ Զ. Աճառլան, Լիակատար քերականութիւն հայոց լեզվի, հ. 5, էջ 148:

ներք. «Առաքէ զնոսա բնակել ի գաւառսն... ի նոսա թողլով զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ոռճկաց կարգելոց յարքոսնուստ» (Խոր., էջ 118): «Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս... թողլով ի նոսա զմասն արքունի... հանդերձ առանձինն մտից և ոռճկաց» (ն. տ., էջ 137):

Շուրջ. այս նախադրութիւնը ևս գրաբարում հաճախակի գործածութիւն ունի: Պահանջում է զ նախդիրը կրող գործիականով խնդիր («պարառական հոլով»), որից ընդհանրապես առաջ է դրվում, և նշանակում է «շուրջ», «առարկայի շորս կողմը»: Օրինակներ. «Եւ նրստան շուրջ զբերդան ամիսք երեքտասան» (Բուզ., էջ 144): «Փուշք ի քում յարութեանն շուրջ զքն բուսանիցին» (Ագաթ., էջ 337): «Շուրջ ի ներքոյ զորոմովք խորանին պատեալ պսակէին» (Բուզ., էջ 196): «Եւ ածեալ զուղտերամական՝ մակաղեցին շուրջ զբանական և զվրանաւքն» (Սեբ., էջ 107):

Շատ սակաւ սրան հանդիպում ենք ետադաս գործածությամբ, ինչպես՝ «Ապա ի ժամանակին յայնմիկ յարոյց զգրգռութիւնս սահմանակցօքն շուրջ յամենայն կողմանս զթշնամիս նոցա» (Բուզ., էջ 40): «Եւ զցայգ պահ արկցուք զմեք շուրջ» (Ս. Գ., հ. 2, էջ 436): «Եւ զգահոյիքն շուրջ՝ որդիքն և բաղմութիւն ազգականացն...՝ ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին» (Խոր., էջ 190):

Նույն իմաստով գործածվում է նաև շուրջանակի ձևը, որը լինում է և՛ նախադաս, և՛ ետադաս: Սրան հանդիպում ենք նաև առանց զ նախդրի: Օրինակներ. «Բայց դու ածեա պատեա զնովա զամենայն մարդիկս շուրջանակի յոբելինամ, ի լսել ձեզ զձայն եղջեր փողոյ» (Ս. Գ., հ. 1, էջ 424): «Բանակեցարուք զդովա շուրջանակի» (ն. տ., հ. 3, էջ 624):

Չափ գոյականը գրաբարում հանդես է գալիս նաև նախադրության դերում: Այն դրվում է իր խնդրից հետո, արտահայտում է բաղդատական հարաբերութիւն, ցույց տալով՝

ա) գործողութիւն կատարման չափը՝ «չափ» նշանակությամբ: Օրինակ՝ «Ասացից ձեզ լու ի լու, մինչև քննիցէք զբանս թէ ձեք չափ իմանայցեմ» (Ս. Գ., հ. 3, էջ 306):

բ) գործողութիւն կատարման չափը՝ «մոտ», «մոտավորապես», «շուրջ» իմաստներով, ինչպես՝ «Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առնուին» (Եղ., էջ 23): «Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ» (ն. տ., էջ 200):

գ) գործողութիւն կատարման ձևը կամ աստիճանը: Օրինակ՝

«Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց» (Եղև., էջ 310).

դ) ժամանակ՝ «մօտ» իմաստով: Օրինակ՝ «Դարձեալ հասարակ գիշերաւ շափ՝ ձայնք ահեղք հնչէին» (Եղ., էջ 180).

ե) առարկայի հատկանիշը և իր խնդրի հետ գործածվում է որպէս որոշիչ, Օրինակներ. «Եւ արդար դատաւորօք վրէժ առնուն մահու շափ» (Եղ., էջ 38): «Եւ տայր նոցա գիր երգմամբ շափ ըստ սովորութեանն իւրեանց» (Ղեւտնդ, էջ 36).

զ) գործողութեան կատարման հիմունքը՝ «հանդերձ» նշանակութեամբ, ինչպէս «Իսկ արդ՝ զահ Տեառն գիտելով շափ, զմարդկան ինչ զմիտս հաճեմք» (Ս. Գ., հ. 4, էջ 439):

ի ստորեւ, ի ստորեաւ, ստորեաւ, ստորեւ, զստորեւ մակբայները շատ հաւաքեալ գործածվում են նաև իբրև նախադրութիւն՝ «նեքքե», «տալ» իմաստներով, ինչպէս՝ «Ընդարձակեցեր զգնացս իմ ի ստորեւ իմով» (Ս. Գ., հ. 3, էջ 26):

Գործիական խնդրով նախադրութիւններից ամենատարածվածներն են հանդերձ (այն ոչ միայն տվյալ հոլովի հետ գործածվող նախադրութիւնների համեմատութեամբ, այլ առհասարակ), շուրջ, զառաջեալ բառերը:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԶՈՒԳԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Գրաբարում մի քանի նախադրութիւններ և նախադրութեան դերում հանդես եկող բառեր պահանջում են որևէ նախդիր կրող հոլովով խընդիր: Այսպէս՝ փոխառեալ, փոխառէն նախադրութիւնները վերցնում են ընդ նախդիրը կրող սեռականով, զոյգ բառը՝ ընդ նախդիրը կրող տրականով, թող, իբր, իբրև, իբրու, որպէս, քան բառերը՝ զ նախդիրը կրող հայցականով, դէպ, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև բառերը՝ առ, ի(յ), ց նախդիրները կրող հայցականով, շուրջ, շուրջանակի բառերը՝ զ նախդիրը կրող գործիականով խնդիրներ¹:

Ինչպէս նշվեց, զ նախդիրը հիմնականում գործածվում է հայցական հոլովով խնդիր ընդունող նախադրութիւնների հետ: Քանի որ հայցական խնդրով գործածվող վերոհիշյալ նախադրութիւններն արտահայտում են բաղդատական հարաբերութիւն, ուստի դրանց խընդիրը դրվում է որոշյալ առմամբ: Օրինակներ. «Եւ ի գունդս գունդս զգա-

¹ Ինչպէս հայտնի է, այդ նախադրութիւններից և որպէս այդպիսիք հանդես եկող բառերից մի քանիսը գործածվում են նաև առանց որևէ նախդրի զուգակցութեան:

զանսն բաժանէր, և առ մի մի փիղ երեք հազար սպառազէնք, քող զայլ զօրսն ամենայն» (Նդ., էջ 115): «Ի ձեռն էառ իբրև զվաճաճ, և ագաւ զնա իբրև զգրաճաճ» (Ն. տ., էջ 91): «Որ ի սկզբանէն արար և հաստատեաց զհիմունս երկրի, և ձգեաց զերկինս որպէս զխորան» (Բուգ., էջ 68):

Հարկ է հիշել նաև այն, որ իբր, իբրև, իբրու, որպէս նախադրությունները կարող են գործածվել և մյուս հոլովների (նաև ուղղականի) հետ: Այս դեպքում նրանք սովորաբար գործածվում են առանց զ նախադրի:

Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ արտահայտում է փոխարինության հարաբերություն, ինչպես՝ «Մի՛թէ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ գուցէ ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու» (Նդ., էջ 129): «Նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց» (Բուգ., էջ 140):

Այսպիսի հարաբերություն են արտահայտում նաև սեռական խընդրով գործածվող փոխանակ և փոխաբէն նախադրությունները: Օրինակներ. «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակի՞ն՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ»: (Ագաթ., էջ 295): «Վասն որոյ յուսացեալ յողորմութիւն նորա, զոր նախատեսցեր, եթէ հատուցի քեզ փոխաբէն շարութեանդ քո» (Ղեւոնդ, էջ 107):

Հաճախ այս հարաբերությունը տվյալ նախադրություններն արտահայտում են ընդ նախդիրը կրող սեռական խնդրով, ինչպես՝ «Եւ հատուցին չար փոխանակ ընդ բարւոյ» (Ս. Գ., հ. 2, էջ 602): «Սոքա փոխաբէն ընդ հողեղէն յարկացն զոր սոցայն շինեցէք աստ՝ պատրաստեսցեն ձեզ յարկս լուսեղէնս յարքայութեանն երկնից» (Ագաթ., էջ 376):

Վերևում նշվել է, որ զոյգ ածականը, երբ գործածվում է որպէս նախադրություն, ընդունում է տրական հոլովով խնդիր և արտահայտում է համապատասխանության հարաբերություն: Օրինակ՝ «Քանզի այր սրտեայ էր և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով» (Խոր., էջ 107):

Տեղ-տեղ զոյգ բառի հետ գործածվում է ընդ նախդիրը, որը տալիս է միասնության գաղափար («հետ», «միասին»): Օրինակ՝ «Եւ ընդ մէջ կտէր զայրն և զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարին» (Խոր., էջ 231):

Մի քանի նախադրություններ և նախադրության դերում հանդես եկող բառեր գործածվում են հայցական խնդրով և որևէ նախադրով: Ըստ որում, նախդիրը հայցական հոլովին տալիս է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական)²: Դրանք են՝ դէպ||առ, ի. հուպ, մեքձ, մօտ||առ,

² Տե՛ս Ա. Աբրահամյան, Նշված ձեռնարկը, էջ. 302:

ի³. մինչ, մինչև||առ, ի, ց: Օրինակներ. «Տեսանեմք զի դէպ ի մեզ դիմեալ գան» (Փար., էջ 129): «Իսկ հուպ առ միմեանս գոլով՝ երկին իբրև զմի պատկեր» (Թ. Ա., էջ 482): «Եւ պատահէր նմա մերձ ի սանմանս Վրաց հանդէպ խաղիսաղ քաղաքի» (Նդ., էջ 75): «Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթալոյ նոցա մինչև ի լեառն» (Բուզ., էջ 62): «Մինչև ցայժմ քո զիշխանութիւնդ առանց իմ հրամանի կալեալ է» (Փար., էջ 114):

9. Նախդիրը գործածվելով գործիական հոլովի հետ՝ արտահայտում է տարածական հարաբերություն՝ «առարկայի շոքս կողմը՝ շուրջը» նշանակությամբ: Օրինակ՝ «Մթարքն՝ որ զբոբ շողայցեն» (Նզն., էջ 6):

Այս նույն հարաբերությունն արտահայտվում է նաև շուրջ նախադրության և շուրջանակի իբրև նախադրություն հանդես եկող բառի միջոցով, որոնք գործածվում են զ նախդիրն ունեցող գործիական խնդրով: Օրինակներ. «Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդամ նստելին, պահ արկանելին» (Բուզ., էջ 144): «Անդէն շուրջ զգաղաքան էին» (Ագաթ., էջ 117): «Շուրջ զգաղաքան բղխեն ակունք Սագառիս գետոյ» (Դեառնդ, էջ 157): «Բանակեցարո՛ւք զդավաւ շուրջանակի» (Ս. Գ., հ. 3, էջ 624):

Այսպիսով, բացի ըստ-ից, մյուս հինգ նախդիրները՝ առ, գ, ի(յ), ընդ, ց, գործածվում են վերոհիշյալ նախադրությունների հետ:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԵԶ

Նախադրությունները շունեն նյութական բովանդակություն, այլ արտահայտում են այդպիսին ունեցող բառերի տարբեր հարաբերությունները: Այդ պատճառով նրանք առանձին վերցրած նախադասության անդամ չեն դառնում, այլ այն բառի (իրենց խնդրի) հետ, որի վրա դրվում են, լինում են նախադասության մեկ անդամ:

«Նախադրության խնդիր» անվանմանը առաջին անգամ հանդիպում ենք Մ. Չամչանցի քերականության գրքում¹: Այնուհետև այդ անվանումն են գործածում մեր մյուս քերականները: Ա. Այտընյանը այն սահմանում է հետևյալ վերայ. «Նախադրության քովի հոլովը նախադրության խնդիր կը կոչվի»²:

³ Խիստ հազվադեպ նույն կիրառությամբ ի նախդիր փոխարեն գործածվում է ընդ-ը, օրինակ՝ «Եւ մօտ ընդ մօտս արևուն թրմբրութիւն արկանէր ի վերայ Աբրահամու» (Ս. Գ., հ. 1, էջ 29):

¹ Մ. Չամչանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, էջ 118:

² Ա. Այտընյան, Քերական քերականութիւն..., էջ 119:

Քերականական տվյալ հասկացությունն իր նախորդների համեմատությամբ ավելի հաջող է սահմանում Ա. Գարագաշյանը. «Նախադրության վերաբերյալ բառը կոչվում է նախադրության խնդիր»³:

Ինչպես գիտենք, խնդիրը նախադասության երկրորդական անդամ է, լրացում: Մինչդեռ այլ է նախադրության և նրա խնդրի հարաբերությունը: Նախադրության խնդիրն այն բառն է, որի վրա դրվում է նախադրությունը, և երկուսը միասին դառնում են նախադասության մեկ անդամ: Իսկ վերջինս կարող է լինել պարագա, խնդիր, որոշիչ, բացահայտիչ և ստորոգելիական վերադիր:

Այդ է պատճառը, որ որոշ լեզվաբաններ աշխարհաբարի համար օգտագործում են կապվող բառ անվանումը՝ կապի խնդիր անվանման փոխարեն: Այդպես են վարվում ակադ. Ա. Ղարիբյանը, պրոֆ. Ս. Աբրահամյանը և ուրիշներ⁴:

Հայտնի է, որ երկրորդական (կամ ձևական) խոսքի մասերը նախադասության անդամ չեն դառնում: Բայց նախադրությունները, ինչպես արդեն նշվել է, ի տարբերություն մյուս սպասարկու խոսքի մասերի՝ շաղկապների, եղանակավորող բառերի և ձայնարկությունների, իրենց խնդրի հետ միասին լինում են նախադասության մեկ անդամ: Ստորև կանգ կառնենք այն հարցի վրա, թե ըստ կազմության ինչպիսին պիտի դիտվի նախադասության այն անդամը, որն արտահայտվում է նախադրությամբ և նրա խնդրով: Այս դեպքում, անշուշտ, խոսքը պիտի վերաբերի նախադասության բաղադրյալ կամ վերլուծական անդամին:

Քերականագիտության մեջ շատ վաղուց ստորոգյալը ըստ կազմության բաժանվել է երկու տեսակի՝ պարզի և բաղադրյալի: Սակայն բաղադրյալ լինելը հատուկ է նաև նախադասության այլ անդամներին:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր «Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում» ծավալուն հոդվածում⁵, վերլուծականությունը ցույց տալով լեզվի մի քանի մակարդակներում, այդ թվում նաև շարահյուսականում, անդրադառնում է նաև նախադասության անդամի վերլուծական դրսևորմանը: Հոդվածում իրավացիորեն նշվում է, որ, ստորոգյալից բացի, վերլուծական անդամ կարող են լինել նույնպես և խնդիրներն ու պարագաները, որոնք կարող են արտահայտվել նաև երկու կամ ավելի բառույթի կամ բառաձևերի միջոցով: ...Նախադասության անդամի վերլուծականությունը ըստ կապակցության բնույթի և շարահյուսական հա-

3 Ա. Գարագաշյան, Դպրոցի կամ նոր քերականության հայերեն, էջ 56:

4 Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզու (դասագիրք 5—7-րդ դաս. համար), Երևան, 1961, էջ 268, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի լեզվի խոսքի մասեր, Երևան, 1959, էջ 114:

5 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 37—58:

բարեության բովանդակության՝ իբրև մեկ ամբողջություն, առտաճայտվում է տարբեր բառայթների կամ բառածների զուգակցումներով (ընդգծումը հեղինակինն է—Գ. Թ.)»⁶։ Հեղինակի տեսակետով վերլուծական անդամներ են նաև կապերի, կապական բառերի և այլ խոսքի մասերի՝ որպես կապի խնդիրների, զուգակցություններով արտահայտվող անդամները։ Օրինակ՝ Ես գնացի դեպի Բաղաբ, Նա խոսելու ժամանակ անընդհատ նայում էր մի կետի, Քարտուղարը ժողովում խոսեց քերականությունների մասին։ Այս նախադասություններում ընդգծված զուգորդությունները մեկական ամբողջական անդամներ են, այն է՝ բաղադրյալ կամ վերլուծական տեղի ու ժամանակի պարագաներ և վերաբերության անուղղակի խնդրի։ Կապի և կապի խնդրի զուգակցությունները կիրառական, շարահյուսական միություններ են և ոչ թե բառային (բառույթային), որովհետև այդ դեպքում նոր բառեր չեն առաջանում։

Վերլուծականության երևույթը գործում է նաև գրաբարի նախադրությունների կիրառական ոլորտում՝ շարահյուսական մակարդակում։ Այնտեղ նախադրությունն իր խնդրի հետ միասին լինում է նախադասության մեկ անդամ՝ վերլուծական կամ բաղադրյալ դրսևորումով։ Այն վերլուծական է, որովհետև բաղադրված է երկու կամ ավելի բաղադրիչներից՝ նախադրությունից ու գոյականից կամ որևէ այլ հոլովված բառից։ Օրինակներ. «Հիմունք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ո՛չ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս» (Եղ., էջ 103)։ «Պատմեցաւ նոցա յարքայէ վասն գաեղոյն ի Դանիէլէ» (Կոր., էջ 44)։ «Եւ այս, ասէ, մեծ է ինձ, որ խօսեցայս ընդ քեզ և մեծարանս եղի քեզ, և դու ետուր ինձ պատասխանի իբրև ընկերի» (Ագաթ., էջ 39)։ Այս օրինակներում նախադրություններն իրենց խնդիրների հետ կատարում են մեկ ամբողջական պաշտոն։ Հետևաբար, նախադասության տվյալ անդամները պետք է անվանել վերլուծական կամ բաղադրյալ պարագա, խնդրի և բացահայտիչ։

Վերևում նշվել է, որ նախադրությունները դրսևորում են զանազան իմաստներ և իմաստային նրբերանգներ։ Ստորև կանգ կառնենք այն խնդրի վրա, թե նախադրություններն ու որպես այդպիսիք առնված բառերը ի՞նչ հարաբերություններ են արտահայտում և ի՞նչ դեր են խաղում նախադասության անդամների ձևավորման գործում։

Նախադրությունների և իբրև նախադրություն հանդես եկող բառերի դերակշռող մասն արտահայտում է տարածական հարաբերություն։ Այդ խմբին պատկանող բառերը ցույց են տալիս այն տեղը, որտեղ

⁶ Նույն տեղում, էջ 54։

կատարվում է կամ որտեղից սկսվում է և կամ դեպի ուր ուղղված է գործողությունը: Իրենց խնդիրների հետ պատասխանում են ո՞ւր, ուս-
տի՞, յո՞, յո՞վ հարցերին և լինում են վերլուծական կամ բաղադրյալ
տեղի պարագա: Դրանք են՝ առաջի, զառաջեալ, յառաջեւ, արտաքին,
յանդիման, դէմ յանդիման, դէպ, զկնի, զհետ, ի հետոց, ընդ աջմէ,
ընդ առաջ, ընդ դէմ (ընդդէմ), ի թիկանց, զթիկամբք, զթիկունս, ի
կողմն, ի կողմանս, ի կողմանէ, ընդ կողմն, զկողմամբք, յայսկոյս,
յայնկոյս, ի մէջ, ի միջի, ի միջոյ, ընդ մէջ, ի միջոց, ի միջոցի, յետոյ,
յետուստ, ներքոյ, ի ներքոյ, ի ներքագոյն, ի ներքուստ, ի վերայ, վե-
րոյ, ի վերոյ, ի վերուստ, առընթեր, անդր քան, արտաքին քան, արտա-
քին քան, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև, ի ներքոյ քան, ի բացեալ,
բացագոյն, հեռի, հեռագոյն, մեկուսի, ի վեր, շուրջ, շուրջանակի, ի
ստորև և այլն: Օրինակներ⁷. «Նախարարքն արտաքին փաղափին սպա-
սէին նոցա» (Ագաթ., էջ 116): «Եւ եկն Դաւիթ ի վերուստ խրամափնցն,
և կոտորեաց անդ զայլազգիսն» (Ս. Գ., հ. 2, էջ 81): «Հալածական
տանէին մինչև ի սահման Յունաց» (Ագաթ., էջ 24):

Դրանցից մի քանիսը, բացի տարածական հարաբերությունից,
արտահայտում են նաև այլ հարաբերություններ և, բացի տեղի պա-
րագայից, դառնում են նախադասության այլ անդամներ:

Առաջի, արտաքին, ընդդէմ բառերն արտահայտում են նաև ընդ-
դիմություն իմաստ և իրենց խնդիրների հետ լինում են ընդդիմության
անուղղակի խնդիր: Օրինակ՝ «Զի ամբարձ ձեռս ընդդէմ Տեառն, և առա-
ջի Տեառն ամենակալի ընդվզեցաւ» (Ս. Գ., հ. 3, էջ 287):

Ընդդէմ-ն արտահայտում է նաև նպատակի և հանգման հարաբե-
րություններ:

Զկնի, զհետ, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև, յետոյ բառերն արտա-
հայտում են նաև գործողության կատարման ժամանակը և իրենց խնդիր-
ների հետ դառնում են ժամանակի պարագա: Օրինակներ. «Յաղագս թէ
որպէս զկնի մեռանելոյն Ներսիսի, թէ որպէս ի նախանձ մտեալ տա-
պալեաց թագաւորն Պապ զամենայն զեղեալսն կրօնսն կանոնիցն»
(Բուզ., էջ 154): «Սասանականքն որդի ի հօրէ կարգաւ առին մինչև
ցայսօր զթագաւորութիւնն» (Եզն., էջ 160): «Յետոյ ամենեցուն գնայր
և նա փախտական» (Սեբ., էջ 64):

Զհետ, զկնի նախադրություններն արտահայտում են նաև միաս-

⁷ Այստեղ և այլուր տրվում են մի քանի օրինակներ միայն, իսկ ավելի մանրամասն
տե՛ս «Նախադրությունների հոլովառությունը» գլուխը, համապատասխան բառերի
տակ:

նության հարաբերությունն և իրենց խնդիրների հետ լինում են միաս-
նության պարագա, ինչպես՝ «Ոչ կարացի ընթանալ և զենտ ընկերացն
ժամանել» (Ագաթ., էջ 108):

Ի մէջ, ընդ մէջ, ի միջի նախադրությունները ցույց են տալիս նաև
տարբեր առարկաների միջև եղած փոխադարձ կապը և իրենց խնդիր-
ների հետ դառնում են անողղակի խնդիր, ինչպես՝ «Եւ եդից թշնամու-
թիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ, և ի մէջ զաւակի քոյ և ի մէջ զաւակի դո-
րա» (Ս. Գ., հ. 1, էջ 11):

Ի վերայ նախադրությունն ունի նաև բազմաթիւ երկրորդական կի-
րառություններ: Այն արտահայտում է նպատակի, պատճառի, վերաբե-
րության, ժամանակի, հանգման, իրավական և այլ հարաբերություններ,
որոնց մասին խոսովել է վերևում:

Ժամանակային հարաբերությունն արտահայտող նախադրություն-
ներն ու որպես այդպիսիք գործածվող բառերն են՝ յետ, յառաջ քան,
յառաջագոյն քան, նախ քան, ի հետէ և այլն: Ինչպես արդեն նշվեց,
բացի տարածական հարաբերությունից, ժամանակային հարաբերու-
թյուն են արտահայտում նաև զկնի, զենտ, հուպ, մերձ, մօտ, մինչ,
մինչև, յետոյ, ի վերայ բառերը: Դրանք իրենց խնդիրների հետ պա-
տասխանում են ե՞րբ, յո՞րժամ հարցերին և լինում են ժամանակի
պարագա՝ Օրինակներ. «Ամենայն ծննդոց յետ ծննդեանն ղնին
անուանք» (Եզն., էջ 123): «Յեսուն... նախ քան զխաչելութիւնն իւր
զբազումս յափշտակեաց» (Ն. տ., էջ 266): «Եւ ընդ ձեզ եմ զամենայն
աւուրս կենաց ձերոց՝ մինչ ի վախճան աշխարհի» (Ագաթ., էջ 342):

Նպատակային հարաբերությունն արտահայտող նախադրություններն
ու իբրև նախադրություն գործածվող բառերն են՝ ի համար, ի պէտս,
սակս, ի սակս, վասն, ի յիշատակ, ի փառս, ի պատիւ, յօգուտ և այլն:
Նպատակի հարաբերության իմաստ ունեն նաև աղագաւ, յաղագս, ի
վերայ և այլ բառեր: Դրանք իրենց խնդիրների հետ պատասխանում են
է՞ր աղագաւ, յո՞ր սակս հարցերին և դառնում են նպատակի պարագա-
Օրինակներ. «Եւ միայն զառաջին որդին իւր, որ փոշէր Արշակ, պահէ
առ իւր ի համար թագաւորութեան» (Խոր., էջ 118): «Լերինք արծաթոյ
յայտենցան յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս արծա-
թոյ զտոյ ի պէտս մարդկան յաւուր իշխանութեան նորա» (Ղեւոնդ, էջ
155): «Զի մատուցես պատարագս Տեառն Աստուծոյ բարձրելոյ՝ վասն
թագաւորին և զօրաց նորա, և արասցես աղօթս վասն կենաց թագաւո-

8 Այս և մյուս բոլոր նման դեպքերում նկատի ունենք, որ նախադրությունն իր խնդրի
հետ միասին լինում է նախադասության վերլուծական կամ բաղադրյալ անդամ:

րին» (Ս. Գ., հ. 2, էջ 397): «Եւ արար դրուագս սեղանոյն ի յիշատակ որդւոցն Իսրայելի» (Ն. տ., հ. 1, էջ 294): «Դու որ օրինօք սնեալ ես և կեաս ի փառս կրակաց» (Փար., էջ 96): «Յայնժամ աւելի ևս հաստատեցին զԿոստանդին ի պատիւ քագաւորութեան ըստ առաջին բանին» (Սեբ., էջ 92): «Ըստ առաքինութեան իւրոյ՝ իբրև զարս յաղագս Աստուծոյ վիրաւորեալս՝ ամփոփել զոսկերս մեր յօգուտ հոգւոյ իւրոյ տենչացեալ» (Փար., էջ 141):

Աղագաւ, յաղագս, յերեսաց, պատնառաւ, ի պատնառս և այլ նախադրութիւններ ու իբրև նախադրութիւն առնված բառեր արտահայտում են պատնառական հարաբերութիւն: Բացի դրանցից, գործողութիւն կամ եղելութիւն կատարման պատճառն են ցույց տալիս նաև ի պէտս, սակս, ի սակս, վասն և այլ բառեր: Դրանք իրենց խնդիրներին հետ պատասխանում են է՞ր, ընդէ՞ր, է՞ր սակս և այլ հարցերի ու դառնում են պատճառի պարագա: Օրինակներ. «Չարին աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ» (Խոր., էջ 15): «Տնխեցան և փոեցան վերք իմ, յերեսաց անզգամութեան իմոյ» (Ս. Գ., հ. 3, էջ 44): «Արդ ի պատնառս ձեռ և զմեղ անողորմ դատին» (Եղ., էջ 56): «Եւ թշնամի կոչի՝ վասն զորոմնն ի մէջ ցորենոյն սերմանելոյ» (Եզն., էջ 184): «Քանզի անմարմինք են հրեշտակք և դեւք, յայն սակս և ծնունդք ոչ գոն նոցա» (Ն. տ., էջ 97):

Յաղագս, սակս, ի սակս, վասն նախադրութիւններն արտահայտում են նաև վերաբերութիւն հարաբերութիւն և իրենց խնդիրներին հետ լինում են վերաբերութիւն անուղղակի խնդիր: Օրինակներ. «Զոր ինչ խորհեալն էր յաղագս նախաբառացն Հայոց եկելոցն առ նա» (Թ., Ա., էջ 355): «Պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի» (Կոր., էջ 42):

Յերեսաց որպես նախադրութիւն գործածվող բառն իր խնդրի հետ դառնում է նաև ներգործող և անշատման անուղղակի խնդիրներ: Օրինակներ. «Սպառին... որպէս մոմ յերեսաց հոռոյ, եթէ թագաւոր իցէ և եթէ իշխան» (Ա. Լ., էջ 136): «Թէ փախիցէ մարդ յերեսաց առիւծու, և պատահիցէ նմա արջ» (Ս. Գ., հ. 3, էջ 454):

Գռնակ, պէս, պէս գռնակ, գոյգ, լու ի լու, համածայն, հանգոյն, համեմատ, հաւասար, միաբան, նման, իբր, իբրև, իբրու, որպէս, գաղտ, զօրէն, զօրինակ, օրինակ և այլ նախադրութիւններ ու իբրև այդպիսիք հանդես եկող բառեր արտահայտում են գործողութիւն կամ եղելութիւն կատարման ձեռ, իրենց խնդիրներին հետ պատասխանում են ո՞րպէս,

«ԲՐԳՈՆ, զիս՝ ԲՐԳ Հարցերին և հիմնականում լինում են ձևի պարագա-
Օրինակներ. «Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թիւնաւոր, մերթ պար-
զէր գոշէր իբրև զառիս զալարացեալ» (Եղ., էջ 16): «Եւ եկն առեւծն
առ սուրբն Շաղիտայն ի լեառն... և զօրէն մարդոյ ի վեր առեալ զթա-
թուլն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացէր նմա բժշկել զինքն» (Բուդ.,
էջ 185):

Իբրև, որպէս նախադրութիւններն արտահայտում են նաև բաղդա-
տական հարաբերութիւն և իրենց խնդիրներին հետ գործածվում են իբրև
մասնական բացահայտիչ, ինչպես՝ «Որում և հասեալ ժամանեալ հայ-
րաբարուն Գտայ, որդւոյ Շաղաթայ առն քրիստոսասիրի, բազում
սպասաւորութիւն իբրև հաւասարի ուղղոյ վարդապետին տանէր» (Կոր.,
էջ 60):

Դրանցից մի քանիսը իրենց խնդիրներին հետ լինում են նաև որո-
շիչ (տե՛ս ստորև):

Բացառման, բացառման հարաբերութիւն են արտահայտում առանց,
բաց, բայց, մերկ, որիշ, ուրոյն և այլ նախադրութիւններ ու իբրև այդ-
պիսիք գործածվող բառեր, որոնք իրենց խնդիրներին հետ լինում են բա-
ցառման խնդիր: Առանց-ը դառնում է նաև ձևի պարագա (օրինակները
տե՛ս վերևում):

Բացառման իմաստ ունեն նաև տեղ-տեղ որպես նախադրութիւն
գործածվող քանց, քարց, քաւ, քաւ միայն բառերը: Օրինակներ. «Արդ
են քանց սորա առաւօտին ասացեալ սաղմոսքն թուով վեց» (Յովհ. Իմ.,
էջ 20): «Եւ քանց բնութեան զմերն ընկալաւ ի կնոջէ» (Ն. տ., էջ 51):
«Եւ յարեւին նմա այնք, որք եւ բային քարց դիմաց եւ ներխոնաւհու-
թեանց» (Ն. Առոնց, Դիոնիսիոս Թրակացին եւ..., էջ 26): «Որք յաւէտ
կամ նուազ նմին նման գոն և հուպ ժամանակաւ. որպէս Ազաթանդե-
ղոս, Յաճախապատումն Լուսաւորչին, Բիւզանդ՝ քաւ յանոճ կակազելոյն,
Եզնիկ» (Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն..., էջ 630): «Ձեռնս
մարթ է ասել... ի գիրս Եփրեմի. քաւ միայն ի հեղինական գեղեցկու-
թենէն և հարտարութենէն» (Ն. տ., էջ 632):

Տարբերակման, առանձնացման, սահմանափակման հարաբերու-
թիւն արտահայտող բառերն են՝ ընդհատ, զատ, օտար և այլն: Դրանք
իրենց խնդիրներին հետ հիմնականում դառնում են ձևի պարագա, ինչ-
պես՝ «Հրաման տայր... զատ ի միմեանց փութալ հասանել ի գեօղն
Վարազկերտ» (Փար., էջ 123): «Յաղագս թէ ինչ որ օտար ի Մովսիսէ
պատմեն այլքն հնախօսք» (Խոր., էջ 22):

Ընդդիմութեան հարաբերութիւն են արտահայտում նախադրու-
թեան դերում հանդես եկող հակառակ, հեռուկա բառերը: Ինչպես արդեն
նշվել է, ընդդիմութեան իմաստ ունեն նաև առաջի, արտաքին, ընդդէմ

բառերը: Դրանք իրենց խնդիրների հետ սովորաբար լինում են ընդդիմության անուղղակի խնդիր: Օրինակներ. «Զի թէ Աստուած ի մեր կոյս լինիցի, ո՞վ կարիցէ կալ մեզ հակառակ» (Ա. Լ., էջ 100): «Եւ որչափ ի ձեռս իւրեանց էր՝ արտաֆոյ արքունի հրամանին դիւրութիւն առնէին նոցա» (Յդ., էջ 196): «Եւ յետ այսորիկ սկսաւ գոռալ ընդդէմ քաղաւորին Յունաց» (Ղեւոնդ, էջ 103):

Ընդդիմության նախադրութիւններն ու իբրեւ այդպիսիք առնված բառերը ցույց են տալիս նաեւ գործողության կատարման ձեւը, ինչպես՝ «Արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր սնուցանես զՄարըդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ քաղաւորութեանս» (Նոր., էջ 163):

Միջոցի հարաբերությունն արտահայտող նախադրութիւններն ու իբրեւ այդպիսիք հանդես եկող բառերն են՝ ի ձեռն, ընդ ձեռն, ընդ ձեռամբ, ի ձեռս, ի ձեռանէ, ի ձեռաց, ի դէմս, շնորհիւ և այլն: Դրանք ցույց են տալիս այն առարկան, որի միջոցով կամ օգնությամբ կատարվում է գործողությունը և իրենց խնդիրների հետ պատասխանում են որո՞վ, որո՞վք, ի՞նչ, ո՞ր օգնականութեամբ հարցերին ու դառնում են միջոցի անուղղակի խնդիր: Օրինակներ. «Ի ձեռն առն միոջ եցոյց զըսքանչիւս» (Ագաթ., էջ 11): «Եւ զանձս բազումս և անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս վարդաւայ... առաքէր» (Բուլ., էջ 88): «Պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն» (Ագաթ., էջ 72):

Ձեռն գոյականից առաջացած նախադրութիւնների և նրանց խնդրի միջոցով զրաբարում արտահայտվում էր՝ ներգործող խնդիրը, ինչպես՝ «Զի ոչ միայն ի ձեռն արանց, այլ և ի ձեռն կանանց սրբոց քարոզեցաւ Աւետարանն կենդանութեան ընդ տիեզերս ամենայն (Ագաթ., էջ 354):

Ի ձեռանէ, ի ձեռաց նախադրության դերում հանդես եկող բառերն արտահայտում են անջատման հարաբերություն և իրենց խնդիրների հետ լինում են անջատման անուղղակի խնդիր: Օրինակներ. «Եւ մի՛ ապրեցցի ի ձեռանէ Երկաթոյ» (Մ. Գ., հ. 3, էջ 293): «Ասէ՛ Աստուած Հօր իմոյ օգնական իմ, և ապրեցայց զիս ի ձեռաց փառաւորի» (Ն. տ., հ. 1, էջ 142):

Փոխարինությամբ, փոխարինման հարաբերությունն են արտահայտում փոխանակ, փոխարէն, ի տեղի նախադրութիւնները: Դրանք իրենց խնդիրների հետ կատարում են նախադասության այն անդամի դերը, որի փոխարեն գործածվում են: Օրինակներ. «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտաբակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ» (Ագաթ., էջ 395): «Ի նմին ատուր զորդի նորին զՇապուհ, զոր ի տեղի Արշակունայն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անդրէն ի դրանն մարդ-

կանէ դաւով յարքունիքն սատակեցին» (Փար., էջ 19): Առաջին օրինակով նախադրութիւնն իր խնդրի հետ տրամաբանական ենթակա է, իսկ երկրորդում՝ ուղիղ խնդիր:

Միասնութեան հարաբերութիւնն են արտահայտում հաւելեռն նախադրութիւնն ու որպէս նախադրութիւն գործածվող կից ածականը: Միասնութեան իմաստ ունեն նաև զնեա, զկնի, յեա, յետս բառերը: Դրանք իրենց խնդիրների հետ դառնում են միասնութեան պարագայ: Օրինակներ: «Եւ այնպէս յիւր վանան եկեալ, իսկոյն ի ձի ելեալ՝ հաւելեռն հաւելին ի Սպեր զնաց» (Խոր., էջ 196): «Աղաղակեցին և երկոթին ծերքն կից նմին» (Ս. Գ., Հ. 3, էջ 658):

Քան, առաւել քան, աւելի քան նախադրութիւններն արտահայտում են բաղդատական հարաբերութիւն: Դրանք ցույց են տալիս իրենց խնդրի արտահայտած իմաստին հավասար կամ նրանից ավելի և կամ պակաս հատկանիշ ու նրա հետ դառնում են, այսպէս կոչված, համեմատութեան անուղղակի խնդիր: Օրինակ՝ «Մեծ և բարձր է պատիւ կաթողիկէ եկեղեցւոյ քան զամենայն բարձրութիւնս սրբոցն» (Ագաթ., էջ 389):

Դրանք ցույց են տալիս նաև գործողութեան կամ եղելութեան կատարման չափ ու քանակը, իրենց խնդիրների հետ պատասխանում են ո՞րչափ, ո՞րքան հարցերին և դառնում են չափ ու քանակի պարագայ: Այդպիսի կիրառութիւնն ունի նաև որպէս նախադրութիւն գործածվող չափ գոյականը: Օրինակներ. «Եւ մեծացուցանէր ղթագաւորն աւելի քան զարեգակն» (Եղ., էջ 163): «Ասացից ձեզ լու ի լու, մինչև քննիցէք զբանս թէ ձեւ չափ իմանայցեմ» (Ս. Գ., Հ. 3, էջ 306):

Երբեմն դրանք ցույց են տալիս իրենց խնդրի հատկանիշը՝ չափը, քանակը, որպիսութիւնը և այլն: Այս դեպքում իրենց խնդիրների հետ պատասխանում են ո՞րքան, զինչպիսի՞ հարցերին և գործածվում են իբրև որոշիչ: Օրինակներ. «Աւելի քան զեւթն հաւիւր վարդապետս յէրընդ նոսա» (Եղ., էջ 51): «Աւելի քան զբաւն առեւծ հանապաղ շրջէին ընդ նմա հանապաղօրդեալք» (Բուզ., էջ 185): «Եւ տայր նոցա զիր երդմամբ չափ ըստ սովորութեանն իւրեանց» (Ղեւոնդ, էջ 36):

Իրենց խնդիրների հետ որոշիչ կարող են դառնալ նաև համեմատ, նման, պէս և այլ նախադրութիւններ ու իբրև այդպիսիք գործածվող բառեր, պատասխանելով զինչպիսի՞ հարցին: Օրինակ՝ «Եկայք արասցուք Ագամայ օգնական նման նմա» (Ագաթ., էջ 144):

Որոշ նախադրութիւններ երբեմն իրենց խնդիրների հետ գործածվում են իբրև ստորոգելիական վերագիր: Օրինակներ. «Որ բարկանայ եղբօրն, և չէ վասն Աստուծոյ, հրեշտակ անողորմ հանդիպի նմա» (Եղն.,

էջ 309): «Ապա ուրեմն լեզուք նշանակի վասն են» (Ս. Գ., հ. 4, էջ 425): «Զի տէրունի հրամանքն՝ ամենեցուն գեր ի վերոյ են» (Ագաթ., էջ 212): «Եղէ ես որպէս զխալ՝ որ ոչ լսէ, և իբրև զհամր՝ զի ոչ բանայ զբերան իւր» (Ն. տ., էջ 47): «Ահա Ադամ եղև իբրև զմի ի մէնջ՝ ճանաչել զբարի և զկար» (Ն. տ., էջ 148):

Այսպիսով, նախադրութիւններն ու որպէս նախադրութիւն գործածվող բառերը գրաբարում մեծ մասամբ լինում են բայական անդամի լրացումներ, ամենից շատ՝ պարագաներ (տեղի, ժամանակի, ձևի, նըպատակի, պատճառի, միասնութիւն, զիջման, չափ ու քանակի և այլն), այնուհետև՝ խնդիրներ (միջոցի, վերաբերութիւն, ընդդիմութիւն, բացառման, ներդրոժող, անջատման, հպնդման, համեմատութիւն և այլն):

Մի քանի նախադրութիւններ իրենց խնդիրների հետ, բացի բայական անդամի լրացումներ դառնալուց, երբեմն լինում են նաև գոյականական անդամի լրացումներ (որոշիչ, մասնական բացահայտիչ) և ստորոգելիական վերադիր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հին հայերենը կամ գրաբարը հիմնականում բաժանվում է երկու ենթաշրջանների՝ դասական կամ մեսրոպյան (մինչև 460-ական թթ.) և ետդասական: Գրաբարից մեզ են հասել ինքնուրույն և թարգմանական բաղմամբիվ գործեր: Դասական շրջանի, հատկապէս ինքնուրույն (Սեդիկ Կողբացու, Կորյունի, Ագաթանգեղոսի և Փաւստոս Բուզանդի) ստեղծագործութիւններ լեզուն տարբերվում է ետդասական շրջանի մատենագրութիւն լեզվից: Դասական շրջանում, ինչպես նշում են մեր խոշոր հայագետները, գրական և խոսակցական լեզուները հիմնականում համընկնում էին¹: Այդ պատճառով էլ այս շրջանի գրական լեզվի առանձնահատկութիւններն ուսումնասիրութիւնը շատ կարևոր է խոսակցական լեզվի օրինաչափութիւնները հասկանալու համար: Ետդասական շրջանում մասամբ լեզվի ներքին զարգացման, մասամբ էլ այլ լեզուներից կատարված փոխառութիւնների ու նորամուծութիւնների հետևանքով աստիճանաբար մեծանում են գրական և խոսակցական լեզուների տարբերութիւնները:

Ինչպես պարզվեց մեր ուսումնասիրութիւնից, գրաբարի ամբողջ պատմութիւն ընթացքում մեծ փոփոխութիւններ են կատարվել նաև նա-

¹ Տե՛ս Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, մաս 2, Երևան, էջ 101: Գ. Բ. Զաքուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 35:

խաղրութիւնների և որպէս նախադրութիւն գործածվող բառերի համա-
կարգում:

Գրաբար մատենագրութիւնը լայն հնարավորութիւններ է ըն-
ձեռում նախադրութիւնների ուսումնասիրութեան համար, որովհետեւ
մեր մատենագիրներն իրենց երկերում առատորեն են օգտագործել նա-
խադրութիւններն ու որպէս այդպիսիք հանդես եկող բառերը:

Գրաբարի նախադրութիւնների և իբրեւ նախադրութիւն գործածվող
բառերի ուսումնասիրութիւնից կարելի է եղրակացնել, որ տվյալ սպա-
սարկու բառերը մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում իրենց առա-
ջացման ու կաղմավորման, քերականական-ձևաբանական և շարա-
հյուսական-կիրառական տեսակետներից:

Դրանք իրենց ծագմամբ հիմնականում քարացած հոլովաձևեր են
կամ այլ կառույցներ, ինչպէս, օրինակ, ի մէջ, ընդ մէջ, ի միջոյ, ի մի-
ջի, ի վերայ, ի վերոյ, ի ներքոյ, առաջի, առաջոյ, զառաջեալ, յետ,
յետոյ, զհետ, ի համար, պատճառաւ, ի պատճառս և այլն, որոնց կաղ-
մավորման գործում ակտիվ դեր են խաղացել նախդիրները: Լեզվի զար-
գացման ընթացքում բառահարաբերական տվյալ ձևույթների թիւը ան-
ընդհատ աճել է ի հաշիվ հիմնական ձևույթների:

Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ լեզվի զարգացման
ընթացքում աստիճանաբար նախդիրներն իրենց տեղը զիջել են նախա-
դրութիւններին: Այսպէս, օրինակ, ի սմա, ընդ արեգակամբ, զեռվալ
(ծիծաղել), ի նմուզի նախդրավոր կապակցութիւններին համապատաս-
խանաբար փոխարինել են՝ ի մէջ սորա, ի ներքոյ արեգական, ի վերայ
նորա, ի վերայ նմուզի նախադրավոր կառույցները: Այնուհետեւ, պարա-
րի որոշ նախադրութիւններ, ինչպէս՝ ի համար, ի մէջ, ի ներքոյ, ի
վերայ, ի տեղի և այլն, աշխարհաբարում վերածվել են հտադրութիւն-
ների՝ ընդունելով համար, մեջ, ներքո, վրա, տեղ ձևերը: Խոսքիմա-
սային փոխանցման հետեանքով լեզվի զարգացման որոշակի աստիճա-
նում լինում են այնպիսի բառեր, որոնք դեռևս չեն կորցրել իրենց բա-
ռական ու իմաստաբանական նշանակութիւնը և չեն խզել կապը «մայր»
խոսքի մասի հետ: Այդպիսի բառերը տվյալ շրջանում գործածվում են
և՛ որպէս հիմնական խոսքի մասերին պատկանող բառեր, և՛ որպէս
սպասարկու բառեր: Խոսքիմասային փոխանցման այս իրողութիւնը
ընդհանուր երևույթ է, այսինքն՝ այն հատուկ է նաև ուրիշ լեզուե-
րի:

Մագումով հին և բուն նախադրութիւնները, ինչպէս՝ վասն, ի վե-
րայ, աղագաւ, յաղագս, առանց, առաջի, արտաքոյ, զկնի, զհետ, ի
ձեռն, ի մէջ, յետ, ի ներքոյ, փոխանակ, ընդդէմ, ի միջի, հանգոյն,
իբրեւ, քան, մինչև, որպէս, բաց, բայց, հետև, հանդերձ, շուրջ և այլն,
ունեն ավելի շատ և բաղմապիսի կիրառութիւններ:

Տվյալ սպասարկու բառերի հիմնական առանձնահատկություններին մեկն էլ այն է, որ նրանք գրեթե բոլորն էլ արտահայտում են պարագայական հարաբերություններ՝ պարզ թե բարդ:

Միայն որոշ թվով նախադրություններ ու որպես այդպիսիք գործածվող բառեր արտահայտում են նաև խնդրային (մի քանիսը՝ միայն խնդրային) հարաբերություններ:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԾՎՈՂ
ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Աղաքալ	Ձոյգ	Ի միջոյ
Անդր քան	Ջստորե	Ի միջոց
Առանց	Ջօրէն	Ի միջոցի
Առաջի	Ջօրէնս	Ի յիշատակ
Առաջի քան	Ջօրինակ	Ի ներքոյ
Առաջոյ քան	Ընդ աջմէ	Ի ներքոյ քան
Առանկ քան	Ընդ առաջ	Ի ներքոստ
Առ ընթեր (առնթեր)	Ընդ դէմ (ընդդէմ)	Ի ներքս
Արտաքոյ	Ընդդիմակ	Ի ներքսագոյն
Արտաքոյ քան	Ընդ կողմն	Ի պատիւ
Արտաքս քան	Ընդհատ	Ի պատճառ
Անկի քան	Ընդ ձեռամբ	Ի պատճառս
Բայց	Ընդ ձեռն	Ի պէտս
Բայց միայն	Ընդ մէջ	Ի սակս
Բաց	Թող	Ի ստորեալ
Բացագոյն	Ի բացագոյն	Ի ստորե
Գաղտ	Ի բացեայ	Ի վեր
Գեր	Իբր	Ի վերայ
Գեր ի վերոյ	Իբրև	Ի վերոյ
Գեր ի վերոյ քան	Իբրու	Ի վերոյ քան
Գունակ	Ի դէմս	Ի տեղի
Դէմ	Ի դիմաց	Ի տեղւոջ
Դէմ ընդդէմ	Ի թիկանց	Ի փառս
Դէմ յանդիման	Ի թիկունս	Լոկ
Դէպ	Ի կողմանէ	Լու ի լու
Դէպ ի	Ի կողմանս	Կից
Եւ անդր	Ի կողմն	Հակառակ
Ջանխուլ	Ի համար	Համաձայն
Ջառաջեալ	Ի հետոց	Համեմատ
Ջառաջեւ	Ի ձեռանէ	Հանգիտակ
Ջատ	Ի ձեռաց	Հանգոյն
Ջթիկամբբ (զթիկամբբն)	Ի ձեռն	Հանգոյնս
Ջկնի	Ի ձեռս	
Ջկողմամբբ	Ի մէջ	
Ջհետ	Ի միջի	

Հանդերձ	Յայտկոյս	Որպէս
Հանդէպ (ի հանդէպ)	Յանդիման	Ուրոյն
Հաւասար	Յանուն	Զակի
Հիճուկս	Յաջմէ	Պատճառանօք
Հեռագոյն	Յառաջ քան	Պատճառաւ
Հեռի	Յառաջագոյն քան	Պէս
Հետ	Յետ	Պէս գունակ
Հետէ (ի հետէ)	Յետոյ	Սակս
Հետի	Յետուստ	Ստորեաւ
Հոպ	Յետս	Ստորեւ
Մասամբ	Յերեսաց	Վասն
Մեկուտի	Յերեսս	Վերոյ
Մերկ	Յօգուտ	Փոխանակ
Մերձ	Նախ քան	Փոխարէն
Միաբան	Ներքոյ	Քան
Մինչ	Նման	Քաւ
Մինչև	Շնորհիւ	Քաւ միայն
Մօտ	Շուրջ	Օտար
Յաղագս	Շուրջանակի	Օրէն
Յայնկույս	Որիչ	Օրինակ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղաթ.—Աղաթանդեղոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տիփլիս, 1909:

Ա. ի.—Պատմութիւն Արիւտակիսի Կաստիվերոցոյ, աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963: Բուդ.—Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եղն.—Եղնկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ.—Եղիշիի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ լաղղատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957:

Բ. Ա.—Բովմայի վարդապետի Արժրունոյ Պատմութիւն տանն Արժրունեաց, Թիփլիս, 1917:

Խոր.—Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տիփլիս, 1913:

Կոր.—Կորին, Վարդ Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական և այլ ընթերցվածքներով, թարգմանութեամբ, առաջարկով և ծանոթագրութեաներով ի ձեռն պրոֆ.—դոկտոր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:

Ղեւոնդ.—Պատմութիւն Հայոց Ղեւոնդեայ Մեծի վարդապետի, Ս. Պետերբուրգ, 1887:

ՄՈ—Դրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Պուէնոս-Այրէս, 1948:

Յովհ.—Իմ.—Յովհաննու Իմաստասիրի Աւանցոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1833:

Ս. Գ.—Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, բաժանեալ ի շորս հատորս, Վենետիկ, 1805:

Սեբ.—Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, աշխ. Ստ. Մալխասեանցի, Երևան, 1939:

Փար.—Ղաղարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիփլիս, 1904:

Օգտագործված են նաև Եղնիկի, Կորունի, Աղաթանդոսի երկերի համարաբառներն ու Եղիշիի, Ղ. Փարպեցու և Մ. Խորենացու երկերի բառացանկերը: